ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա-Դո
(Հովհաննես Տեր-Մարտիրոսյան)

ՌՈՒՍԱԿԱՆ ՑԱՐԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԵՐԵՎԱՆ 2013

973175.

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ ИСТОРИИ

А-До
(Ованнес Тер-Мартиросян)

РУССКИЕ ЦАРИ И АРМЯНСКИЙ ВОПРОС

А 98927

ЕРЕВАН
ИНСТИТУТ ИСТОРИИ
2013

Դ 21,340

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա-Դո
(Հովհաննես Տեր-Մարտիրոսյան)

ՌՈՒՍԱԿԱՆ ՑԱՐԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
90

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
90

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2013

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ա 200

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Ա-Դո
Ա 200 Ռուսական ցարերը և հայկական հարցը / Ա-Դո; Առաջաբանը և ծանոթագրությունները՝ պ.գ.թ. Ռուբեն Գասպարյանի և պ.գ.թ. Ռուբեն Սահակյանի. - Եր.:
ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2013 – 161էջ:

Ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում պատմաբան, տնտեսագետ-վիճակագիր Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան, 1867–1954 թթ.) անտիպ աշխատությունը: Հեղինակը XIX դարի 80–90-ական թվականների և XX դարի առաջին տասնամյակի հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչներից մեկն է, որի ուսումնասիրություններն ու հետազոտությունները վերաբերվում են հայ ազատագրական շարժումներին, 1903 թ. հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավմանը, 1905–1906 թթ. հայ-թաթարական ընդհարումներին, Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությանը, վարչական կառուցվածքին, բնակավայրերի և բնակչության վիճակագրությանը, 1915 թ. Վանի ինքնապաշտպանությանը և այլն:

Գիրքը նախատեսված է պատմաբանների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 941 (479.25)
ISBN 978-99941-73-77-8 ԳՄԴ 63.3 (2Հ)

©Պատմության ինստիտուտ, 2013

ԱՌԱՋԱԲԱՆ

1952 թ. փետրվարի 18-ին Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն, նշանավոր հայագետ, հնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանին է դիմում պատմաբան, տնտեսագետ-վիճակագիր Հովհաննես Տեր-Մարտիրոսյանը (Ա-Դո, 1867 թ. հունվարի 4 – 1954 թ. փետրվարի 7): Նա խնդրում է 1949 թ. մարտի 30-ին և 1951 թ. հունվարի 5-ին թանգարանին հանձնած իր աշխատությունների ավելացնել նորը՝ «Ռուսական ցարերը և Հայկական հարցը» աշխատության ձեռագիրը և մեքենագիր մեկ օրինակը[1]:

Ա-Դոն հայ հասարակության համար անծանոթ դեմք չէր: Նրա ուսումնասիրությունները վերաբերվում են հայ ազատագրական շարժումներին, Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությանը, վարչական կառուցվածքին, բնակավայրերի և բնակչության վիճակագրությանը[2]: Սակայն խորհրդային տարիներին ժամանակի նշանավոր մտավորականի գործունեությունը հիմնականում մնացել է ստվերում: Նրա աշխատությունները մինչև 1980-ական թվականների կեսերը մնում են փակված գրադարանների հատուկ ընթերցասրահներում: Գրքերը հայտնի էին միայն սահմանափակ թվով գիտնականների:

Ա-Դոն ապրել է բուռն մի ժամանակաշրջանում, երբ տեղի են ունեցել կարևոր իրադարձություններ, ինչպես օրինակ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության առարկա լինելը, 1890-ական թվականներին արևմտահայության զանգվածային կոտորածները, 1903 թ. հայ առաքելական եկեղեցու կալվածքների բռնագրավումը, 1905–1906 թթ. հայ-թաթարական

---

[1] Տեր-Մարտիրոսյանների ընտանեկան արխիվ:

[2] Ա-Դո, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, Երեւան, 1907, նույնի՝ Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները, Երեւան, 1912, նույնի՝ Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին, Երեւան, 1917:

ընդհարումները, Հայկական հարցի վերաբացումը, Առաջին համաշխարհային պատերազմը, Հայաստանի Հանրապետության հռչակումը և այլն: Լինելով ժամանակի հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչներից մեկը, Ա-Դոն չէր կարող անտարբեր անցնել նման իրադարձություններից: Նա, որպես հետազոտող և գիտնական փորձել է անձամբ ուսումնասիրել այս կամ այն հիմնախնդիրը: Եղել է Արևմտյան Հայաստանում, ուսումնասիրել և արձանագրել է արևմտահայության դրությունը, որպես դեպքերի ականատես նկարագրել է Կովկասի փոխարքայությունում ցարիզմի սադրանքով հրահրված ազգամիջյան կռիվները: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գործուն մասնակցություն է ունեցել արևմտահայ և պարսկահայ, ինչպես նաև ասորի գաղթականների վիճակագրության կազմման աշխատանքներին:

Ինչպես ինքն է գրում իր «Իմ հիշողությունները» անտիպ գործում. «Ես մի քանի անգամ որոշել եմ գրի առնել հիշողություններս և նույնիսկ երկու անգամ սկսել եմ այդ, բայց միշտ էլ որոշումս մնացել է անկատար, իսկ սկսածս ընդհատվել է առանց որևէ հետևանքի»[1]: Այնուամենայնիվ նա որոշում է ձեռնամուխ լինել հիշողությունների շարադրմանը, քանի որ իր կյանքի տարիներին տեղի են ունեցել խոշոր և պատմական իրադարձություններ, հանդիպել է տարբեր նշանավոր անձնավորությունների հետ, ականատես եղել տարաբնույթ դեպքերի:

Ա-Դոն ծնվել է Նոր-Բայազետում (այժմ՝ ք. Գավառ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ): Հայրը՝ Գրիգորը զբաղվել է առևտրով և անասնապահությամբ, սակայն հիվանդությունը հնարավորություն չի տվել ապահովել բազմանդամ ընտանիքի՝ հինգ տղա և երեք աղջիկ, նվազագույն կարիքները: Ա-Դոն սկզբնական կրթությունը ստանում է ծննդավայրում, որտեղ սովորում է մի քանի տարի: Հայրը ցանկանում էր Ա-Դոյին և կրտսեր եղբորն

[1] Ա-Դո, Իմ հիշողությունները (այսուհետև՝ Իմ հիշողությունները), Տեր-Մարտիրոսյանների ընտանեկան արխիվ, թ. 1: Մեքենագիր:

ուղարկել Երևան՝ կրթությունը շարունակելու, սակայն 1880 թ. հայրը մահանում է, և բազմանդամ ընտանիքը մնում է առանց կերակրողի: 1881 թ. սեպտեմբերի 4-ին Ա-Դոն տեղափոխվում է Երևան՝ ավագ եղբոր՝ Սիրեկանի մոտ, աշխատելու նրա խանութում, իսկ 1882 թ. սեպտեմբերին Նոր Բայազետից Երևան տեղափոխվեցին մայրը, քույրերն ու եղբայրները:

Ա-Դոյի անտիպ հուշերում պահպանվել են 1880-ականների Երևանի հետևյալ նկարագրությունը. «Բուսականությունից զուրկ, ինչպես ասում են չոր ու ցամաք և աղքատիկ Բայազետից հետո այգիներով շրջապատված և բուսազարդ Երևանը և այն էլ սեպտեմբեր ամսին, երբ այդ քաղաքը ներկայացնում էր պտուղների առատության մի ծով, ինձ վրա թողեց հմայիչ տպավորություն»[1]:

Իր ազատ ժամանակը պատանին նվիրում է ընթերցանության: Նրան գրավում է ժամանակի հայ մամուլում, գլխավորապես «Մշակ»-ում տպագրվող հոդվածները: Երիտասարդը գիտելիքները լրացնում է բժիշկ Լևոն Տիգրանյանի գրադարանից, Մոսկվայի ու Ս. Պետերբուրգի և այլ քաղաքների ուսումնական զանազան հաստատություններում, Գևորգյան ճեմարանում սովորող, ամռանը Երևան արձակուրդի եկած ուսանողների հետ ունեցած զրույցներից և նրանց տրամադրած գրքերից: Հատկապես լայն տարածում է գտնում Միքայել Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» խմորատիպ գրքի ընթերցումը և համատեղ քննարկումը երիտասարդների շրջանում: Նրանք նույնիսկ սկսում են հրատարակել ձեռագիր «Բանվոր» թերթը[2]:

Ա-Դոյին գրավում է «Մշակ»-ում տպագրվող Ռաֆֆու ստեղծագործությունները՝ «Դավիթ Բեկ», «Խամսայի մելիքությունները» և այլն: Նա մեծագույն հաճույքով կխորանար պատմագիտական գրականության մեջ, սակայն կարիքը հարկադրում է

---

[1] Իմ հիշողությունները, թ. 11–12:
[2] Նույն տեղում, թ. 29:

1885 թ. ծառայության անցնել Աֆրիկյանների առևտրական տուն, որը տնօրինում էր Երևանի նահանգում կատարվող գրեթե ողջ տեքստիլ արտադրանքի առևտուրը: 1888 թ. հունվարի 23-ին «Մշակ»-ում լույս է տեսնում Ա-Դոյի առաջին հոդվածը, որտեղ ներկայացված էր բամբակի մշակման խնդիրները Երևանի նահանգում: Նրա խոստովանությամբ. «Այդ հանդիսացավ իմ կյանքի լավագույն րոպեն, իմ ուրախությանը չափ չկար...»[1]: Իր հետագա թղթակցությունները նա ստորագրում է «Հ. Տ. Մ.», իսկ ավելի ուշ՝ «Ա-Դո»:

Ա-Դոյի ժամանակակից, բնիկ երևանցի, մասնագիտությամբ գյուղատնտես, երգիծաբան, հրապարակախոս և հասարակական գործիչ Աշոտ Աթանասյանն իր անտիպ հուշերում հետևյալն է վկայում. «Ութսունական (1880-ական – խմբ.) թվականների վերջերին «Մշակ»-ի էջերում յերևաց Յերևանի նրա նոր թղթակիցն...Սիրեկան Տեր-Մարտիրոսյանն էր դա: ...իր կրտսեր յեղբայր, հայ գրականության մեջ հայտնի տնտեսագետ Ա-Դոն - Յովհաննես Տեր-Մարտիրոսյանը, վօրը թե իր պատրաստությամբ, թե կրթությամբ (թեմականավարտ) իր յեղբորից բարձր էր»: Ինչպես նշում է Ա. Աթանասյանը, Ա-Դոն իր հիմնական գիտական ուսումնասիրությունները կատարել է 1890-ական թվականներից մինչև 1920 թ. և աչքի ընկնող գրական ու քաղաքական ուժ էր՝ «իր հրապարակախոսական մի շարք ուսումնասիրություններով»[2]:

1889–1891 թթ. սովորում է Երևանի թեմական դպրոցում: Ավարտելուց հետո փորձում է հիմնել անձնական գործը՝ օճառի արտադրություն, սակայն գործը գլուխ չի գալիս և նա աշխատանքի է անցնում Խանզադյանին պատկանող խանութում որպես գործակատար:

---

[1] Նույն տեղում թ. 33:

[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 314, ցուցակ 21, թ. 34:

XIX դարի վերջերին Երևանը դարձել էր ՀՅԴ կարևոր կենտրոններից մեկը, որտեղով անցնում էր Թիֆլիսը՝ Հին Ջուղայի վրայով, Ատրպատականին կապող ճանապարհը, որը զենքի և զինամթերքի տեղափոխման գլխավոր ուղիներից մեկն էր: Այս կարևոր գործին անդամագրվում է նաև Ա-Դոն[1]:

1896 թ. հունվարի 15-ին և 26-ին Աղստաֆա կայարանում և Երևանում ոստիկանությունը հայտնաբերում է Մոսկվայից ուղարկված թիթեղյա տուփերում պահված 13 հազար փամփուշտ: Ըստ ոստիկանության ունեցած տեղեկության, զինամթերքի ստացողը ոմն Մարտիրոսովն էր: Գ. Խուդինյանի կարծիքով, այդ փամփուշտները ուղարկվել էին ՀՅԴ Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ Հովհաննես Տեր-Մարտիրոսյանին[2]: Սակայն որոշ ժամանակ անց, Ա-Դոն դուրս է գալիս ՀՅԴ-ի շարքերից, հավանաբար սպեցիֆիկներին անդամակցելու կամ հարելու համար:

Ա-Դոյի անտիպ գրառումներում հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ) մասին: 1893 թ. հունիսի սկզբներին կաթողիկոսը գալիս է Երևան: Տեղեկանալով Հայրիկի ժամանման մասին, քաղաքի և շրջակա բնակավայրերի հայությունը հավաքվում է նրան դիմավորելու: Երկու օր Երևանում մնալուց հետո կաթողիկոսը ուղղվում է Էջմիածին: Գևորգյան ճեմարանում Մ. Խրիմյանը հանդես է գալիս ճառով, որը մինչև հոգու խորքը հուզում է ներկաներին: Ա-Դոն վկայում է. «դահլիճն իր ամբողջությամբ լացում էր, իսկ իմ հետևից լսում էի մեկի բարձրաձայն հեկեկանքն ու հեծկլտոցը և երբ հետաքրքրված երեսս դարձրի այդ կողմը, տեսա մեր շնորհալի գրող Ղազարոս Աղայանին, որին տեսնում էի առաջին անգամ: Այդ մազ ու միրուքով, պարթև հասակով և զգացմունքների ակունք մարդը լացում էր

---

[1] Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Երևան, 2005, էջ 270:
[2] Նույն տեղում, էջ 338:

որպես մի պատանի: Այդ մոմենտին թաշկինակն աչքերին էր մոտեցրել ինքը՝ բազմությանը լացացնող Խրիմյանը»[1]:

1903 թ. տպագրվում է Ա-Դոյի, ներկայիս գիտական հասարակայնությանը համեմատաբար սակավ հայտնի «Մակեդոնիա» գրքույկը[2], որտեղ նա կատարում է հետաքրքիր հետևություն՝ Օսմանյան տիրապետության ներքո հեծեծող Մակեդոնիայի համար հակաթուրքական ելույթների համար ազդակ է հանդիսանում օսմանյան կառավարության կողմից 1895 թ. մայիսի 11-ին ընդունված և Հայկական նահանգներում նախատեսվող Մայիսյան բարենորոգումների ծրագիրը[3]:

Ա-Դոյի գրչին է պատկանում նաև մեկ այլ գրքույկ, որը ներկայացնում է 1890-ական կոտորածների հետևանքով ծննդավայրը լքած Վանի վիլայեթի Արճեշ գավառի Ախսրան գյուղի բնակիչ Մուրադին: Գիտնականը հետևյալ սահմանումն է տվել գաղթականին. «...գաղթականը նա է, որ զուրկ գլուխը դնելու տեղից մի կտոր հացը կուլ է տալիս արցունքով թրջած, որի բերանից կ'լսէք Ախ՜ Վաթան... Ախ՜ Էրկիր... (բազմակետերը հեղինակինն են – խմբ.)[4]»:

Ուսումնասեր երիտասարդը ցանկանում էր անպայման ստանալ բարձրագույն կրթություն, ուստի 1905 թ. սեպտեմբերին ընդունվում է Խարկովի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը որպես ազատ ունկնդիր, սակայն Ռուսական հեղափոխությունը (1905–1907 թթ.) և ուսանողական հուզումները հնարավորություն չեն տալիս ավարտել ուսումը և Ա-Դոն ստիպված է լինում վերադառնալ Երևան:

1906–1908 թթ. Ա-Դոն իրեն նվիրում է ցարական կառավարության սադրանքով հրահրված հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումների ուսումնասիրությանը. անձամբ լինում

---

[1] Ա-Դո, Իմ հիշողությունները, Տեր-Մարտիրոսյանների ընտանեկան արխիվ, թ. 64–65:
[2] Ա-Դо, Մակեդոնիա, Ս. Պետերբուրգ, 1903:
[3] Նույն տեղում, էջ 12–13:
[4] Նույնի՝ Հայրենիքի կարոտը, Ս. Պետերբուրգ, 1905, էջ 7:

է բախումների վայրերում, ինչպես օրինակ Գանձակի նահանգում, ականատես է լինում կռիվներին: Արդյունքում ստեղծում է մի աշխատություն, ուր փաստերի և ժամանակի մամուլի հիման վրա ներկայացնում է 1905–1906 թթ. ողբերգական իրադարձությունները[1]:

1908 թ. տպագրության է հանձնում «Միքայել Նալբանդյանի կյանքի հետաքրքիր մի էջ և Բակունինի նրան գրած նամակները» աշխատությունը[2]: Գիրքը շատ արագ սպառվում է և դրանից ոգևորված Ա-Դոն որոշում է գրել մի ուսումնասիրություն, որը նվիրված էր Ռուսաստանում ծավալված ազատագրական շարժմանը[3]: Օգոստոսին գիրքը սկսում է վաճառվել, սակայն իշխանություններն անհանգստացած այնտեղ տեղ գտած մի շարք «հակակառավարական» մտքերից, շտապում է արգելել ուսումնասիրության վաճառքը և բռնագրավում է ողջ տպաքանակը: Բարեբախտաբար սպառվել էր գրքի 600 օրինակ և ոստիկանությունը վաճառքից դուրս է բերում մնացածները (տպաքանակը նշված էր հազար, իսկ տպագրվել էր 1500 օրինակ):

1908 թ. սեպտեմբերին մեկնում է Ս. Պետերբուրգ և ուսանում Հոգենյարդաբանական ինստիտուտում: 1909 թ. սկզբին գալիս է Երևան և որոշում է իրագործել վաղեմի երազանքը՝ ուղևորություն կատարել Արևմտյան Հայաստան: Նույն թվականի հուլիսի 22-ին հատում է ռուս-թուրքական սահմանը և անցնում է Ալաշկերտի հովտում գտնվող Բայազետ քաղաքը: Ուղևորությունը տևում է երկու ամիս և նա հասցնում է լինել Վան, Մուշ, Էրզրում (Կարին) և այլ վայրերում: «Նոր հոսանք» թերթի (1913–1914 թթ.) համարներում տպագրում է «Հուշեր Տաճկահայաստանի ճանապարհորդությունից», սակայն թերթի փակ-

---

[1] Ա-դո, Հայ-թուրքական ընդհարումը:
[2] Նույնի՝ Միքայել Նալբանդեանի կյանքի հետաքրքիր մի էջ և Բակունինի նրան գրած նամակները, Երեւան, 1908:
[3] Նույնի՝ Ազատագրական շարժումը Ռուսաստանում իր ծագման առաջին օրերից, Երեւան, 1908:

ման պատճառով հնարավորություն չի լինում ամբողջությամբ տպագրել հոդվածաշարը:

1909 թ. սեպտեմբերին Ա-Դոն կրկին մեկնում է Ս. Պետերբուրգ և շարունակում ուսումը: Սակայն, չորս ամիս անց «Ազատագրական շարժումը Ռուսաստանում» գրքի պատճառով մեղադրանք է հարուցվում և Ա-Դոն Թիֆլիսում դատապարտվում է մեկ տարվա բանտարկության: Քանի որ դատավարությունը երկարաձգվում է և դատարանը պարտավոր է լրացուցիչ նիստ հրավիրել ամբաստանյալի բողոք-դիմումը քննելու համար, Ա-Դոն որոշում է կրկին լինել Արևմտյան Հայաստանում:

Վերադառնալուց հետո նա դատապարտվում է մեկ տարվա բանտարկության, որը կրում է Ներքին Ախտայի (այժմ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան) բանտում: Պատժաժամկետը լրանալուց հետո նա տպագրության է հանձնում «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները» աշխատությունը[1], որը արժանանում է ժամանակակիցների, այդ թվում նաև Լեոյի (Առաքել Բաբախանյան) բարձր գնահատականին: Հարկ ենք համարում նշել, որ ուսումնասիրությունն առ այսօր չի կորցրել իր գիտական արժեքը և հանդիսանում է կարևոր սկզբնաղբյուր Արևմտյան Հայաստանի հայկական բնակավայրերի բնակչության թվաքանակի և վարչական բաժանումների վերաբերյալ:

1914 թ. իշխանությունները թույլատրում են Ա-Դոյին հետազոտական աշխատանքներ կատարել Երևանի գիմնազիայի արխիվում և նյութեր հավաքել Խաչատուր Աբովյանի գործունեության վերջին տարիների վերաբերյալ (1843–1848 թթ.): Ուսումնասիրության արդյունքում նա պատրաստում է հետազոտություն, որի մի մասը տպագրվում է Բաքվում հրատարակվող «Գործ» ամսագրի 1914 թ. համարներում[2]: Գիտնականը կարո-

---

[1] Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները. Ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական և տնտեսական դրութեան, Երեւան, 1912:

[2] «Գործ», Բագու, N 5–6–7, մայիս-յունիս 1917, էջ 31–40, 48–69:

ղանում է ճշտել Խ. Աբովյանի ծննդյան տարեթիվը՝ 1809 թ.: Ցավոք, Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով հետագա հրատարակությունը դադարեցվում է:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովուրդը ենթարկվում է ցեղասպանության: Երիտթուրքական իշխանությունները, ոչնչացնելով արևմտահայերին, նպատակ ունեին վերջ տալ Հայկական հարցին և տեր դառնալ հայերի ունեցվածքին: 1914 թ. աշնանը ռուս-թուրքական ռազմաճակատում մարտական գործողությունները սկսելուց հետո դեպի Երևանի նահանգ և Կովկասի փոխարքայության տարբեր բնակավայրեր են գաղթում մեծ թվով հայեր: 1914 թ. դեկտմբերին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի հրամանով կազմակերպած «Եղբայրական օգնության հանձնաժողովը», Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, ռուսական կազմակերպություններն իրենց հնարավորությունների սահմաններում օժանդակություն են ցույց տալիս գաղթականներին: Նշված կազմակերպություններում և ընկերություններում ընդգրկվում են հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները, այդ թվում նաև Ա-Դոն:

Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ մի շարք վայրերում հայերը դիմում են ինքնապաշտպանության: Նման վայրերից մեկն էր Վան քաղաքը և համանուն նահանգը: 1915 թ. մայիսի 4-ին ավարտվում է Վանի հայության ինքնապաշտպանությունը: Մայիսի 7-ին կազմվում է ժամանակավոր վարչություն՝ նահանգապետություն Արամ Մանուկյանի գլխավորությամբ: Հայերի համար Վանն ապագա ինքնավար Հայաստանի մայրաքաղաքն էր, ուստի այնտեղ են մեկնում հայկական բարեգործական, հասարակական և կրոնական կազմակերպությունների լիազորները և օժանդակ խմբերը: Եվ 1915 թ. հունիսի 14-ից մինչև հուլիսի 24-ը Վանում և շրջակա գավառներում էր գտնվում Ա-Դոն: Նա ականատես է լինում զանգվածային ավերածությունների ու սպանությունների հետևանքներին,

որոնք իրականացրել էին թուրք և քուրդ ջարդարարները: Գիտնականն առօրյա աշխատանքի հետ միասին սկսում է կատարել ուսումնասիրություններ, տեղեկություններ հավաքել այս կամ այն բնակավայրի, բնակչության կազմի, տեղի ունեցած իրադարձությունների և այլնի մասին: Ինչպես վկայում է ժամանակակիցը. «Այս ամբողջ անցքի մանրամասն նկարագիրը (նահանգի հայության կոտորածը և ինքնապաշտպանական մարտերը – խմբ.) գրի էր առնում հրատարակելու պ. Ա-Դօն. ուստի և աւելորդ եմ համարում հատուկտոր տեղեկութիւններ տալ»[1]: Այս փաստը վկայում է Ա-Դոյի հայ հասարակության մեջ ունեցած գիտական և հասարակական հեղինակության մասին:

Աստիճանաբար քաղաքը և նահանգը ընկնում են իրենց կանոնավոր հունի մեջ: Իրավիճակը կայունանում է, սակայն հուլիսի 11-ին, բոլորի համար անսպասելի, ռուսական բանակը սկսում է նահանջել Վանի նահանգից: Վասպուրականի բնակչությունը հարկադրված է լինում ևս նահաջել: Արամը հանձնարարում է Ա-Դոյին Ավանց գյուղում գտնվող ձեռագրերը տեղափոխել էջմիածին և դրա համար տրամադրում է մեկ ֆուրգոն: Համանման հանձնարարություն են ստանում Վարազդատ Տերոյանը և Վարոս Բաբայանը: Ա-Դոն և իր ընկերները ձեռնամուխ են լինում ձեռագիր մատյանների փրկման գործին: Մեծ դժվարություններով հաջողվում է ձեռագրերը բերել և հասցնել էջմիածին ու հանձնել մատենադարանին[2]:

Վան-Վասպուրականից հավաքված նյութերը Ա-Դոն մշակելուց հետո հրատարակում է առանձին աշխատությունով[3], որն առ այսօր չի կորցրել իր կարևորությունը: Այս ուսումնասիրությունում ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է երիտթուրքական իշխանությունների կողմից Վանի նահանգի հայութ-

---

[1] «Հովիտ», Թիֆլիս, N 39, 11 հոկտեմբերի 1915, էջ 609:
[2] «Հորիզոն», Թիֆլիս, N 229, 10 հոկտեմբերի 1915:
[3] Ա-Դօ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին, Երեւան, 1917:

յան զանգվածային կոտորածը և հայերի կազմակերպած ինքնապաշտպանական մարտերը, Ա. Մանուկյանի գլխավորած Վանի նահանգային իշխանության գործունեությունը և այլն:

1915–1916 թթ. հայ հասարակությունը քննարկում էր կարևոր մի հարց՝ գաղթականներին օգնող և Արևմտյան Հայաստանի ավերված տնտեսությունը վերականգնող տարբեր կազմակերպությունների միավորման խնդիրը: Սա ևս խորապես հուզում է Ա-Դոյին: Նա «Հորիզոն» թերթում հանդես է գալիս հատուկ հոդվածով «Ինչու՞ չեն միանում»: Ա-Դոն ընթերցողին մեկ անգամ ևս տեղեկացնում է, որ «Թիֆլիսի Հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերությունը» նախաձեռնեց բոլոր ընկերությունների միավորիչ համագումար, որի «նպատակն էր միացնել մի մարմնի ձեռքում բոլոր նպաստներն ու միջոցները, որպէս զի ... կարողանար նպատակայարմար կերպով գործադրել գումարները»[1]:

Ա-Դոն կարճ ժամանակ անց Պետրոգրադի Կարմիր խաչի ջոկատի կովկասյան կայանների լիազորի առաջարկով մեկնում է Սալմաստ (Պարսկաստան), որտեղ վիճակագրական տեղեկություններ է հայթայթում հայ և ասորի գաղթականների վերաբերյալ: 1917 թ. ապրիլին լինում է Ռաֆֆու ծննդավայրում՝ Փայաջուկ գյուղում, ապա մեկնում է Աղբակ, Խոյ, իսկ հունիսի 12-ին՝ Վան և հունիսի 22-ին վերադառնում է Երևան:

1917 թ. Ռուսաստանի ժողովուրդների, այդ թվում նաև հայերի համար, կարևոր թվական էր: Փետրվարին տապալվում է միապետությունը և երկիրը հռչակվում է հանրապետություն: Սակայն, բոլշևիկները Վ. Լենինի գլխավորությամբ հոկտեմբերին իրականացնում են հեղաշրջում և զավթում իշխանությունը: Ռուսական բանակը լքում է ռուս-թուրքական ռազմաճակատը և հայ ժողովուրդը հայտնվում է թուրքական նոր սպառնալիքի առջև: 1918 թ. մայիսյան հերոսամարտերում հայկական բանա-

[1] «Հորիզոն», N 69, 26 մարտի 1916:

կի և ժողովրդի անգիջում դիմադրությունը փրկում է երկիրը վերջնական կործանումից: 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը հռչակում է իր անկախությունը:

Սակայն իրավիճակը շարունակում է մնալ սպառնալի՝ թուրքական բանակն ուղղվում է Բաքու: Հայաշատ այդ կենտրոնն է շտապում նաև Ա-Դոն, սակայն ճանապարհները փակ լինելու պատճառով կարողանում է միայն օգոստոսի 9-ին Դիլիջանից անցնել Թիֆլիս: Հետագայում նրան մեծ դժվարությամբ հաջողվում է վերադառնալ Երևան, քանի որ երկաթուղին գործում էր անկանոն և ճանապարհներն այնքան էլ ապահով չէին:

Ա-Դոն 1919 թ. ծառայության է անցնում Հայկոպում, որտեղ աշխատում է մինչև 1949 թ.:

Գիտնականն ունի անտիպ ուսումնասիրություններ, որոնցից է «Հայության երկունքը» (1920 թ.)[1]: Նա որպես ժամանակակից ներկայացրել է 1918 թ. մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը: Հաջորդ անտիպ գործը՝ «Իմ հիշողությունները», ընդգրկում են XIX դարի 70-ական թվականներից մինչև XX դարի 20-ական թվականները:

Ա-Դոն մահացել է 1954 թ. փետրվարի 7-ին Երևանում՝ 87 տարեկան հասակում:

Գիտնականի «Ռուսական ցարերը և Հայկական հարցը» պատրաստ է եղել տպագրության 1991 թ. վերջերին: Հրատարակությունը պետք է իրականացներ «Հայաստան» հրատարակչությունը, սակայն Հայաստանի շրջափակումը Ադրբեջանի կողմից, մարտական գործողությունների ծավալումը հայ-ադրբեջանական սահմանում և Արցախում, տնտեսական ճգնաժամը թույլ չեն տալի հրատարակել աշխատությունը: Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում «Հայաստան» հրատարակչության կոլեկտիվին գիրքը հրատարակության նախապատրաստե-

[1] Այս ուսումնասիրությունը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը նախատեսում է հրատարակել:

լու համար, ինչպես նաև որոշ ծանոթագրություններ կատարելու համար: Մենք հրատարակության ենք պատրաստել «Հայաստան» հրատարակչության կողմից պատրաստված տպագիր օրինակը, լրացուցիչ ծանոթագրություններով: Մեր միջամտություններն արված են ուղղագիծ փակագծերով: Կախման կետերը հեղինակինն են:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Ա-Դոյի դստեր՝ տիկին Ադոլյա Տեր-Մարտիրոսյանին սույն գործը մեզ տրամադրելու համար:

Ռուբեն Գասպարյան
պատմական գիտությունների թեկնածու
Ռուբեն Սահակյան
պատմական գիտությունների թեկնածու

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Թերթելով երեք տասնյակ տարիներ[1] առաջ մրոտած բազմաթիվ թղթերս, ձեռքս ընկավ մի տետր, որի գոյությունը բոլորովին մոռացել էի:

Այդ տետրի առաջին էջի վրա գրված էր հետևյալ վերնագիրը՝ «Ռուսական ցարերը և Հայկական հարցը»:

Այդ նյութն ինձ խիստ հետաքրքրեց առանձնապես այն պատճառով, որ վերհիշելով արդեն ընդմիշտ վերացման դատապարտված ցարիզմի դաժան ռեժիմի տիրապետությունը, կարելի լինի պատկերացնել մեր ներկան:

Ուստի թերթելով այդ տետրը, որոշեցի մաքրագրել այն՝ կատարելով մի քանի լրացումներ Իսրայել Օրու և Խաչատուր Աբովյանի մասին, ավելացնելով նաև փոքրիկ վերջաբան և դասել այն իմ ձեռագիր աշխատությունների շարքում, որպես հայ ժողովրդի պատմության մի մթին դրվագ:

1950 թ.

---

[1] Աշխատությունը գրվել է 1920-ական թվականներին:

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԸ 1880-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ես 14 տարեկան էի, երբ ծգեցի իմ ծննդավայր Նոր-Բայազետ քաղաքը և ընդմիշտ ոտք դրի Երևան:

Այս տեղաշարժն ինձ համար դարագլուխ հանդիսացավ, ես ընկա մի նոր աշխարհ և իմ առջև բացվեցին նոր հորիզոններ՝ ճանաչողություն, երևույթների ըմբռնում:

Նախ ինչ էր ներկայացնում իրենից իմ ծննդավայրը 1870-ական թվականներին, ուր ես անցկացրեցի իմ մանկության 14 տարիները:

Նոր-Բայազետը որպես գավառական կենտրոն իրեն ենթակա երեք տասնյակ զուտ հայաբնակ[1] գյուղերով՝ տարածված Սևանա լճի արևմտյան ափերին, կազմում էր պատմական Գեղարքունիքի հյուսիսային մասը՝ նշանավոր իր անցյալով, հուշարձաններով, նույնիսկ բևեռագրերով:

Այդ երեք տասնյակ գյուղերն իրենց կենտրոնով 1826–28 թվականների ռուս-պարսկական և 1828–29 թթ. ռուս-տաճկական [թուրքական] պատերազմների նախօրյակին գոյություն չունեին, այդ տարածությունը ներկայացնում էր միանգամայն ամայի անապատ:

Նույնպիսի ամայի պատկեր ուներ նաև Արարատյան դաշտավայրը՝ Շահ Աբասի կործանարար գերեվարությունից սկսած և հետագա պատերազմների ընթացքում, բնիկ ժողովրդին զանգվածաբար այս ու այնտեղ քշելու հետևանքով:

Հայկական մարզը[2] լավապես ուսումնասիրող ռուսական պաշտոնյա Շոպենի տվյալներով[1], ռուսների կողմից մարզի

---

[1] հայկական:

[2] Հայկական մարզը կազմվել է 1828 թ. մարտի 21-ին: Նրա պետ է նշանակվում գեներալ Ա. Ճավճավաձեն (1828–1830 թթ.), որին փոխարինել է գեներալ Վ. Բեհբութովը (Բեհբության 1830–1838 թթ.): Մարզը լուծարվել է Նիկոլայ I-ի 1840 թ. ապրիլի 10-ի հրամանագրով: Հայկական մարզի մեջ մտել են Արևելյան Հայաստանի մեծ մասը՝ Երևանի և Նախիջևանի խանությունները և Օրդու-

ՀԻՄՆԱՐԿԱՐ ԳՈՏՈՒՄԱՆ

գրավման նախօրյակին հայերի թիվը ողջ մարզում կազմում էր 4428 տուն 2561 շնչով: 1828–30[2] թվականների ռուս-պարսկական, ապա ռուս-տաճկական պատերազմներից հետո պարսկական Սալմաստի, Խոյի և Մակուի շրջաններից ազատագրված Հայկական մարզ գաղթեցին 6949 տուն 35560 շնչով[3] և 3682 տուն 21666 շնչով տաճկական Բայազետի ու Ալաշկերտի շրջաններից: Այսպիսով, 1831 թվին Հայկական մարզում հայերի ընդհանուր թիվը կազմում էր 15059 տուն 82377 շնչով[4]:

Բայազետի և Ալաշկերտի շրջաններից եկած 1485 տուն 8548 շնչով հաստատվեցին Նոր-Բայազետում և նրա շրջանի երեք տասնյակ գյուղերում և դարձան ամայի շրջանի մարդկային կորիզը: Նոր միջավայրում այդ թիվն աճեց, 1886 թվին հասավ 38 հազար շնչի, 1897 թվին 45 հազարի, իսկ 1926 թվին արդեն այդ թիվը հասավ 62 հազարի՝ հաշված նաև Նոր-Բայազետ քաղաքը:

Ուշագրավ է նաև Նոր-Բայազետ քաղաքի հիմնադրման պատմությունը: Հիշյալ երեք տասնյակ գյուղերից մեկը՝ նույնպես ամայի ու անմարդաբնակ, կոչվում է Գավառ: Տաճկական Բայազետից[5] գաղթած 258 տուն 1346 շնչով գալիս տեղավոր-

---

բաղի գավառը, որոնք Ռուսաստանը նվաճել էր 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմների արդյունքում: Կենտրոնը՝ Երևան քաղաքն էր:

[1] Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области в эпоху ее соединения к Русской империи, Санкт-Петербург, 1852.

[2] 1828–1829 թթ.:

[3] Հայկական մարզ գաղթում են 8249 ընտանիք (մոտ 45 հազար մարդ), տե՛ս Հայոց պատմություն, հ. 3, գիրք I: Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 218 (այսուհետև՝ ՀՊ): 1829–1832 թթ. ցուցակագրման տվյալների համաձայն մարզում հաստատվում են 6946 ընտանիք (35560 մարդ), տե՛ս նույն տեղում, էջ 220:

[4] 1829–1830 թթ. վերաբնակիչների թիվը կազմել է 74-ից 76 հազար, տե՛ս ՀՊ, էջ 258:

[5] 1878 թ. Բեռլինի պայմանագրով Ռուսաստանը Օսմանյան կայսրությանը վերադարձնում է պատերազմի (1877–1878 թթ. ռուս-թուրքական) ընթացքում գրաված Ալաշկերտի հովիտը, բացի Բասենի 40 գյուղերից: Նրանցից կազմվում է վարչական նոր միավոր՝ Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի Խորասանի տեղամասը, որը նաև կոչվում է «Ռուսական Բասեն»: Օսմանյան կայսրու-

վում են Գավառ կոչվող վայրում և, պահպանելու համար իրենց ծննդավայրի անունը, այն կոչում են Նոր-Բայազետ, թեև նախկին անունը մոռացության տալ չեն կարողանում և մինչև այժմ էլ այն կոչում են Քյավառ:

Ինչպես ողջ շրջանում, այնպես էլ Նոր-Բայազետում տեղի ունեցավ մեծ աճ, 1880 թվին ազգաբնակչությունը հաշվվում էր 8000 շունչ:

Նոր-Բայազետն իր մարդկային կազմով մի ինքնատիպ երևույթ էր. բնակչությունը բաղկացած էր զուտ հայերից, որպես բացառություն կային մի տասնյակ ռուս պաշտոնյաներ:

Բացի այդ, ժողովուրդը գլխովին լուսավորչականներ[1] էին, այլ դավանանք չէր խախտել նրա հավատի «միասնությունը»: Աստվածապաշտ, եկեղեցասեր, ավանդապահ մարդիկ էին:

Իսկ զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն էր, որը բնակչության ապրուստի հիմքն էր:

Կային ընտանիքներ, որոնք պարապում էին առևտրով, ինչպես և զանազան արհեստներով, սակայն անխտիր զբաղվում էին նաև հողագործությամբ ու անասնապահությամբ՝ ունենալով և հողաբաժին և արոտատեղի:

Մի հարկանի և հողածածկ տներ, կողք-կողքի կպած, մեծ մասամբ բակերից զուրկ. աշնան սկզբին այդ վայրը ներկայացնում էր արտասովոր տեսարան, յուրաքանչյուր տանիքին խոտի դեզ էր, յուրաքանչյուր տան առաջ գոմաղբից ստացած աթարի կոնաձև և սրածայր բուրգեր:

Քաղաքն իր անշուք տներով կորչում էր դեզերի ու բուրգերի արանքում: Մի խոսքով Նոր-Բայազետն ավելի շուտ գյուղ էր, քան քաղաք:

Եվ եթե այս բոլորին ավելացնենք նաև այն, որ Նոր-Բայազետը մեկուսացած էր դրսի աշխարհից, հեռու բանուկ ճանա-

---

թյան տիրապետության տակ մնում են Բասենի 98 գյուղ, որոնք անվանում են «Թուրքական կամ Տաճկական Բասեն»:

[1] Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ:

պարիներից, ապա հասկանալի կլինի այն լճացած կենցաղը, որով ապրում էին այդ մարդիկ:

Մինչև այսօր էլ, տասնյակ տարիներ անց, հիշում եմ, թե ինչպես իմ պատանեկան տարիներին հաճախ կանգ էի առնում, գարնան արևին շարքով պատերի տակ նստած տարիքավոր մարդկանց զրույցը լսում. դրանց զրույցը մեծ մասամբ դառնում էր 1828–29 թվականների պատերազմի շուրջը. տալիս էին Պասկևիչի[1], Բեհբութովի[2] անունները, պատմում նրանց քաջագործությունների մասին և օրը մթնեցնում:

Հիշողությանս մեջ տպավորվել է հատկապես այն մաղթանքը, որ արտասանվում էր հարսանիքների ու խնջույքների ժամանակ. լցնում էին օղու գավաթները, հյուրերից մեկը՝ հեղինակավորը, վերցնում էր այն և մի քանի պերճախոսություններից հետո բացականչում՝ «Ռուս թագավորի թուրը կտրուկ հլնի (լինի)», նույն խոսքերը կրկնում էին ամենքը և գավաթները դատարկում:

Ահա այն իրականությունը, որում բոլորեցի իմ 14 տարին և մի գեղեցիկ օր ոտք դրի Երևան:

---

[1] Պասկևիչ Իվան Ֆյոդորի (1782–1856 թթ.), ռուս զորավար և պետական գործիչ, գեներալ-ֆելդմարշալ, կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար, 1827–1831 թթ. Կովկասի կառավարչապետ:

[2] Բեհբութով (Բեհբության) Վասիլի Օսիպի (Հովսեփի, 1791–1858 թթ.), հեծելազորի գեներալ, 1830–1838 թթ. Հայկական մարզի պետ:

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ, ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԻՑ

Ինչ էր ներկայացնում իրենից Երևանը.

Երևան անունը քաղցր է հնչում հայության բերանում, ըստ որում վաղուց ի վեր հանդիսանում էր Արարատյան բնաշխարհի կենտրոնը: Շրջապատ ունենալով Աբովյանի ծննդավայր Քանաքեռը, Պռոշյանի, նաև Ներսես Աշտարակեցու ծննդավայր Աշտարակը, պատմագիր Ղազար Փարպեցու ծննդավայր Փարպին և հայության հոգևոր կենտրոն Էջմիածինը, Երևանը հանդիսացել է հայության սիրտը, նրա զարկերակը: Երևանը նահանգական քաղաք էր, այդ նահանգն ընդգրկում էր ամբողջովին Հայկական մարզը, Երևանի բնակչության թիվը 30 հազարից չէր անցնում: Կողք-կողքի ապրում էին հայեր, թուրքեր, ռուսներ, որոնք քիչ էին՝ մեծ մասամբ պաշտոնյաներ:

Երկհարկանի տները քիչ էին, այն էլ այս ու այնտեղ ընկած, տները միհարկանի էին, հողածածկ, որոնք թեև ոչ բոլորը, ունեին գետնափոր նկուղներ՝ կենսամթերքներ պահելու համար:

Քաղաքի կենտրոնում գտնվում էր շուկան: Հրապարակի շուրջը ծգված էին խանութաշարքեր, իսկ հյուսիսային շարքի հետևում զուգահեռ ծգվում էին Պարսկաստանի տիրապետության օրերից մնացած «մութ չարսու» կոչվող խանութաշարքեր, որոնցում աչքի էին ընկնում ճոթավաճառ, մրգավաճառ խանութներ և զանազան արհեստավորների կրպակներ:

Անցնում եմ խանութաշարքերի առջևով, կանգ եմ առնում մսավաճառների, զանազան խորտիկներ պատրաստող կրպակների, բազմազան թարմ մրգերի և վերջապես, փռերի առջև, որպիսի՝ առատություն և որպիսի բազմազանություն մսի, խորտիկների, թարմ մրգերի, հացի տեսակների: Ինձ գրավում է հացի մի տեսակը, որը կոչվում է սանգակ. լայն ու երկարուկ, բող-

բոջավոր, փափուկ, սպիտակ ու գրավիչ. տեսնում եմ, թե ինչպես հացը դնում են կշեռքի վրա, կշռում ու վաճառում են, զարմանում եմ. իմ ծննդավայրում հաց կշռել ու վաճառել չեմ տեսել. յուրաքանչյուր ընտանիք ուներ իր թոնիրը. շրջակա գյուղերից եկողը իջնում էր իր բարեկամի կամ ծանոթի մոտ, հյուրասիրվում էր, գիշերում ու գնում:

Երևանում շատ ու քիչ կանոնավոր փողոցներ մի քանիսն էին, այն էլ նոր ձգված, հիմնական թաղամասերը ներկայացնում էին բազմազան տների կուտակումներ, ծուռումուռ նեղլիկ փողոցներով, որոնց կենտրոններում խրոխտ բարձրանում էին 4–5 հայկական եկեղեցիներ իրենց զանգակատներով և նույնքան մզկիթներ, որոնց մինարեթներից ամեն օր լուսաբացին լսվում էր մուեդզինի[1] ձայնը:

Երևանը շատ սովորական քաղաք էր՝ փոքր ու անշուք, բայց նա ուներ իր զարդը, որն անփոխարինելի էր, դա նրա ճոխ բուսականությունն էր՝ ծառեր ու ծառեր, կանաչ տերևների ծով, որն իր ստվերի տակ էր առնում անշուք տների կուտակումները:

Բուսականությունից զուրկ, ավազոտ ու ժայռոտ Նոր-Բայազետից հետո ծառերի ու կանաչ սաղարթի այդ ծովն ինձ երազանք թվաց:

Բայց այս բոլորի կողքին կար և մի այլ արտասովոր բան, դա այն էր, որ խոսակցությունն ընդհանրապես ընթանում էր թուրքերեն, եթե խոսողներից թեկուզ մեկը թուրք էր:

Դա նրանից էր, որ համարյա բոլոր հայերը գիտեին թուրքերեն, իսկ թուրքերը հայերեն չգիտեին: Ահա մի ժառանգություն, որ մնացել էր Պարսկաստանի տիրապետության օրերից և Ռուսաստանի տիրապետության տարիներին էլ դեռևս չէին կարողացել հաղթահարել այդ անցանկալի թերությունը:

Հետզհետե առիթ էր լինում հանդիպել նորանոր արտասովոր երևույթների: Այսպես, մեկ անգամ մոտեցա յուղ ու պանիր

[1] Մահմեդականներին աղոթքի կանչող կրոնավոր:

վաճառող խանութին, խանութպանը թուրք էր, փորձեցի երկու մատով շոշափել սեղանի վրա դրված պանիրը, քիչ մնաց խանութպանը կռիվ սարքեր. չգիտեի, որ հայը որպես քրիստոնյա համարվում է պիղծ, ու նրա շոշափած թաց մթերքը որպես պղծված, Մուհամեդի հետևողներին արգելվում էր գործածել:

Ավելի արտասովոր էր թուրքերի մեջ ընդունված մեկ ծիսակատարություն, դա Մուհամեդի անվան հետ կապված Մահառլամ կոչվող սգո տոնն էր: Մզկիթներում կատարվում էր սգահանդես, մասնակիցները հետո դուրս էին գալիս փողոց, զարդարված ձիերի հետևից ձգվում էր սպիտակազգեստ, արնակոլոլ մարդկանց երկար շղթան՝ սրերը ճոճելով, գլուխներն ու ճակատները սափրած: Ահագին բազմությունը շրջան կազմած՝ ողբով, լաց ու կականով կուրծքները ծեծելով շարժվում էին փողոցից փողոց, մզկիթից մզկիթ, ամբողջ օրվա ընթացքում թողնելով խիստ ծանր տպավորություն:

Եվ այսպես, Նոր-Բայազետի զուտ հայ, միատարր, ավանդապահ, դանդաղաշարժ միջավայրից մեկեն ընկել էի մի նոր աշխարհ, որը որքան հետաքրքիր ու գրավիչ էր, այնքան էլ հարուստ էր նորություններով ու տարօրինակություններով:

Այս բոլորը ինչ որ բերեցի, վերաբերում էին Երևանի արտաքին երևույթներին, սակայն կարևոր էր էականը՝ Երևանի ներքին կյանքը, ժողովուրդների փոխհարաբերությունները, դրացիական շփումները, չէ որ կողք-կողքի ապրում էին հայեր, թուրքեր և ռուս պաշտոնեություն. ինքնուրույն կենցաղ, ուրույն ձգտումներ ու մտածելակերպ:

Իսկ այդ ներքինը, տարբեր ժողովուրդների փոխհարաբերությունների ու շփումների հանգամանքները ճանաչելու համար հարկավոր էր ժամանակ, տևական դիտողություն, երևույթների ըմբռնում և խնդիրների լուսաբանում:

Ահա այդ տվեց ինձ Երևանը, այդ նոր աշխարհն իր բարդ կազմությամբ, եռուն կյանքով և բազմաթիվ հարցերով:

ԴԵՊՔԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ 1880-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1880-ական թվականներին Ռուսաստանում տեղի ունեցան մեծ իրադարձություններ. 1881 թ. մարտի 1-ին սպանվեց Ալեքսանդր II-ը[1]. այս դեպքը ցնցեց ոչ միայն Պետերբուրգը, այլև ողջ Ռուսաստանը: Առանձնապես ցնցվեց ցարական պալատը. թագավորող տունը սարսափի մատնվեց և գլուխը կորցրեց: Պալատական մի նեղ շրջան և ազդեցիկ երկու անձնավորություններ փորձեցին երկրում ստեղծել սահմանադրական կարգ, տեղի ունեցան խորհրդակցություններ, և եղավ մի պահ, երբ սահմանադրական նախագիծը պիտի վավերացվեր: Սակայն այդ պահին հրապարակ եկավ մոլի միապետական Պոբեդոնոսցևը[2], իր կողմը թեքեց շատերին, նաև նոր գահակալ Ալեքսանդր III-ին[3], և սահմանադրության կողմնակիցները քշվեցին ու հրապարակը մնաց Պոբեդոնոսցևին:

Պոբեդոնոսցևը գործի անցավ, ռեակցիան գլուխ բարձրացրեց՝ ցարի իրավունքներից չզիջել և ոչ մի հյուլե, – հայտարարեց սատրապը և սկսվեցին խուզարկություններ, ձերբակալություններ:

Սատրապը դաժան էր ու անզուսպ, հալածանքը մոլեգնում էր ամեն տեղ:

Դաժան ռեակցիան ծավալվելով ընդգրկեց ամբողջ Ռուսաստանն իր ծայրամասերով: Նրա ալիքը եկավ ողողեց նաև

---

[1] Ալեքսանդր II Ռոմանով (1818–1881 թթ.), ռուսական կայսր (1855–1881 թթ.): Ստացել էր «Ազատարար» մականունը գյուղացիությանը ճորտությունից ազատելու համար:

[2] Պոբեդոնոսցև Կոնստանտին Պյոտրի (1827–1907 թթ.), ռուս պետական գործիչ, գիտնական, գրող, թարգմանիչ: Պետական խորհրդի անդամ (1872 թ.): 1885–1905 թթ. զբաղեցրել է Սուրբ Սինոդի օբեր-պրոկուրորի (ցարի ներկայացուցիչ Սինոդում) պաշտոնը: Հայտնի էր իր հակահայ հայացքներով: Գահաժառանգ Ալեքսանդր III-ին դասավանդել է օրենսդրություն և իրավունք առարկան ու մեծ ազդեցություն է ունեցել նրա վրա:

[3] Ալեքսանդր III Ռոմանով (1845–1894 թթ.), ռուսական կայսր (1881–1894 թթ.):

Անդրկովկասը ու հայ իրականությունը: Ոստիկանությունն ամեն տեղ ոտքի ելավ, նրան որպես աջակից, հաճախ նույնիսկ թելադրող ծնվեց «Իսկական ռուս մարդկանց միությունը»[1], որը հետագայում կրեց սևհարյուրակային անունը:

Ստեղծված իրադրությունն ազդեց նաև Երևանի հայ-թուրքական հարաբերությունների վրա:

Երևանի հայ բնակչության մտավոր մակարդակը բարձր էր, քան դրացի թուրքերինը:

Երևանում գործում էին արական և իգական գիմնազիաներ, ուսուցչական սեմինարիա: Այս երեք դպրոցներում էլ աշակերտության ավելի քան 80 տոկոսը կազմում էին հայ տղաներ և աղջիկներ, թուրք տղաները կազմում էին չնչին տոկոս, իսկ թուրք աղջիկներ բոլորովին չկային: Բացի այդ, հայերն ունեին թեմական միջնակարգ դպրոց, աղջիկների Գայանյան միջնակարգ դպրոցը[2] և մի քանի ծխական դպրոցներ՝ տղաների և աղջիկների համար, իսկ թուրքերի մոտ ուսումը տարվում էր մզկիթներին կից՝ հոգևորականների ղեկավարությամբ, ուրույն մեթոդով: Գավառներում պետական դպրոցների համար ուսուցիչներ նշանակվում էին մեծ մասամբ ուսուցչական սեմինարիան

---

[1] Կազմակերպության անվանումն է "Союз русских людей" («Ռուս մարդկանց միություն»), որը ռուս ազգայնական-միապետական կազմակերպություն էր: Հիմնվել է Մոսկվայում 1905 թ. և փաստացի գործել է մինչև 1910–1911 թթ., թեև պահպանել է իր գոյությունը մինչև 1917 թ.: Հիմնադիրները և գլխավոր ղեկավարներն են եղել կոմսեր Պավել և Պյոտր Շերեմետևները, իշխաններ Պ. Ն. Տրուբեցկոյը և Ա. Գ. Շչերբատովը (Ի նախագահը), ռուս հրապարակախոսներ Ն. Ա. Պավլովը և Ս. Ֆ. Շարապովը: Հրատարակել են "Временник Союза Русских Людей", ինչպես մաև մեծ քանակությամբ թռուցիկներ և գրքույկներ: Միությունն իր մասնաճյուղերն է ունեցել կայսրության տարբեր քաղաքներում:

[2] Գայանյան օրիորդաց դպրոցը հիմնադրվել է Երևանում (1886–1921 թթ.), էջմիածնի Սինոդի հրամանագրով: Սկզբնապես դասերն ընթացել են մասնավոր տանը, իսկ 1877 թ. տեղափոխվել է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու գավիթ: 1883 թ. դպրոցը դարձել է միջնակարգ (վեց դասարանով): 1884 թ. դպրոցը փակվել և 1886 թ. վերաբացվել է որպես օրիորդաց հոգևոր դպրոց: 1911–1912 թթ. ուս. տարվանից ունեցել է 9 դասարան և մանկավարժական ուղղվածություն:

ավարտած հայ տղաներ, իսկ գավառական ծխական դպրոցներին ուսուցիչներ մատակարարում էր թեմական դպրոցը: Արական գիմնազիան ավարտողներից շատերը գնում էին Մոսկվա, Պետերբուրգ, Խարկով՝ բարձրագույն կրթություն ձեռք բերելու համար:

Խիստ հաճելի մթնոլորտ էր ստեղծվում ամառվա երեք ամիսներին, երբ ուսանող երիտասարդները տուն էին վերադառնում:

Նրանք, կարելի է ասել, անգործ չէին մնում, շփվում էին թեմական դպրոցի ու գիմնազիստ աշակերտների, նաև տեղական ուսուցիչների ու երիտասարդների հետ, կազմակերպում էին երեկոյան հանդիպումներ, կարդում էին արգելված գրքեր, քննարկում էին քաղաքական-սոցիալական զանազան հարցեր: Մի խոսքով՝ նրանք բերում էին իրենց հետ նոր խոսք, նոր հովեր և համակում բոլորին: Ես չեմ մոռանա այն ժողովները, երբ ձեռքից-ձեռք էր անցնում Միքայել Նալբանդյանի լուսանկարը՝ հակառակ երեսին տպված «Ազատն աստված», և միակ տպագիր օրինակ «Երկրագործությունը», որը մաս-մաս ընթերցելուց հետո բազմացնում էին խմորատիպի միջոցով:

Այս բոլորը Երևանի ոստիկանության աչքից խուսափել չէր կարող, խուսափել չէին կարող մանավանդ Երևան նոր թափանցած սևհարյուրյակային կազմակերպության աչքերից, կազմակերպություն, որի ղեկավարները ժողովրդի հետ շփվող պաշտոնյաներն էին:

Սևհարյուրակային թաթը նախ մուտք գործեց արական գիմնազիայի շենքը: Գիմնազիայի տեսուչը՝ Բրաժնիկովը, շփացած անբարոյական անձնավորություն էր: Նրա օգնական Տվյորդին տգետ էր, գռեհիկ, գորոդովոյի[1] բարքերով մարդ: Գիմնազիան վերածվեց կատարյալ «զորանոցի», ուսուցիչների և աշակերտների միջև ստեղծվեց այնպիսի հարաբերություն, որը միայն

[1] Գորոդովոյ՝ ոստիկան: Ռուսերեն՝ городовой: Ռուսական կայսրությունում քաղաքային ոստիկանության ստորին կոչում:

նողկանք էր առաջացնում: Աշակերտի բերանից հայերեն խոսք չպետք է լսվեր: Ուսուցչի նկատմամբ պահանջվում էր լուռ հնազանդություն, ազգանվան «յանց» վերջավորությունը ծաղրվում էր և արգելվում էր գործածել: Ստեղծվել էր մի դրություն, որ փողոցում աշակերտը ամեն կերպ աշխատում էր չհանդիպել տեսչին, մանավանդ օգնականին: Տեսչի օգնականը հաճախ դուրս էր գալիս փողոց հատկապես հետևելու, թե աշակերտներ չե՞ն երևում փողոցներում, և եթե երևում են, համազգեստո՞վ են, թե՞ ոչ, կամ համազգեստի կոճակները կոճկվա՞ծ են, թե ոչ: Վայ այն աշակերտին, որի հագուստը կարգին չէր, այդպիսի աշակերտին տեսչի օգնականը փողոցում կկանգնեցներ և սպառնալիք կթափեր նրա գլխին: Աշակերտի երեսին շպրտում էին «արմյաշկա» լպիրշ, վիրավորական արտահայտությունը, եթե նա համարձակվում էր տեսչի կամ օգնականի կոպիտ նկատողությանը հակաճառել: Իսկ հաճախ հակաճառող աշակերտը վռնդվում էր գիմնազիայից՝ առանց հաշվի առնելու գիմնազիայում անցկացրած տարիները:

Այդ լպիրշ արտահայտությունն առիթ դարձավ մի խայտառակության, որի մասին ուզում եմ պատմել:

Բագրատ Միերյանը, գիմնազիայի 7-րդ դասարանի աշակերտ, ինչ-որ հակաճառության համար վտարվում է գիմնազիայից: Նրա եղբայրը՝ Թովմաս Միերյանը, Երևանում հարգված անձնավորություն, տրանսպորտային «Նադեժդա» ընկերության ծառայող, դիմում է տեսուչ Բրաժնիկովին՝ խնդրելով հետ ընդունել եղբորը գիմնազիա: Դիմումը կտրականապես մերժվում է, իսկ Միերյանը ստիպված է լինում պահանջել վերադարձնել եղբոր փաստաթղթերը՝ մի այլ դպրոցում տեղավորելու համար: Սակայն վաղը, մյուս օրը ասելով տեսուչը ձգձգում է և փաստաթղթերը չի վերադարձնում: Մի օր, 1883 թ. մարտի 19-ին, քաղաքային այգում Միերյանը հանդիպելով Բրաժնիկովին, դիմում է նրան, թե ե՞րբ վերջապես կվերադարձնի եղբոր փաստաթղթերը: Հարցադրումը մի քիչ կոպիտ էր ու կտրուկ: Եվ Բրաժ-

նիկովը Մհերյանին նետում է իր սիրած լպիրշ «արմյաշկա» խոսքը: Զայրույթը համակում է Մհերյանին և ահա մի շեշտակի ու ծանր ապտակ դրոշմվում է Բրաժնիկովի դեմքին:

Իրարանցում, ոստիկանապետ, դատախազ, նահանգապետ և այլն գործի են անցնում ու Մհերյանը կալանքի է առնվում: Մինչև դատը կալանքից ազատելու համար դատախազը գրավական է պահանջում 3000 ռ.՝ հավատացած, որ Մհերյանը այդպիսի գումար վճարել չի կարող, սակայն այդ գումարը ներկայացնում են երկու առևտրականներ և Մհերյանը արձակվում է կալանքից: Խնդիրը չի փակվում և դատ տեղի չի ունենում, այլ այդ ապտակը համարելով ինչ-որ կազմակերպված ակտ, Մհերյանը աքսորվում է, մի շարք հայերի մոտ կատարվում են խուզարկություններ, ու դրանցից հետո մի քանիսը ևս աքսորվում են:

Սակայն ապտակի թողած տպավորությունը անհետևանք չի անցնում, այն Երևանի աներեր իրականության մեջ սթափեցնող ազդեցություն է թողնում:

– Մի՞թե կարելի է ռուս պաշտոնյայի, այն էլ գիմնազիայի տեսչի վրա, որը Երևանի նահանգապետին հավասար հռչակ ու պատիվ ունի, ձեռք բարձրացնել, ապտակել նրան, – ահա այս տիրապետող ըմբռնման պատասխանը եղավ այն, որ լպիրշ վիրավորանք հասցնողին կարելի է նաև ապտակել:

Երևանում իմ անցկացրած առաջին երկու տարիների ընթացքում այս դեպքը եկավ սկիզբ դնելու Նոր-Բայազետից հիշողություն մնացած «Ռուս թագավորի թուրը կտրուկ լինի» մաղթանքի հիմնովին խախտմանը:

Եկավ 1885 թվականը, ռեակցիան ավելի մեծ թափ ստացավ: Եվ ահա 1885 թվի մարտի 13-ին միանգամայն անսպասելի հայտարարվեց կայսերական հրամանը՝ «փակել հայոց ծխական բոլոր դպրոցները»:

Պետական որոշումները կատարելու համար գոյություն ուներ ընդունված ձևով, հայոց ծխական դպրոցներն ունեն վե-

ռադաս մարմիններ՝ հոգաբարձություն, թեմական տեսուչ, առաջնորդ և վերջապես կաթողիկոս: Հարկավոր էր գրավոր կարգով հայտնել այդ որոշումը հիշյալ մարմիններին և պահանջել կատարել այդ որոշումը, բայց այդ ընդունված ձևը տեղի չունեցավ: Երևանի ռեակցիոն իշխանությունը որոշեց դպրոցների փակումը կատարել կոպիտ, գռեհիկ ձևով, այնպիսի ձևով, որպեսզի հայ ժողովրդին պատճառած լինի վիրավորանք, ցավ և կսկիծ:

Եվ ահա մարտի 13-ին, օրվա այն պահին, երբ բոլոր դպրոցներում և բոլոր դասարաններում ուսուցիչները աշակերտությանը ավանդում էին իրենց դասը, մեկեն բացվում է դասարանի դուռը, ներս է մտնում թաղային պրիստավը՝ հետևը ծգած երկու գորոդովոյներ և հրամայում է ուսուցչին ընդհատել դասը, իսկ աշակերտներին՝ հավաքել գրքերը և տուն գնալ:

Հրամանը խիստ է. ենթարկվել առանց հապաղելու: Ուսուցիչը շփոթվում է, աշակերտներն իրար են անցնում, աղմուկն ու լացը կատարյալ է լինում:

Հայ ժողովրդին հասցրած հարվածը մեծ էր և տեսարանը խիստ հուզիչ: Ես մինչև այսօր էլ չեմ կարողանում մոռանալ այն պահը, երբ լուրն առնելուն պես փողոց դուրս եկա և տեսա, թե ինչպես տղա ու աղջիկ, մեծ ու փոքր գրքերը թևերի տակ՝ լացով, ողբալով տուն էին վազում՝ հուզմունքը փոխանցելու իրենց ծնողներին:

Երևանի ռեակցիոն ուժերը լիովին բավարարված էին, բազմաթիվ դպրոցներ փակվեցին, տասնյակ հազարավոր տղաներ ու աղջիկներ փողոց նետվեցին, հարյուրավոր ուսուցիչներ և ուսուցչուհիներ անգործության մատնվեցին: Բայց Երևանի անգործ մնացած ուսուցչությունն այդ բարբարոս վարմունքն անպատասխան չթողեց. նա անմիջապես հայտարարեց, որ հանձն է առնում ձրիաբար մասնավոր տներում շարունակել արգելված պարապմունքը աշակերտության հետ:

Ժողովուրդը հաճույքով ընդունեց այդ առաջարկը. շուտով այդ նպատակի համար տրամադրվեցին մասնավոր բնակարաններում սենյակներ և սկսվեց եռանդուն աշխատանք: Ճիշտ է այդ ընդհատակյա ուսուցումը երկար չշարունակվեց, բայց և այնպես հանդիսացավ մի ցույց, նաև բարոյական ապտակ՝ դրոշմված սև ռեակցիայի ճակատին:

Ծխական դպրոցները փակելու ակտից ավելի նողկալի ու խիստ վտանգավոր ակտ տեղի ունեցավ 1888 թ. հունվարի 5-ին, որն այստեղ բերելուց առաջ անհրաժեշտ է լուսաբանել մի հանգամանք:

Մինչ այդ Երևանի հայ և թուրք ժողովուրդների մեջ գոյություն ուներ խաղաղ դրացիական հարաբերություն: Ճիշտ է, այդ երկու ժողովուրդների հոգեբանության մեջ դեռևս մնում էր Պարսկաստանի տիրապետության կարգերից որպես ժառանգություն՝ հայ ժողովրդի հալածական ու կախված վիճակը և թուրք կրոնական արտոնյալ հանգամանքը, բայց հայ ժողովուրդը հաշտված այդ դրության հետ, բոլորովին առիթ չէր տալիս կոնֆլիկտներ ստեղծելու: Այս երևույթը ակնհայտ էր դառնում մանավանդ, երբ մասնավոր հողի վրա հայ և թուրք անհատների մեջ ծագում էր վեճ: Այդպիսի վեճերում զիջողը լինում էր հայը՝ անկարող զգալով իրեն հանդեպ թուրքի:

Բացի այս, կար մի այլ հանգամանք. դա այն էր, որ ադմինիստրացիան հայ ժողովրդի նկատմամբ տանում էր հալածական քաղաքականություն, հայերի մոտ կատարվում էին խուզարկություններ, աչքի ընկնող հայերին աքսորում էին ու վերջապես հայոց դպրոցները փակվում էին վայրագ ձևերով, և այս բոլորը տեսնում էր մանավանդ թուրք ժողովրդի վերին շերտը՝ բեկերը, խաները, կալվածատերերը և ռուս պաշտոնեության հետ շփում ունեցող որոշ անձնավորություններ և անում համապատասխան հետևություններ:

Իսկ այժմ 1888 թվի հունվարի 5-ի կատարվածի մասին: Ընտրված էր հատկապես հայերի համար հանդիսավոր օր, այդ

օրը հայերն աշխատանքը դադարեցնում էին սովորականից շուտ, բոլորը գնում էին եկեղեցի, իսկ ժամասացությունից հետո շտապում էին տուն՝ ճոխ ընթրիքով տոնելու Ծննդյան տոնը: Սակայն այդ օրը հայերի համար դարձավ սգի և սարսափի օր: Առավոտյան ժամը ինն էր, շուկայի եռուն ժամանակը, գյուղերից բերվում, կուտակվում էր մեծ մասամբ բամբակ, որի շուրջ սկսվում էր առևտուրը և գործարքներ էին կնքվում: Այդ պահին, միանգամայն անսպասելի, ձի նստած ու զինված մի թուրք՝ Երևանում հայտնի Սուլթան բեկ Նասիբ բեկ օղլին, սրընթաց մոտենում է բամբակի վաճառքով զբաղվող մի խմբի, հանում է ատրճանակը, կրկնակի կրակում է խմբի վրա և ձիու գլուխը դարձնելով, սրընթաց անհայտանում: Այդ կրկնակի կրակոցին զոհ գնացին երկու հոգի՝ Եգոր Թևոսյանը, մի քաջ երիտասարդ և Եգոր Զարդարյանը: Այս դեպքից սարսափած հայերը շտապ կողպեցին խանութները, խռնված դիմեցին դեպի նահանգապետի բնակարանը, դուրս կանչեցին նրան և պահանջեցին ձերբակալել մարդասպանին և խուզարկել շուկային կից մզկիթը, ուր նկատվել էին զինված թուրքեր: Սակայն նահանգապետը հուսադրեց ու ցրեց նրանց: Շուկան դատարկվեց, հայերը դիմեցին դեպի հայոց թաղը, թուրքերը դեպի թուրքական թաղը: Այս իրարանցման միջոցին այս ու այնտեղ սպանվեցին տասից ավելի հայեր և թուրքեր:

Այս արյունոտ դեպքի ուշագրավ կողմն այն էր, որ կազմակերպվեց մեկ շինծու դատավարություն: Դատը տեղի ունեցավ փետրվարի 6-ին, դատարան չբերվեց ոչ մի թուրք, չհայտնվեց անգամ մարդասպանը՝ դեպքի սկզբնապատճառը: Սակայն կեղծ վկաների ցուցմունքներով դատարան բերվեցին մի հայեր և անարդարացի դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի՝ Լևոն Մելիք-Ղափլանյանը՝ 12 տարով, Սարո և Աղաջան Թաղիանոսյանները՝ 4-ական տարով. և կալանքի դատապարտվեցին Թովմաս և Վարդան Տեր-Օհանյանները՝ 4-ական տարով:

Ահա այս արյունոտ ակտը և անարդարացի դատավարությունն ունեցան իրենց ծանր հետևանքը: Դրանք առաջ բերեցին մինչև այդ կողք-կողքի խաղաղ ապրող երկու ժողովուրդների մեջ անվստահություն, թշնամանք և միմյանցից խորշում: Շատ հայ ընտանիքներ, որոնք ապրում էին թուրքական թաղում, տեղափոխվեցին հայկական թաղը, ինչպես և շատ թուրք ընտանիքներ, որոնք ապրում էին հայկական թաղում, տեղափոխվեցին թուրքական թաղ:

Սև հարյուրակային ռեակցիան հասավ իր նպատակին. նա սկիզբ դրեց ազգամիջյան մի այնպիսի հարաբերության, որը կարելի կլինի ամեն անգամ հրապարակ բերել և նողկալի ու դավադիր արյունոտ ակտեր կազմակերպել:

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ. ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻՆ ԵՎ ՊԵՏՐՈՍ ՄԵԾԸ

1880-ական թվականներին տեղի ունեցան հիշյալ դեպքերը՝ 1883 թ. մարտի 19-ին Բրաժնիկովին հասցրած ապտակը և նրա կապակցությամբ կատարված խուզարկություններն ու աքսորումները, 1885 թ. մարտի 13-ին հայոց ծխական դպրոցների փակումը և 1888 թ. հունվարի 5-ին հայ-թուրքական ընդհարումը, այդ երեք ակտերը թելադրեցին թերթելու հայ ժողովրդի պատմության նորագույն էջերը և պարզելու Հայկական հարցի ծագումն ու ընթացքը ռուսական ցարերի օրոք և հետագայում: Իմ կատարած պրպտումները բացեցին հետաքրքիր դրվագներ. շոշափենք դրանք համառոտակի:

XVII դարի երկրորդ կեսին, 1670-ական թվականներին, Հայկական հարցի հորիզոնում հրապարակ է գալիս մի հետաքրքիր

անձնավորություն. դա մեր նորագույն պատմության և հայ մտավոր շրջանում հայտնի դարձած Իսրայել Օրին[1] էր:

Ծագումով հայ, Պռոշյան հայտնի իշխանական տոհմից սերված, ծնվել է Ղափանի[2] շրջանի գյուղերից մեկում:

Իսրայել Օրին դեռևս 20 տարեկան հասակում գնում է Պոլիս, այնտեղից անցնում Ֆրանսիա, ապրում է այդտեղ ամբողջ 12 տարի, մտնում է զինվորական ծառայության մեջ, և որպես սպա մասնակցում է ֆրանս-անգլիական պատերազմին, գերի է ընկնում անգլիացիների ձեռքը, իսկ գերությունից ազատվելուց հետո այլևս Ֆրանսիա չի վերադառնում, այլ գնում է Դյուսելդորֆ քաղաքը և այնտեղ էլ բնակություն հաստատում:

Այդ ժամանակ Գերմանիան իրենից ներկայացնում էր մի շարք անկախ իշխանություններ, որոնցից մեկը, նաև ազդեցիկը, որ կոչվում էր Պֆալցի իշխանություն, կոչվում էր նաև Հռենոսյան իշխանություն՝ տարածված լինելով Հռենոս գետի ափերին:

Պֆալցի իշխանության գլուխ կանգնած էր Հովհան Վիլհելմը[3], որ կրում էր կուրֆյուրստ[4] տիտղոսը՝ հանդիսանալով ամենազդեցիկ իշխանություններից մեկը Եվրոպայում[5]:

Իսրայել Օրին ապրելով Դյուսելդորֆում, մտնում է ծառայության, վարում է կոմիսարի պաշտոն մի շարք քաղաքներում և շնորհիվ այդ պաշտոնի, մոտիկ բարեկամական կապեր է հաստատում Հովհան Վիլհելմի հետ: Այս հանգամանքը առիթ է հանդիսանում, որ Օրին մանրամասն պատմի Հովհան Վիլհելմին

---

[1] Իսրայել Օրի (1658–1711 թթ.), հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ:

[2] Կապան:

[3] Հովհան (Յոհան)-Վիլհելմ Պֆալցիացի (գերմ.՝ Johann Wilhelm von der Pfalz, 1658–1716), Պֆալցի և Նոյբուրգի պֆալց-կոմս-հերցոգ (1679 թ.), ինչպես նաև Հռոմեական սրբազան կայսրության գանձապահ:

[4] Կուրֆյուրստ (գերմ.՝ Kurfürst, բառացի նշանակում է՝ «ընտրող իշխան»): Հռոմեական սրբազան կայսրությունում կոչվել է կայսերական իշխան (կայսերընտիր իշխան), որը կրողներին, որոնք սկզբնապես յոթն էին, սկսած XIII դարից մինչև 1806 թ. իրավունք էր վերապահվում Հռոմեական սրբազան կայսրության կայսրի ընտրությունը:

[5] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, էջ 512:

հայ ժողովրդի ծանր վիճակի մասին Պարսկաստանի տիրապետության տակ և թե ինչպես պարսկական Հայաստանը[1] կարող է հեշտությամբ ազատվել, եթե այդ գործի գլուխ անցնի եվրոպական մի հայտնի իշխան: Հայաստանը կարիք չունի ոչ դրամի և ոչ էլ զինական ուժի. Հայաստանն այդ բոլորն ունի, նրան պակասում է մի բան՝ մի հայտնի անուն, որի հեղինակության տակ կծավալվի ու կկատարվի գործը:

Պատմում է Իսրայել Օրին Հովհան Վիլհելմին այս ամենը, և համոզում նրան հանձն առնել այդ գործի ղեկավարությունը: Եվ այս գործի համար Հայաստանը վարձահատույց կլինի իշխանին իր թագով:

Հովհան Վիլհելմը համոզվում է ստանձնել այդպիսի դիվանագիտական ձեռնարկում, բայց մի պայմանով, որ Օրին կարողանա ներկայացնել հայ ժողովրդի ղեկավար իշխանների կողմից վավերացված դիմում, ուստի Օրին Պոլսի վրայով ուղևորվում է Հայաստան:

Նա 1699 թ. օգոստոսի 4-ին հասնում է Էջմիածին, ապա ճանապարհվում է դեպի Գանձասար, այդ երկու միաբանությունների միջոցով փորձում է գլուխ բերել գործը, բայց չի հաջողվում: Սակայն նրան հաջողվում է Սիսիանի Անգեղակոթ գյուղում Մելիք Սաֆրազի ոստանում համախմբել Սյունյաց տասը մելիքների: Այստեղ մելիքների առաջ Օրին բացում է իր ծրագիրը: Առաջին հարցն այն էր, որ մելիքները դիմումով հայտնեն կաթոլիկական դավանանք ընդունելու մասին[2], որի հետ հրաժարվեցին համաձայնել Էջմիածնի և Գանձասարի միաբանությունները:

Մելիքները համաձայնում են ընդունել նոր դավանանք. պարսկական հալածանքները և այդ հալածանքներից ազատվելու տենչը նրանց թելադրում է ընդունել առաջարկը:

Անգեղակոթի խորհրդակցությունը որոշում է ու կազմում երեք միանման դիմում.

---

[1] Արևելյան Հայաստանը:
[2] Հովհան Վիլհելմը հայտնի էր որպես մոլի կաթոլիկ:

1. Հռոմի պապին, որով ցանկություն են հայտնում ընդունել կաթոլիկական դավանանք:

2. Հովհան Վիլհելմին, որով առաջարկում են Հայաստանի թագը: Նախ կուրֆյուրստը կուղարկի իր եղբայր Կարլոսին օգնական զորքով և երբ ծրագիրը կիրագործվի, երբ Հովհան Վիլհելմը մուտք կգործի Հայաստան:

3. Ռուսական կայսր Պետրոս Մեծին[1], որին խնդրում են որպես քրիստոնյա ժողովուրդների պաշտպան, օգնության գալ հայ ժողովրդին:

Իսրայել Օրին զինված այդ երեք դիմումներով, նաև տասը մելիքների լիազորագրով, որում ասված էր, թե Իսրայել Օրին հայտնի տոհմի զավակ լինելով օժտված է իշխանական բարձր հատկություններով, ընտրված է վարելու և գլխավորելու հայ ժողովրդի դատը եվրոպական մեծ տերությունների առաջ:

Եվ Օրին ավարտելով իր առաքելությունը, գոհ սրտով թողնում է Անգեղակոթն ու վերադառնում Եվրոպա:

Նախ կանգ է առնում Դյուսելդորֆում, ներկայանում կուրֆյուրստին, զեկուցում իր տարած աշխատանքների և նրանց հետևանքների մասին, ներկայացնում է մելիքների տված լիազորագիրը և մելիքների գրավոր դիմումն ու կուրֆյուրստին բարձր տիտղոսի արժանացնելու համաձայնությունը:

Եվ կուրֆյուրստը բավարարված անցնում է գործի: Օրին ստանում է հանձնարարական նամակներ. նախ գնում է Հռոմ, ներկայանում պապին[2], որը ցույց է տալիս Օրիին սիրալիր ընդունելություն: Ապա անցնում է Վիեննա՝ եվրոպական քաղաքականության առաջնակարգ կենտրոններից մեկը: Օրին ներկա-

---

[1] Պյոտր I Մեծ Ռոմանով (1672–1725 թթ.), համայն Ռուսիայի թագավոր և համառուսաստանյան առաջին կայսր (1721 թվականից):

[2] Ի նկատի ունի Կղեմենս XI պապին (լատ.՝ Clemens PP. XI, 1649–1721 թթ.), որը գլխավորել է կաթոլիկ եկեղեցին 1700–1721 թթ.:

յանում է կայսերը[1], որը նրան բարեհաճ է ընդունում, սակայն խորհուրդ է տալիս դիմել ռուսական ցարին, որից կախված է գործի հաջողությունը: Ըստ որում ծրագրված արշավանքը կատարվելու է Ռուսաստանի վրայով: Ուստի Օրին վերադառնում է Դյուսելդորֆ, վերցնում է կուրֆյուրստից Պետրոս Մեծի անունով հանձնարարական և ճանապարհվում է դեպի Ռուսաստան:

1701 թ. հունիսի 30-ին կոխելով սահմանը և հասնելով Մոսկվա, Օրին փորձում է անմիջապես ներկայանալ կայսերը, բայց չի հաջողվում: Կայսերը զբաղեցնում էր Շվեդիայի[2] կողմից նկատվող սպառնալիքը: Սակայն Օրուն արքունիքում լավ վերաբերմունք են ցույց տալիս, հատկացնում են հատուկ կացարան և ամեն տեսակի հարմարություններ: Օրուն ընդունում և մանրամասն ծանոթանում նրա ծրագրին արտաքին գործերի վարիչ Գոլովինը[3] և ներկայացնում ցարին: Ցարը ծանոթ լինելով Հայկական հարցին, նշանակում է ընդունելություն, սակայն շատ ուշ:

Ընդունելությունը տեղի է ունենում աշնանը: Օրին ներկայանում է Պետրոս Մեծին որպես կուրֆյուրստի դեսպան և մատուցում ընծաներ: Ընդունելությունը միանգամայն գոհացնում է Օրուն, բայց նոյեմբերի 10-ին հայտարարված կառավարության պատասխանը նրան չի բավարարում: Ուստի նա խնդրում է հայտնել, արդյոք ցարը խոստանու՞մ է ստանձնել հայ ժողովրդի

---

[1] Ի նկատի ունի Լեոպոլդ I-ին (գերմ.՝ Leopold I, 1640–1705 թթ.): Նա թագավորել է 1658–1705 թթ. և կրել է Հռոմեական սրբազան կայսրության կայսրի տիտղոսը:

[2] Ի նկատի ունի Հյուսիսային պատերազմը (1700–1721 թթ.), որն ավարտվում է Շվեդիայի պարտությամբ: Սկզբնապես պատերազմը մղվում էր Հյուսիսային միության (Ռուսաստան, Ռեչ Պոսպոլիտա, Դանիա և Սաքսոնիա) և Շվեդիայի միջև: Հետագայում մարտական գործողություններին մասնակցում են այլ պետություններ ևս: Պատերազմն ավարտվում է 1721 թ. Նիշտադտի հաշտության պայմանագրով, որով Ռուսաստանին են անցնում մերձբալթյան զգալի տարածքներ: Ռուսաստանը դառնում է Եվրոպայի առաջատար տերություններից մեկը:

[3] Գոլովին Ֆյոդոր Ալեքսեյի (1650–1706 թթ.), ռուս դիվանագետ և պետական գործիչ, գեներալ-ֆելդմարշալ, գեներալ-ծովակալ, կոմս:

ազատության հարցը: 1702 թ. մարտ ամսին ցարը հրամայում է հուսադրել Օրուն, որ շվեդական պատերազմը հաջող վերջացնելուց հետո, ինքն անձամբ կզբաղվի այդ հարցով:

Օրին տեսնելով, որ ռուս-շվեդական պատերազմը ձգձգվելու է, մյուս կողմից իսպանական գահի ժառանգության շուրջը ծագել է պատերազմի սպառնալիք, որում շահագրգռված է նաև կուրֆյուրստը, որոշում է վերադառնալ հայրենիք, բայց դեսպանական լիազորություններով, ուստի ձեռք բերելով ռուսական գնդապետի աստիճան և նամակ վերցնելով ցարից կուրֆյուրստի անունով, ուղևորվում է Դյուսելդորֆ՝ Մոսկվայում կորցնելով երեք տարուց ավելի ժամանակ:

Կուրֆյուրստը Օրու խնդրանքով Հռոմ ուղարկելով հատուկ մարդ, պապից ստանում է Օրու անունով պատշաճ դեսպանական լիազորություն և նամակ Պարսից շահի[1] անունով, որով պապը միջնորդում է դադարեցնել քրիստոնյան հպատակների նկատմամբ տեղի ունեցող բռնությունները: Բացի այդ, վերցնում է նույն բովանդակությամբ Պարսից շահի անունով մեկ նամակ ևս կուրֆյուրստից:

Այդ կարևոր փաստաթղթերը վերցրած և, որոշած լինելով Աստրախանում կազմակերպել մեկ հայկական գունդ, մեկնում է Ամստերդամ, գնում է այնտեղ ապագա գնդի համար 15–20 հազար ռուբլու զենք և հագուստ ու վերադառնում է Մոսկվա:

Օրին Մոսկվայում կազմակերպում է 50 հոգուց բաղկացած դեսպանություն, որի կազմի մեջ կային հայ, ռուս, ֆրանսիացի, շվեդացի, գերմանացի, հոլանդացի, լեհ և այլոք: Ստանում է թույլտվություն Ամստերդամում գնած զենքն առանց մաքսի Աստրախան ուղարկելու համար և մեկ նամակ շահի անունով Պետրոս Մեծի անունից գրված:

---

[1] Այդ ժամանակ Պարսկաստանի շահն էր Հուսեյին I-ը (1657–1726 թթ.):

Եվ ահա այսպիսի պատրաստություններով ու մեծ շքախմբով 1707 թ. հունիսին Օրին թողնում է Մոսկվան և ճանապարհ ընկնում:

Այդ ժամանակին հատուկ ճանապարհի դժվարությունները հաղթահարելով, վերջապես Օրին շքախմբով հասնում է Շամախի: Օրու շքախմբի բազմամարդությունն ու տարազների բազմազանությունը մեծ հետաքրքրություն, անգամ մտավախություն են առաջ բերում, մանավանդ, երբ հայտնի է դառնում, որ դեսպանության ղեկավարը մեկ հայ է և այն էլ պարսկահպատակ՝ հայտնի իշխանական տոհմից:

Օրին ստիպված կանգ է առնում Շամախիում և այն էլ շատ երկար, չնայած իրեն հայտարարել էր ռուսական դեսպան: Շամախու խանը հայտնում է Օրուն, որ նա գալու մասին պետք է գրի շահին և պատասխան ստանալուց հետո միայն թույլատրի շարունակել ճանապարհը:

Շահի պատասխանը ուշանում է, որի պատճառը լինում է այն, որ Սպահանի ֆրանսիական առևտրական ներկայացուցիչ Միշելն[1] այդ դեսպանության նկատմամբ շահին երկյուղ է ներշնչում պետության հանդեպ ինչ-որ վտանգ գուշակելով:

Սակայն երկար ձգձգելուց հետո, հաշվի առնելով Պետրոս Մեծի տարած հաղթությունը Շվեդիայի հանդեպ, շահը ստիպված է լինում թույլ տալ դեսպանությանը շարունակելու ճանապարհը:

Եվ 1709 թ. կեսերին Օրին իր շքախմբով մուտք է գործում Պարսկաստանի մայրաքաղաքը՝ Սպահան:

Սուլթան-Հուսեյին շահը, չնայած իր ներքին մտավախությանը, Օրիի դեսպանությանն ընդունում է մեծ պատիվներով և Պետրոս Մեծին հղում պատասխան նամակ, որով հայտնում էր, թե թեպետ հիշյալ քրիստոնյա ժողովրդների մեջ կան տգետներ,

---

[1] Նա և ֆրանսիացի միսիոներները սադրիչ լուրեր են տարածում, թե իբր Ի. Օրին կեղծ դեսպան է և նրա իրական նպատակը հայկական թագավորության վերականգնումն է:

որոնք մեր պետության արժանավորությունը նկատի առնելով, պիտի արժանի պատիժ կրեին իրենց վատ արարքների կամ վատ ուղղության համար, բայց Ձեր բարեկամական նամակը հրավիրում է մեզ ներել հիշյալ ժողովուրդների բոլոր արարքներն ու մեղքերն այն պայմանով, որ նրանք այսուհետև այլևս այդպիսի սխալների մեջ չընկնեն:

Օրին Սպահանից վերադառնում է Շամախի 1709 թ. սեպտեմբերին և ռուսաց կառավարությունից խնդրում է նավեր Աստրախան ճանապարհվելու համար:

Սակայն Օրին զբաղվելով մի մեռած ռուս վաճառականի գույքերը հափշտակումից փրկելու գործով, Շամախիում անց է կացնում մինչև 1710 թ. վերջերը:

Վերջապես նա թողնում է Շամախին և հասնում է Նիզովոյ նավահանգիստը, բայց այստեղ ծագում են նոր դժվարություններ: Օրին Պետրոս Մեծի հանձնարարությամբ իր հետ Մոսկվա էր տանում գործվածքների և ասեղնագործի մեջ վարժ քսան հայ ընտանիքներ՝ անհրաժեշտ նյութերով, իր հետ տանում էր զանազան ընծաներ և 25 ընտիր ձի հատկապես Պետրոս Մեծի համար:

Այդ բոլորը փոխադրելու համար Օրին խնդրել էր չորս նավ, բայց ստանում է մայն երկուսը, ուստի ձիերը ուղարկելով ցամաքային ճանապարհով, ինքը ճանապարհվում է նավերով: Սակայն այն նավը, որի մեջ գտնվում էր Օրին, ճանապարհին խորտակվում է և նա ստիպված է լինում վերադառնալ Նիզովոյ, ուր հարկադրված է լինում մնալ նորից երկար ժամանակ:

Այն միջոցին, երբ Օրին ամբողջապես կլանված Պարսկաստանի ծանր ու դաժան լծից հայ ժողովրդին ազատելու հոգսերով և ամիսներ, մինչև անգամ տարիներ էր մաշում դժվարին ճանապարհներին՝ Մոսկվայից դեպի Սպահան ու հետադարձ, Ռուսաստանի համար ստեղծվել էին միանգամայն նպաստավոր պայմաններ: 1709 թվին Պոլտավա քաղաքի մոտ շվեդները մեծ

պարտություն կրեցին և նրանց Կարլոս թագավորը ստիպված եղավ փրկություն գտնել Թուրքիայում:

Պետրոս Մեծի այդ հաջողությունը մեծ տպավորություն գործեց Արևելքում: Թուրքիայի լծի տակ հեծող քրիստոնյաները դիմում էին Պետրոս Մեծին խնդրելով գալ և իրենց ազատել ծանր լծից:

Մեծ դժվարություններ հաղթահարելով, 1711 թվի ամռանը վերջապես Օրին հասնում է Աստրախան: Եվ մինչև այդ ամիս կհասցներ իր գործերը կարգավորել ու Մոսկվա մեկնել, մահը վրա հասավ:

Պարսկական դաժան տիրապետության տակ հալածական հայ ժողովրդի ծոցից ծնունդ առած Իսրայել Օրին, շնորհիվ իր արտակարգ տաղանդի, անսպառ եռանդի և նուրբ քաղաքականության՝ հաստատելով կապեր Դյուսելդորֆի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի, Ավստրիայի կայսր Լեոպոլդի, Հռոմի պապի, և վերջապես ռուսական ցարերից ամենատաղանդավորներից մեկի՝ Պետրոս Մեծի հետ և նրանց ծանոթացնելով Հայկական հարցին, որոնումների կես ճանապարհին անսպասելի մեռնում է Աստրախանում և թաղվում է այնտեղի հայոց եկեղեցու գավթում:

ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԱՏԵՐԻՆԱ II

Հովհաննես Հովակիմի Լազարյան

Իսրայել Օրու մահով նրա ձեռնարկած գործը չմեռավ, թեև միջազգային նոր ծագած խնդիրների հետևանքով, խնդիրներ՝ կապված նախ Պարսկաստանի, ապա Թուրքիայում տեղի ունեցող շարժումների և նրանց հետ առժամանակ որոշ համաձայնությունների գալու հետ, Հայկական հարցը թե Պետրոս Մեծի և թե նրա հաջորդ գահակալների օրոք, կարելի է ասել, քնեց, բայց նորից հրապարակ եկավ, այս անգամ Եկատերինա II-ի[1] օրոք:

Ռուսաստանի համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ: Դրված էր խնդիր առաջ շարժվելու, գրավել Ղարաբաղը և Արարատյան երկիրը: Մի ծրագիր, որում հայ ժողովուրդն ունենալու էր իր դերը:

Այս անգամ Հայկական հարցով հրապարակ եկան երկու անձնավորություններ՝ Հովսեփ արքեպիսկոպոսը[2]՝ Արղությանների տոհմից և Հովհաննես Լազարյանը[3]՝ Լազարյանների տոհմից:

Այդ երկու անձնավորությունները՝ ներշնչված ստեղծված տրամադրություններից, ներկայացրին Եկատերինային նախո-

---

[1] Եկատերինա II Մեծ (1729–1796 թթ.), ռուսական կայսրուհի (1762–1796 թթ.):

[2] Արղության Հովսեփ (Արղության-Երկայնաբազուկ, 1743–1801 թթ.), արքեպիսկոպոս, ազգային-ազատագրական շարժման գործիչ: Սերել է Զաքարյանների իշխանական տոհմից: 1773 թ.՝ ռուսահայերի, իսկ 1780 թ.՝ ղրիմահայերի հոգևոր առաջնորդ: 1800 թ. հուլիսի 28-ին ցար Պավել I-ի հրովարտակով ճանաչվել է Ամենայն հայոց կաթողիկոս, սակայն չի օծվել. էջմիածին գնալու ճանապարհին՝ Թիֆլիսում, հիվանդացել է ու վախճանվել:

[3] Լազարյան Հովհաննես (1786–1858 թթ.), հայ ազգային-ազատագրական և մշակութային գործիչ: Նրա և ժառանգների օժանդակությամբ Մոսկվայում հիմնադրվում է Լազարյան ճեմարանը (1815 թ.):

ռոք պատրաստված մեկ ընդարձակ ծրագիր անկախ Հայաստան ձևակերպումով:

Ծրագիրը նման էր այն ծրագրին, որը Իսրայել Օրին կազմել և ներկայացրել էր կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին և Պետրոս Մեծին:

Այս երկու հայ ներկայացուցիչները բանակցությունները վարում էին Եկատերինայի պալատական երկու հայտնի անձնավորությունների՝ մեծ զորավարի հռչակ վաստակած Սուվորովի[1] և Եկատերինայի մտերիմ իշխան Պոտյոմկինի[2] հետ:

Եկատերինային ներկայացվեց անկախ Հայաստանի ծրագիրը՝ Հայաստանի քարտեզով հանդերձ: Սկսվեց եռուն աշխատանք. պետք էր առաջ քաշել հայ ժողովրդի հնարավոր ուժերը, միջոցները, պարենն ու պաշարը և մանավանդ երկրի, տեղանքի և հաղորդակցության միջոցների հետ ծանոթությունը: Իսկ այդ բոլորի համար անհրաժեշտ էին խոստումներ և այն էլ մեծ խոստումներ:

,Ղարաբաղից կազմել փոքրիկ Հայաստան, ապա նրան միացնել մեծ Հայաստանը (Արարատյան աշխարհը), այսպիսով ստեղծել մեկ քրիստոնյա անկախ պետություն, որի կորիզը պետք է լիներ Ղարաբաղը:

Եվ այսպիսի հայտարարություններ արվում էին ոչ միայն բերանացի, բանակցությունների ընթացքում, այլև կրկնվում էին գրագրությունների մեջ:

«Ասիայում կվերանորոգվի մի քրիստոնեական պետություն՝ համաձայն Ձեր կայսերական մեծության խոստումների, որոնք իմ միջոցով հաղորդված են հայ մելիքներին»,– գրում էր իշխան Պոտյոմկինը Եկատերինային այս խոսքերը:

---

[1] Սուվորով Ալեքսանդր Վասիլիի (1730–1800 թթ.), ռուս զորավար, գեներալիսիմուս: Ռուսաստանի ազգային հերոս, ռուսական ռազմարվեստի հիմնադիրներից:

[2] Պոտյոմկին Գրիգորի Ալեքսանդրի (1739–1791 թթ.), ռուս պետական գործիչ, կոմս, գեներալ-ֆելդմարշալ:

Իսկ իշխան Պոտյոմկինի ազգական գեներալ Պոտյոմկինը[1], որը վարում էր Յուսիսային Կովկասի և՛ կառավարչի ու՛ զորքերի հրամանատարի պաշտոնը, և շարժվում էր իշխան Պոտյոմկինի հրահանգներով, հայ ժողովրդին խրախուսելու, եռանդի բերելու և սպասվող արշավանքին ամեն տեսակի միջոցներ տրամադրելու նպատակով Հայոց կաթողիկոս Ղուկասին[2] 1783 թ. հունիսի 2-ի գրած նամակը սկսում է հետևյալ խոսքերով.

«Աստծուց լուսավորված և շնորհներով ու հրաշքներով սրբագործված Արարատյան աթոռի հռչակավոր և խոհեմազարդ Ղուկաս կաթողիկոսին, Մեծ և Փոքր Հայաստանների բարձրագույն հովվապետին, իմ ողորմած տիրոջը»: Ահա այդ նամակի մեկ հատվածը.

«Քրիստոնեական բարերար կրոնի մասին ջերմեռանդությամբ հոգացող, հայոց ազգի վրայից զազրելի լուծը խորտակելու համար աշխատող իմ հովանավոր և գլխավոր ազգական, Նորին պայծառափայլություն իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինը, որ կայսերական գահի հովանու տակ, ամենայն վստահությամբ մեզ վրա թագավորող ինքնակալուհու կողմից կառավարում է և իրեն հանձնած գործերը, և զենքի ուժը, վաղուց արդեն մտադիր է ազատել հայերին նրանց մշտապես կրծող անօրինության ծնոտներից: Ես՝ ընտրված լինելով կատարելու այս մեծ մտադրությունները, ուրախության հրճվանքով պատրաստվում եմ կատարելու և ամենաբարձրյալի տնօրինությունը և նրա սիրեցյալ օծյալի կամքը և Ձեր և իմ հովանավորի մտադրությունները: Բարեբախտ կլինեմ ես, եթե աստծու ձեռքը, որ օրհնում է մեծ Եկատերինայի բոլոր մտադրությունները, առաջնորդի ինձ հաջողությամբ ի կատար ածելու առաջիկա մեծ գործերը: Աջակցեք և Դուք, ամենահարգելի հովիվ, այսքան աստվածահաճո և օգտակար գործին: Ձեր ջերմեռանդությունը

---

[1] Պոտյոմկին Յակով Ալեքսեյի (1741–1810 թթ.), գեներալ-մայոր, գաղտնի խորհրդական, իշխան Գ. Ա. Պոտյոմկինի հեռավոր ազգական:
[2] Ղուկաս Ա Կարնեցի, Ամենայն Հայոց կաթողիկոս 1780–1799 թթ.:

հավատի մեջ, Ձեր բարձրագույն աստիճանի արժանավորությունը, Ձեր մեծ սրտի ձեռքերը թող լինեն հայ ազգի սրտերն ուղղողը: Կանչեցեք նրանց, թող ամենքը գան Մեծ Եկատերինայի ամուր վահանի տակ: Թող հաստատուն հույս դնեն նրա անհաղթելի զենքի վրա, թող սրտի ջերմությամբ գան ճաշակելու այն երջանկությունը, որ վայելելու են բոլոր ազգերը նրա օրհնյալ ձեռքի տակ»[1]:

Խոստումներ և հավաստիացումներ, սակայն ոչ կայսրուհու ստորագրությամբ և ոչ էլ պալատական ամենաազդեցիկ անձնավորության ստորագրությամբ, այլ մեկ զորավարի ստորագրությամբ:

Գլորվեց նորից մեկ ժամանակաշրջան, այս անգամ նույնպես անկախ Հայաստան ստեղծելու հարցը, նաև Հայկական հարցը, մնաց հարց և սրտառուչ խոստումներ, և այն ջանքերը, որ գործ դրին Հովսեփ արքեպիսկոպոսը և Հովհաննես Լազարյանը, նաև հայ ժողովրդի իղձերը, մնացին անկատար:

Անհրաժեշտ է այստեղ մի պահ կանգ առնել և խոսել մի դիտարժան հանգամանքի մասին, այն, որ ամեն անգամ, երբ Ռուսաստանի կամ Թուրքիայի մեջ հարաբերությունները սրվել են, ավելի ճիշտ ամեն անգամ, երբ ռուսական դիվանագիտությունն իր ուշադրությունը հառել է դեպի հարավ, դեպի երկրի սահմանների ընդարձակումը ի հաշիվ հետզհետե թուլացող հիշյալ երկու մահմեդական պետությունների, առաջին հերթին առաջ է քաշվել այդ երկու պետությունների լծի տակ տառապող հայ ժողովրդի պաշտպանության խնդիրը, այլ խոսքով Հայկական հարցը:

Սկսվում էին սիրաշահումները տառապող հայ ժողովրդին, հրապարակ էին բերվում հայերի նկատմամբ հիշյալ պետությունների կողմից գործադրվող բռնությունների փաստեր, դրանք դարձվում էին դիվանագիտական խնդիրներ, և դա շարունակ-

---

[1] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, էջ 840–841:

վում էր այնքան, մինչև հարաբերությունները պետությունների մեջ գնում հանգում էին որոշ կետի, որից հետո Հայկական հարցը հետզհետե մղվում էր հետին պլան և մոռացվում:

ՆԻԿՈԼԱՅ Ի-Ը

Հայ ժողովրդի նկատմամբ ռուսական մի երկու գահակալների վարած քաղաքականությունը լուսաբանելու համար անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել ցար Նիկոլայ Ի-ի[1] վրա:

Այդ ցարը խիստ ինքնատիպ, միաժամանակ արտասովոր անձնավորություն էր, որը ռուս ժողովրդի պատմության մեջ թողել է մեկ սև էջ:

Ռոմանովների տան գահակալներից և ոչ մեկը չի ժառանգել այնպիսի բացասական որակում, ինչպես Նիկոլայ Ի-ը:

Բավական է արտասանել նիկոլևյան ռեժիմ դարձվածքը, որ լսողը սոսկում զգա, եթե նա անծանոթ է այդ ցարի գործունեության հետ:

Նրա հասկացողությամբ պետությունը մի զորանոց է, որում ամենքը պիտի շարժվեն մեկ հրամանով: Նա խստապահանջ էր, անզիջում, ցասումնալից, չներող, քինախնդիր, որի ստվերից անգամ սարսափում էին:

Անխնա, անողոք էր մարդկանց հանդեպ, բայց ավելի անողոք ազատամիտների նկատմամբ: Նրա անձնական քնությունների և մեղադրական խիստ ակտերի բովով անցել են դեկաբրիստների լավագույն ներկայացուցիչները և կախաղան բարձրացել:

«Դաժան, բթամիտ, երբեք գրքեր չկարդացած Նիկոլայը խիստ հետևում էր պրակտիկ կարգերին: Երբ նահանգապետներից մեկը հաստատման էր ներկայացնում երկու մաքսանենգնե-

[1] Նիկոլայ Ի Ռոմանով (1796–1855 թթ.), ռուսական կայսր (1825–1855 թթ.):

որի մահապատժի որոշումը, Նիկոլայ I-ը դնում էր հետևյալ մակագրությունը՝ մեղավորներին անցկացնել 1000 մարդու միջով 12 անգամ[1]: Մեղավորներին ծեծում էին մինչև մահվան դուռը հասնելը, իսկ Նիկոլայը պարծանքով ասում էր՝ «Փառք աստծո, մահվան պատիժ մեզանում չի եղել և ես էլ չեմ գործադրի»:

Ահա այն որակումը, որ տվել են Նիկոլայ I-ին նրա կենսագիրները:

Սակայն ռուսական ներքին կարգերի նկատմամբ այս աստիճան դաժան ցարն իր թագավորության 12-րդ տարում՝ 1837 թ. հոկտեմբեր ամսին, նոր նվաճած երկրամասերը տեսնելու նպատակով, կատարում է ճանապարհորդություն, որի ընթացքում այցելում է նաև էջմիածին, Երևան և Թիֆլիս:

Այդ այցելության վերաբերյալ նյութերը բերված են Ա. Երիցյանի «Կովկասյան Հայքը 19-րդ դարում» երկհատորյա աշխատության մեջ, որում Նիկոլայ I-ը ներկայացվել է այլ կերպ:

Այդ միջոցին Կովկասի կառավարչապետի պաշտոնը վարում էր կոմս Ռոզենը[2], Երևանի նահանգապետի պաշտոնը՝ իշխան Բեհբությանը, իսկ էջմիածնի կաթողիկոսի գահի վրա նստած էր Կարբեցի Հովհաննեսը[3]:

Երբ Նիկոլայը հասնում է Մաստարա գյուղը, նրան դիմավորում է Երևանի նահանգապետ իշխան Բեհբությանը: Մաստարա գյուղից սկսվում է Արարատյան հարթավայրը:

Նիկոլայի ընդունելության մասին Երիցյանը բերում է հետևյալ նկարագիրը.

«Մտնելով Արարատյան աշխարհը, մեծազոր կայսրը հենց առաջին քայլերից ունկնդիր եղավ բնակչաց բազմաթիվ տրտունջներին և բողոքներին՝ տիրության պաշտոնեից ժողովրդին չափազանց կեղեքելու պատճառով: Գթասիրտ թագավորին

---

[1] Մարմնական պատիժ 12000 մտրակի հարվածներով:

[2] Ռոզեն Գրիգորի Վլադիմիրի (1782–1841 թթ.), գեներալ-համիարգ: 1831–1837 թթ. հանդիսանում էր Կովկասյան առանձին կորպուսի և երկրամասի կառավարչապետ:

[3] Հովհաննես Ը Կարբեցի, Ամենայն հայոց կաթողիկոս 1831–1842 թթ.:

ակնհայտնի ցույց տալու համար իրենց կրած նեղությունները, միամիտ բնակիչները, ռուսաց ոչ լեզու և ոչ օրենք իմանալով, տարօրինակ և պարսկական աշխարհներում գործի դրվող միջոցների էին դիմում: Նոքա փռում էին ճանապարհին չոր խոտ և ցախ ու կրակ էին տալիս այդ կայսեր առաջ, կամենալով ասել թե՝ «ապա մենք էլ այսպես ենք այրվում մեր իշխանավորների ձեռքից»: Սարդարապատ հասած ժամանակ մի հայ ներկայացրեց թագավորին փետուրները փետած մի լերկ և նիհար աքաղաղ: Զարմացած կայսրին բացատրեցին, որ լռիկ-մնջիկ բողոքողը կամեցել է հասկացնել, թե պաշտոնյայք իրենց այդ աքլորի օրին են հասցրել»[1]:

Նիկոլայի ընդունելությունն էջմիածնում եղել է փառահեղ, այդ ընդունելության նկարագրին մեծ տեղ է տրված, ընդունելություն, որից Նիկոլայը շատ գոհ մնացել: Նա այցելել է վանքը, լսել ժամերգությունը և Հովհաննես կաթողիկոսի ողջույնի ճառը, ապա այցելել է տպարանը, դպրոցը, սինոդը և թանգարանը, հյուրասիրվել է վեհարանում և այլն: Սակայն այդ ընթացքում պատահած երկու ուշագրավ դեպք բնութագրում են Նիկոլայի անձնավորությունը:

Վանքի թանկարժեք իրերի տեսությանը վերաբերող նկարագրի մեջ բերված է հետևյալ հատվածը.

«Կայսրը բարեհաճեցավ զննել եկեղեցում հանդես հանած հնությունները: Ն[որին] Մեծությունը, որպես արդեն հիշեցինք, պահանջեց, որ ցույց տան կաթողիկոսական հին և մեծագին թագը, որի հարուստ ակնեղենները կողոպտվել էին կուսակալ բարոն Ռոզենի տիկնոջ ձեռքով: Տեսնելով այդ թագը և հայտնելով իր զարմանքը, որ թանկագին համարված ակնեղենները շինծու են, կայսրը բարոն Ռոզենի ներկայությամբ պատասխան ստացավ, որ ակնեղենները, առաջ, իրավ որ թանկագին էին, բայց, երբ ըստ պահանջման բարոնի տիկնոջ (բարոնեսայի) թա-

[1] Տե՛ս Ա. Երիցեան, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայքը XIX դարում, Թիֆլիս, 1895, մասն Բ, էջ 434:

գը ուղարկվեցավ նորան ի Թիֆլիս, այնտեղից վերադարձավ ահա այսպիսի կեղծվածքներով: Կայսրը այս իրողությունը միառժամանակ լռության տվեց»[1]:

Ավելի ուշագրավը երկրորդ դեպքն է. Նիկոլայը վանքի կարևոր տեղերը շրջագայելուց հետո բարձրանում է վեհարան, և առանձնանալով Հովհաննես կաթողիկոսի հետ, սինոդի պրոկուրորի[2] թարգմանությամբ դիմում է կաթողիկոսին հետևյալ հարցումով.

– Ինչ կամիք խնդրել ինձանից ձեր եկեղեցվո և հոտի բարօրության համար.

– Երկու խնդիրք ունեմ միայն, – պատասխանեց Հովհաննես կաթողիկոսը, մեկն է՝ հզոր պաշտպանություն ցույց տալ Ռուսիո գահին միշտ հավատարիմ եղած հայ ազգին, և երկրորդն է՝ շնորհել իմ եղբոր որդվոց՝ Թևումովներին, ռուսական շքանշաններ, որպեսզի ազնվական դառնան:

– Больше ничего? (Այլևս ոչինչ), – հեգնախառն հարցրեց կայսրը:

– Ոչինչ, պատասխանեց հայրապետը:

– Скромно, оригинально (Համեստ է, բայց յուրօրինակ), – նկատեց կայսրը և տեղից վեր կացավ հայտնապես անբավական:

Նիկոլայը էջմիածնից հետո այցելեց Երևան և իջևանեց Երևանի սարդարի[3] պալատում որը կառուցված էր Հրազդանի ձախափնյա բարձրունքին:

Երևանում նույնպես տեղի ունեցան ուշագրավ դեպքեր:

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 441:

[2] Պրոկուրորը աշխարհիկ պաշտոնյա էր, որը հանդիսանում էր կառավարության ներկայացուցիչը սինոդում:

[3] Պարսկաստանում այդպես են անվանել զորապետին և դիվանագիտական ղեկավարին: Անվանումը ծագում է պարսկերեն ser բառից, որը նշանակում է «գլուխ» և dar -ից, որը նշանակում է «առաջավոր»:

Սարդարի պալատում ճաշի է նստած Նիկոլայը, ճաշին մասնակցում են Ռոզենը, իշխան Բեհբութովը, կոմս Ադլերբերգը[1] և այլ պաշտոնյաներ:

Ճաշի ընթացքում տեղի է ունենում հետևյալ տեսարանը.

«Կայսրը դեռ սեղանի մոտ էր, երբ լսեց պալատի առաջ ժողովված ամբոխի աղմկալից ձայները. «արզմիզ, սոյմելար» («խնդիր ունենք տալու, չեն թողնում»): Այդ ի՞նչ ձայներ են», – հարցրեց կայսրը:

– Ժողովուրդն արտահայտում է իր ուրախությունը Ձեր շնորհաբեր գալստյան պատճառով, – պատասխանեց Ռոզենը: Թագավորը չբավականացավ այդ պատասխանով, և հրամայեց կոմս Ադլերբերգին գնալ իմանալ գործի էությունը: Կոմսը գնաց և կարճ ժամանակից հետո վերադարձավ՝ բերելով հետը բազմաթիվ բողոքագրեր: Ավարտելով ճաշը, կայսրը դուրս գնաց անձամբ լսելու ժողովրդի գանգատները: Ողորմած ուշադրությամբ ունկնդիր եղավ նա բնակչաց բողոքներին այն անիրավության դեմ, որ գործում են Շարուրի գավառապետ ռուսազգի սպա Ֆոն Ռենդելը և Սուրմալուի գավառապետ, սպա Նևերովսկին: Շատ մանր գանգատներ եղան նմանապես իշխան Բեհբությանի դեմ, որը ծանրաբեռնել էր ժողովրդին անտանելի հարկերով և բեգարով: Կայսրը հայտնեց իր անբավականությունը նահանգապետին և իշխ[ան] Բեհբությանը նույն գիշերը հիվանդացավ ու անկողին մտավ[2]:

Այս տեսարանից հետո Նիկոլայը դուրս է գալիս դիտելու Երևանի կավե պարսպապատ բերդը, և զարմացած բացականչում է.

---

[1] Ադլերբերգ Վլադիմիր Ֆյոդորի (1791–1884 թթ.), հեծելազորի գեներալ, կոմս: Արքունիքի նախարար, Փոստային դեպարտամենտի գլխավոր պետ: Ուղեկցել է Նիկոլայ I-ին նրա բոլոր ճանապարհորդություններում:

[2] Երիցեան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայքը XIX դարում, Թիֆլիս, 1895, մաս Բ:

– Սա ոչ թե բերդ է, այլ խեցեղեն մի պտուկ (աման), որի վեր առնելու գրավելու համար չարժեր Պասկևիչին «Կոմս Երևանսկի» անվանել:

Սակայն Նիկոլայի ամենաազդու արարքը տեղի է ունենում Թիֆլիսում՝ նրա այցելության առիթով կազմակերպված զորախաղի ժամանակ:

Զորախաղը նշանակված է լինում Նիկոլայի Թիֆլիս հասնելու հաջորդ առավոտյան, բայց նախքան զորախաղը Նիկոլայը կանչում է իր մոտ Կովկասի վարչական գործերը քննելու և վարչությունը բարեկարգելու նպատակով մի քանի ամիս առաջ Պետերբուրգից ուղարկված հատուկ հանձնաժողովի նախագահ սենատոր, բարոն Գանինին և ծանոթանում է նրանց կատարած գործունեության հետ: Գանինը Ռոզենի ներկայությամբ հայտնում է Նիկոլային, թե Ռոզենի փեսա գնդապետ իշխան Աղեքսանդր Դադիանին[1], որը ֆլիգել-ադյուտանտ[2] է և կարաբիներ կոչվող գնդի[3] հրամանատար, չարաչար անօրենություններ է գործում զինվորների նկատմամբ, քաղցած է պահում նրանց և անտանելի աշխատանքներ է կատարել տալիս իր օգտին, և փաստերով հաստատում է, որ այդ գեղծումները հայտնի են նրա աներ Ռոզենին և որ Ռոզենն այդ բոլորը թաքցնում է բարձրագույն իշխանությունից: Ռոզենը ստիպված է լինում խոստովանել այդ բոլորը և Նիկոլայը հայտարարում է.

– Այդ արդեն չեմ կարող ներել:

---

[1] Դադիանի Ալեքսանդր (1801–1865 թթ.) գլխավորել է «Էրիվանյան» գունդը 1829-ից մինչև 1837 թթ.:

[2] Ֆլիգել-ադյուտանտ (գերմ. Flügeladjutant) կոչումը Ռուսաստանում շնորհվել է արքայի շքախմբի կրտսեր անդամին:

[3] Լրիվ անվանումն է՝ «13-րդ լեյբ-գրենադերական Էրիվանյան ցար Միխայիլ Ֆյոդորովիչի գունդ»: Զորամասը կազմավորվել է 1642 թ. ցար Միխայիլ Ռոմանովի հրամանով: Գունդը լուծարվել է 1918 թ. սկզբին: Խորհրդային Միության մարշալ Բ. Մ. Շապոշնիկովի վկայությամբ, Էրիվանյան գունդը «ռուսական բանակի ամենահին գունդն էր, որը հիմնվել էր ցար Միխայիլ Ֆյոդորովիչ Ռոմանովի (1596–1645 թթ. – խմբ.) օրոք, որի բանակատեղը՝ Թիֆլիսի մոտ էր», տե՛ս Шапошников Б. М., Воспоминания. Военно-научные труды, Москва, 1974, с. 82.

Այդ հայտարարելուց հետո տեղի է ունենում հետևյալը.

– Բախտի բերմամբ նույն օրվա օրահանդեսը պիտի կատարեր հիշյալ իշխ[ան] Դադիանու հրամանատարությանը հանձնված գունդը: Զորքը շարվել էր Մադաթյան կամ Ղաբախ անվանյալ հրապարակի վրա, ուր այժմ Ալեքսանդրյան այգին է: Հանդիսականաց խուռն բազմությունը շրջապատել էր հրապարակը: Բարոն Ռոզենի կինն իր երկու աղջիկներով, որոնցից մեկը իշխ[ան] Դադիանու կինն էր, չնախատեսելով առաջիկա փոթորիկը, միամտաբար եկել նստել էին հայազգի գնդապետ Շամիր Մելիք-Բեգլարյանի տան պատշգամբում, որտեղից շատ լավ պիտի երևար հանդեսը:

Ահա ժողովրդի ուրախ բացականչություններով դղրդաց օդը և մեծամեծներով շրջապատված կայսրն արագ մոտեցավ զորքին: Արքայի ողջունին զինվորները պատասխանեցին բարձրաձայն ու ձիգ ուռայով: Երբ լռություն տիրեց, հրապարակի մեջտեղում կանգնած կայսրը խրոխտ ձայնով գոչեց. «Ռոզե՛ն»: Երբ բարոն Ռոզենը մոտեցավ արքային, Ն[որին] Մեծությունը պահանջեց նաև նորա փեսա Դադիանուն: Մի ահարկու հայացք ձգելով Դադիանու վրա, կայսրը խիստ խոսքերով կշտամբեց նորան իր ապօրինի գործերի համար և հայտնելով, որ նա այլևս արժանի չէ ֆլիգել-ադյուտանտի պատվավոր կոչմանը, հրամայեց վեր առնել իշխ[ան] Դադիանու ուսից ոսկեթել էքսելբանտերը և կախել Ռոզենի ներկա եղող որդվո՝ երիտասարդ սպայի ուսին: Ապա դիմելով աստիճանազուրկ իշխ[ան] Դադիանուն, կայսրը խրոխտ ձայնով հրամայեց «քշել Բոբրույսկ», որ մի բերդ է Ռուսիո Մինսկ անվանյալ նահանգում: Իշխանին թույլ տվին մնաս բարյավ ասելու իր կնոջը, որն այդ ժամանակ ուշաթափ էր եղել Մելիք-Բեգլարյանի պատշգամբում, և ապա նստեցնելով կանխապես պատրաստված կառքը, մի ժանդարմի ուղեկցությամբ անմիջապես ճանապարհ դրին դեպի աքսորատեղին: Մինչ այս բոլորը կկատարվեր, ծերունի բարոն Ռոզենը

գլուխը խոնարհեցրած կայսեր կրծքին՝ աղի արտասուք էր թափում»[1]:

Նիկոլայը նույն 1837 թ. նոյեմբերի 30-ին շրջագայությունից վերադառնալով Պետերբուրգ, Ռոզենին արձակեց պաշտոնից և նրա փոխարեն որպես Կովկասի կառավարչապետ ուղարկեց Գոլովինին[2]:

Ու Նիկոլայ I-ը դեպի հայոց եկեղեցին ու դեպի հայ հոգևորականությունը ցուցաբերեց բարեհաճ վերաբերմունք, նույնիսկ մեծարանք, այդ մենք տեսանք, սակայն նրա օրոք և նրա պալատական շրջանում Անկախ Հայաստանի մասին բացահայտ հիշատակություն տեղի չունեցավ, բացի այդ որոշ հեղինակավոր անձնավորություններ, որոնք կրում էին իրենց մեջ հայ ժողովրդի իղձերն ու ձգտումները, ոչ միայն ուշադրության չէին առնվում ու նրանց տենչանքը անտեսվում էր, այլև այդպիսիները հետզհետե հետ էին մղվում, նույնիսկ հալածվում էին: Այսպիսով Հայկական հարցի նկատմամբ Նիկոլայ I-ի օրոք սկսվում է նոր կուրս: Այդ կուրսի լուսաբանմանն էլ անցնում ենք մենք:

---

[1] Երիցեան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայքը XIX դարում, Թիֆլիս, 1895 թ. մաս Բ, էջ 448:

[2] Գոլովին Եվգենի Ալեքսանդրի (1782–1858 թթ.), գեներալ-համիարզ: 1837-ից մինչև 1842 թ. Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար և Կովկասի կառավարչապետ:

ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1828 թվականը հանդիսանում է հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի դարագլուխ. այդ թվականին Հայաստանի սիրտը կազմող Արարատյան աշխարհը ազատագրվում է պարսկական լծից և անցնում Ռուսաստանի հովանու ներքո:

Պարսկաստանի և Տաճկաստանի մերձավոր շրջաններից տասնյակ հազարավոր հայ ժողովուրդը ձգում է տուն ու տեղ, մշակված դաշտերն ու գուլքը, թոթափում է այդ երկու պետությունների դաժան լուծը և գալիս տեղավորվում է Արարատյան աշխարհում, որը վերջին դարերի ընթացքում Շահ Աբասի տեղահանությունից սկսած, հետզհետե հայազրկվել էր ու ամայացել և սկսում է վերաշինել, վերակենդանացնել Հայաստանի սիրտը՝ իր բուն հայրենիքը: Այսպիսով հայ ժողովրդի առաջնահերթ իղձը կատարվում է:

Սակայն այդ ժողովուրդը կրում էր իր ներսում այլ իղձեր, իղձեր, որոնք գալիս էին անցյալից, որոնք արտահայտվում էին զրույցների, պատմվածքների միջոցով, երգերի ու պարերի միջոցով, աշուղների բերանով, իղձեր, որոնք գալիս էին նույնիսկ մոտիկ անցյալից, ռուսական գահակալների՝ Պետրոս Մեծի, Եկատերինա II-ի օրերից ու խոստումներից:

Եվ ահա Արարատյան աշխարհի նոր վիճակի ստեղծման հետ մեկտեղ սկսում են արթնանալ հիշյալ իղձերը, որի արտահայտիչները հանդիսացան Խաչատուր Աբովյանը[1]՝ ծնված Քանաքեռ գյուղում, Ներսես Աշտարակեցին՝ ծնված Աշտարակ գյուղում:

Ինչպե՞ս է սկսվում և ընթանում այդ երկու անձնավորությունների գործունեությունը:

---

[1] Աբովյան Խաչատուր (1809–1848 թթ.), հայ ականավոր գրող, մանկավարժ, բանաստեղծ և արևելահայ աշխարհաբառ գրականության հիմնադիր:

Ազատագրված Արարատյան աշխարհը սկզբից ևեթ ձևակերպվեց որպես առանձին միավոր և կոչվեց Հայկական մարզ և այդ միավորը ուսումնասիրելու համար Պետերբուրգից ուղարկվեց հատուկ պաշտոնյա[1]: Այդ պաշտոնյան նախ մանրամասն ուսումնասիրեց հայ ժողովրդի պատմությունը սկզբից, Հայաստանի աշխարհագրությունն իր երբեմնի ընդարձակությամբ, հայ գրականությունը, պատմագրությունը, գեղարվեստը, ճարտարապետությունը և այլն: Ապա ուսումնասիրեց Հայկական մարզը տվյալ վիճակում և այդ բոլորը ամփոփեց մի աշխատության մեջ, որն իր ժամանակին ընդունվեց Գիտությունների Ակադեմիայի կողմից, արժանացավ պարգևատրման և տպագրվեց՝ թեև շատ ուշ[2]:

Միաժամանակ կազմակերպվեց հատուկ կառավարչական մարմին, «Հայկական մարզային վարչություն», որը ղեկավարում էր մարզի քաղաքացիական բոլոր գործերը:

Բացի այդ, վերից ուղարկվեցին պաշտոնյաներ, Երևանում՝ որպես մարզի վարչական կենտրոն, նշանակվեցին քաղաքապետ, ոստիկանապետ, ոստիկանների կազմով, գավառապետ և այլ պաշտոնյաներ:

Մարզում ապրող պարսիկ ժողովուրդը ծայրահեղ հետամնաց էր, բնիկ հայ ժողովուրդը դեռևս կրում էր իր վրա պարսկական ճնշումների դրոշմը, իսկ Պարսկաստանից, Տաճկաստանից գաղթած և մարզում հաստատված հայերն ավելի ևս քայքայված ու խղճուկ տեսք ունեին:

Եվ ռուս պաշտոնեության մեջ հետամնաց ու ճնշված զանգվածի նկատմամբ ծագում էր արհամարհանք, միաժամանակ մեծապետական-իշխանական կառավարման տենդ:

---

[1] Շոպեն Իվան Իվանի (1798–1870 թթ.), իսկական պետական խորհրդական, Հայկական մարզի եկամտի և պետական գույքի վարչության պետ: Երիցեան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա, Թիֆլիս, 1894:

[2] Տե՛ս Шопен И., Исторический памятник состояния "Армянской области" в эпоху ее присоединения к Российской империи, Санкт-Петербург, 1852.

Այսպիսով, ազգային իղձերն ու ձգտումները գալիս բախվում են մեծապետական կառավարման տենդին:

Սկզբում լուռ և աննկատելի, ապա հետզհետե ավելի ակնհայտ առաջ է գալիս ազգային իղձերի և ակնկալությունների նկատմամբ ճնշում և հալածանք:

Իսկ առաջին նշավակներ դառնում են Խաչատուր Աբովյանն ու Ներսես Աշտարակեցին, որպես հայ ժողովրդի իղձերի և ակնկալությունների կրողներ:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ո՞վ էր Խաչատուր Աբովյանը

Իր ժողովրդին անհունապես սիրող, նրա վշտերով տառապող, նրա վերքերով տանջվող:

Նա կոչ է անում, տագնապ է հայտարարում, ահազանգում է վրեժ, ցասում, շառաչում:

Ահա Խաչատուր Աբովյանը, ահա նրա ներքին աշխարհը, ահա նրան ալեկոծող փոթորիկը, հեղեղը:

Եվ այս մարդը գնում է Դորպատ, վեց տարի անընդհատ դիտում, ունկնդրում, սովորում և որոշ գիտելիքներ ամբարելով՝ վերադառնում է հայրենիք, ծառայելու իր ժողովրդին:

Նվիրելով իրեն մանուկ սերնդի դաստիարակության գործին, Աբովյանը յոթ տարի անց է կացնում Թիֆլիսում, վարելով Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի պաշտոնը և ապա 1843 թվին փոխադրվում է Երևան, ստանձնելով Երևանի գավառական դպրոցի տեսչի պաշտոնը և հինգ տարի այդ պաշտոնը վարելուց հետո 1848 թվի ապրիլի 2-ին անհայտանում է:

Աբովյանը, վերադառնալով հայրենիք, գտնում է ժողովրդին նույն վիճակում, ինչ վիճակում որ վեց տարի առաջ թողել էր՝

փոփոխություն, առաջադիմություն համարյա տեղի չէր ունեցել: Փոփոխություններ տեղի չէին ունեցել նաև պետական-վարչական հիմնարկություններում, մանավանդ ժողովրդի նկատմամբ պաշտոնեության վերաբերմունքի մեջ:

Աբովյանը վերադարձել էր Դորպատից վերածնված, կրթված, իսկ նրա հայրենիքը մնացել էր նույնը, Աբովյանը բերել էր իր հետ նոր ըմբռնում, նոր խոսք, նոր գործ, իսկ հայրենիքում մնում էր հին ըմբռնումը, հին խոսքը, հին գործը: Այստեղից էլ հակասություն ու պայքար:

Նախ մի քանի խոսք Թիֆլիսում Աբովյանի գավառական դպրոցի տեսչության գործունեությունից:

Աբովյանը փորձել է Թիֆլիսի գավառական դպրոցի ուսուցումը դնել նոր հիմքի վրա, մտցնել դպրոցում նոր համակարգ, նոր մեթոդներ, բայց նրա ձեռքի տակ աշխատող ուսուցիչները չեն հաշտվել այդ նորամուծությունների հետ և սկսել են ոչ միայն արգելքներ ստեղծել, այլև պայքարել և զրպարտություններ հարուցել նրա դեմ: Աբովյանը մեծ ջանք է թափել լեզու գտնելու, համոզելու, գործն առաջ տանելու համար, բայց դա նրան չի հաջողվել և նա պարտվել է:

Իր վիճակի մասին 1843 թվի հուլիսի 20-ին իր բարեկամ Ստեփանոս Նազարյանին[1] գրած նամակում բերում է հետևյալ նկարագիրը. «Յոթ տարի կապված, կաշկանդված մնացի Թիֆլիսում, որտեղ հայ մանուկների այդքան բազմություն կա, առաջ տանել իմ նպատակը, բայց իզուր, ի դերև ելան իմ բոլոր ճիգն ու աշխատանքը. ի դերև ելան բոլոր նպատակներս և ակնկալության հույսը: Հաչաղկոտ ամբարիշտ մարդկանց նախանձը և դժկամությունը վերիվայր տապալեցին նորահիմն շինվածքը և ինձ վերջիվերջո մնաց միայն կյանքի այս վերջին ճանապարհը՝ վերադառնալ հայրենիք, Հայաստան և այնտեղ քչով բավականանալ, գոնե հոգալ ազգակից մանուկների կրթության գործը:

[1] Նազարյան Ստեփանոս (1812–1879 թթ.), լուսավորիչ, գրականագետ: Հրատարակել է «Հյուսիսափայլ» ամսագիրը (1858–1864 թթ.):

Ընթացիկ տարուս օգոստոսի 10-ին պատրաստվել եմ դուրս գալ այստեղից՝ ստացած լինելով Երևանի նահանգական վարժարանի տեսչի պաշտոնը, բայց, թե ովքեր պիտի լինեն իմ պաշտոնակիցները, հայտնի չէ ինձ, այնինչ այստեղ մինչև իսկ համբակները նշանակվում են կրոնագիտության և դժբախտ հայոց լեզվի դասատու՝ ստանալով տարին 200 մանեթ արծաթ, որոնք չեն տալիս աշակերտներին գոնե այնքան ուսում, որ արժենար հարյուր կոպեկ»[1]:

Այստեղ անհրաժեշտ է արձանագրել այն երևույթը, որ Աբովյանը, դպրոցական վարչությունների կողմից ոչ միայն պաշտպանություն և աջակցություն չի գտնում՝ ուսուցչական կազմը թարմացնելու խնդրում, այլ ընդհակառակը, համբակները մնում են իրենց տեղերում, իսկ Աբովյանն արձակվում է իր պաշտոնից և նույն պաշտոնով փոխադրվում Երևան:

Որ Աբովյանը դպրոցական վարչությունների կողմից ոչ միայն աջակցություն չի գտնում, այլև նրա ընդունակություններն ու ձեռնահասությունն անտեսվում ու արհամարհվում էր, վկայում է նրա տրտունջներն արտահայտող հետևյալ դիմումը, որը կցվել էր Երևանի գավառական դպրոցի 1844 թվի ուսումնական մասի տեղեկագրին և ներկայացվել դպրոցների վերատեսչին:

«Ահա 9-րդ տարին է, որ ես ծառայում եմ Անդրկովկասի դպրոցական գործին, ոչ այն նպատակով, որ միայն լրացնեմ ծառայությանս ժամանակը, ստանամ ռոճիկ ու աստիճան և դրա միջոցով ապագայում թևակոխեմ կյանքի մի այլ ասպարեզ: Վաղուց արդեն հայտնի է լուսավորյալ աշխարհին, կարծում եմ, և մեր մերձավոր իշխանությանը, թե ինչու համար ես արժանացել եմ միապետի ողորմածությանը արքունի հաշվով կրթվելու Եվրոպայում և ինչու համար վերադարձել եմ հայրենիք: Իմ յոթնամյա ծառայությունը Թիֆլիսում, իշխանության աչքի առաջ,

[1] Տես Դիվան Խաչատուր Աբովյանի, էջ 80:

չնայելով անընդհատ հարձակումներին և մի քանի ծառայակիցներիս անբարյացակամ վերաբերմունքին, որոնք զինվել էին իմ դեմ իրենց բոլոր զորությամբ՝ անձնական հաշիվներից դրդված, և իմ անշահասեր աշխատանքներն ու իմ եռանդագին ցանկությունը՝ օգտավետ լինել, գոնե իմ հայրենակիցներին հայսկույս Կովկասի, անբասիր են կացուցել ինձ, ինչպես մերձավոր, նույնպես և բարձր իշխանության առաջ: ...Եվ, այնուամենայնիվ, ես ոչ մի անգամ մինչև իսկ իմ մերձավոր իշխանության բանավոր գոհունակության չեմ արժանացել, որպեսզի հավաստիանամ, որ նա իսկապես ուշադիր և բարեհաճ է դեպի ինձ: Միթե՞ ես պ. Վալտերի հետ միասին չեմ աշխատել Թիֆլիսի գավառական դպրոցում ֆրանսերենի դասատվության վրա, այդ լեզվի դպրոցում դասավանդվող առարկաների շարքը պաշտոնապես դասվելուց դեռ երկու տարի առաջ նա արժանացել է աստիճանի, իսկ ես մինչև իսկ բանավոր շնորհակալություն չեմ ստացել»[1]:

Այսպես էր դպրոցական վարչությունների վերաբերմունքը Աբովյանի նկատմամբ Թիֆլիսի գավառական դպրոցում նրա վարած տեսչության տարիների ընթացքում:

Այժմ տեսնենք, թե ինչպես էր ընդառաջում Աբովյանին Երևանի պատասխանատու պաշտոնեությունը նրա դպրոցական աշխատանքում:

Աբովյանը 1845 թվի հոկտեմբերի 11-ին դպրոցում կազմակերպում է հանդիսավոր արարողություն, որին ներկա գտնվելու համար հրավիրում է քաղաքի աչքի ընկնող պաշտոնական անձանց, սակայն նրանցից շատերը չեն գալիս: Այս վերաբերմունքը Աբովյանը համարելով անբարյացակամություն դեպի իր անձը, ուղղում է դպրոցների վերատեսչին հետևյալ բողոք-դիմումը.

«1845 թ. նոյեմբերի 24

---

[1] Տե՛ս Դիվան Խաչատուր Աբովյանի, էջ 144:

Սրանով պատիվ ունեմ զեկուցելու Ձերդ բարեծնության, որ ընթացիկ ամսի 11-ին, կիրակի օրը, դպրոցումս հրապարակական քննություններ և հանդիսավոր ակտ կատարեցի, բայց դպրոցի համար մեծ ցավ եղավ տեսնել, որ քաղաքիս բոլոր հրավիրված աստիճանավորները, որոնց թվում և պատվավոր տեսուչը, հանկարծ հիվանդացան, իսկ հասարակությունը խրտնելով այդպիսի անախորժ հանգամանքից, չկարողացավ ներկա գտնվել ակտին: Միայն գավառիս դատախազը, թաղապետը, երեք շտաբս-սպա, տեղիս երկու ազգերի՝ հայերի և մահմեդականների պատվավոր հոգևորականությունը և մեր աշակերտների ծնողներից մի տասնյակ հոգի էին, որ ներկա գտնվեցին հանդեսին, որը, ժամանակի կարճ լինելու պատճառով, շուտով վերջացավ»[1]:

Աբովյանի այս տեղին բողոքը էժան չնստեց նրան. Երևանի գավառապետ Բլավատսկին[2] առիթ է փնտրում վրեժխնդիր լինելու: Ներսես Աշտարակեցին 15 տարու չափով Քիշնևում որպես թեմական առաջնորդ, բայց փաստորեն որպես աքսորական մնալուց հետո 1846 թվի հունիս ամսին վերադառնում է էջմիածին, վերադառնում է ընտրված և ցարի կողմից հաստատված որպես Ամենայն հայոց կաթողիկոս: Երևանում Ներսեսն ընդունվում է մեծ շուքով, որին մասնակցում է նաև Աբովյանը՝ իր հետ վերցնելով գավառական դպրոցի աշակերտությունը: Աշտարակեցու այս ընդունելությունը Բլավատսկու համար դառնում է առիթ. հնարելով թե իբր Աբովյանն ինչ որ անվայել արարք է թույլ տվել և բողոքում է այս մասին դպրոցների վերատեսչին, բողոքը հասնում է նույնիսկ Կովկասի կառավարչապետին և վերջինիս կարգադրությամբ Աբվոյանին արվում է խիստ նկատողություն և երեքօրյա կալանք:

---

[1] Տե՛ս Դիվան Խաչատուր Աբովյանի, էջ 158:

[2] Բլավատսկի Նիկիֆոր Վասիլիի, Երևանին գավառապետ, ապա փոխ-նահանգապետ (1849–1861 թթ.):

Եվ երեքօրյա կալանքը կրելուց հետո Աբովյանը 1846 թվի հուլիսի 18-ին դպրոցների վերատեսչին ուղարկում է հետևյալ նամակը. «Ձերդ բարեծնության տարույս հունիսի 22-ի N 738 առաջադրության հետևանքով ես Նորին պայծառափայլության Կովկասի կառավարչապետի կամքով կրեցի երեք օրվա կալանքիս պատիժը, բայց և այնպես ես ինքս ինձ մեղավոր չեմ ճանաչում, ես ցույց չեմ տվել ոչ մի տգեղ վարմունք Ներսես կաթողիկոսի Երևան մուտք գործելու ժամանակ:

Դրա պատճառն այն անախորժ դեպքն է, որ տեղի է ունեցել իմ և տեղիս գավառապետի միջև, մանավանդ անցյալ տարվա հանդիսավոր ակտի ժամանակ, որի մասին ես նույն տարվա նոյեմբերի 24-ին N 126 թղթով պատիվ էի ունեցել զեկուցանելու Ձերդ բարեծնությանը»[1]:

Աբովյանը Ներսես կաթողիկոսի Երևանում տեղի ունեցած ընդունելության ժամանակ ոչ մի դեպքում անվայել արարք չէր կարող թույլ տալ իրեն, ընդհակառակը Ներսեսի նկատմամբ նա տածում էր հարգանք ու մեծարում էր նրան: Հավանաբար Աբովյանը ոգևորված Ներսեսի գալով, իր պահվածքով ու աշխուժությամբ դուր չի եկել Բլավատսկու նմանների մեծապետական արժանապատվությանը, որը և առիթ է դարձել հորինելու մի ստոր զրպարտություն:

Կասկածից դուրս է, որ Երևանում Աբովյանի նկատմամբ ստեղծվել է չարամիտ մի հոսանք, որն ամեն անգամ առիթ էր փնտրում նրան վարկաբեկելու:

Խիստ ուշագրավ է Անդրկովկասի ուսումնական մասի կառավարիչ գեներալ-մայոր Շրամմ երկրորդին[2] ուղղած Աբովյանի 1846 թ. նոյեմբերի 16-ի գրությունը, որում ասված է. «Ի կատարումն Ձերդ գերազանցության սույն նոյեմբերի 12-ի N 704 առա-

---

[1] Տե՛ս Դիվան Խաչատուր Աբովյանի, էջ 175:

[2] Շրամմ II Անդրեյ Անդրեյի (1792–1867 թթ.), գեներալ-լեյտենանտ, 1812 թ. Հայրենական և 1853–1856 թթ. Ղրիմի պատերազմների մասնակից: 1843–1847 թթ.՝ Անդրկովկասյան երկրամասի գլխավոր վարչության խորհրդի անդամ և ուսումնական մասի վարիչ:

ջադրության, պատիվ ունեմ հարգանք զեկուցանելու, որ ես անցյալում, հենց դպրոցի տան շինության սկզբնավորության ժամանակ, և մանավանդ վերջին վերաշինության օրերում, հաճախ արտասվելով խնդրել եմ ենթագնդապետ Պ. Տուրչանինովին իր ստորադրյալ սպաներից մեկի միջոցով գոնե մի քիչ աջակցություն ցույց տալու ինձ, և նրանից միշտ արհամարհական պատասխան եմ ստացել՝ «Հանգիստ թողնել իրեն և պատասխանատու լինել այն բոլորի համար, որ ես ինքս եմ ստանձնել, որին խառնվել իր բանը չէ»: Իսկ Երևանի գավառապետը և քաղաքապետը, նրանց իրար հետ ունեցած մոտ հարաբերության հետևանքով և անցյալ տարի Անդրկովկասի դպրոցների վերատեսչին առաջինի վրա գրված իմ բողոքի պատճառով, իմ վերաբերմամբ տածելով անձնական թշնամական վերաբերմունք, որ և եղել է պատճառ նրա այն քսություններին, որ նա արել է իմ մասին Նորին պայծառափայլության Կովկասի փոխարքային, միթե՞ կարող են իմ վերաբերմամբ ունենալ մի ուրիշ զգացմունք, որ վնասակար չլիներ ինձ համար»[1]:

Այս գրությունից պարզվում է, որ Աբովյանի նկատմամբ անհամակիր ու բացասական վերաբերմունք ստեղծվել էր նույնիսկ տեղի զինվորականների շրջանում, և որ գավառապետն ու քաղաքապետը, որոնք տեղի ազդեցիկ դեմքերից էին, կարողացել էին տեղի պաշտոնեության շրջանում իրենց սև գործն անել Աբովյանի նկատմամբ:

Աբովյանը վերջնակապես համոզված, որ Երևանի պաշտոնեության բռնած դիրքը իր նկատմամբ բացահայտ թշնամական է և դրա դեմ պայքարել անկարող է, որոշում է ազատվել այդ շրջապատից:

Այդ կապակցությամբ որոշում է գնալ Թիֆլիս, բայց ի՞նչ կերպ. թույլտվություն խնդրել վերատեսչի՞ց, հարցական է, կարող է թույլ չտալ, այնտեղ էլ տրամադրություններն իր նկատ-

[1] Տես Դիվան Խաչատուր Աբովյանի, էջ 177:

մամբ, լավ չեն: Բայց և այնպես 1847 թվի սկզբին Աբովյանն ինքնագլուխ մեկնում է Թիֆլիս և ներկայանում է դպրոցական մասի կառավարչին, խնդրում է ներողամտություն առանց թույլտվության Երևանից մեկնելու համար՝ հուսալով, որ իր պատճառաբանությունը կհարգվի: Բայց հետևանքը լինում է այն, որ ստանում է խիստ նկատողություն, նաև հրաման՝ անմիջապես մեկնել Երևան: Այս վարմունքն այն աստիճան վիրավորանք է պատճառում Աբովյանին, որ անմիջապես դպրոցների վերատեսչին ուղղում է հետևյալ հրաժարականը. «Այս անգամ արժանի լինելով հանդիմանության, որ արել է ինձ դպրոցական մասի պարոն կառավարիչը՝ իմ պաշտոնից ինքնակամ բացակայելու պատճառով և Դուք նրա կողմից արտահայտել եք Ձերդ բարձր բարետոհմության առաջադրանքի մեջ, պատիվ ունեմ հայտնելու, որ քանի որ ես իմ 11 տարվա ծառայության ընթացքում չեմ ստացել դպրոցական մասում իմ թափած եռանդագին ջանքերի համար ոչ մի շնորհակալություն, իսկ հանդիմանություններ՝ շատ հաճախ, ուստի և չեմ կարող այլևս շարունակել ծառայել դպրոցական տեսչությանդ և խնդրում եմ Ձերդ բարձր բարետոհմությունից արձակել ինձ պաշտոնիցս, ընդսմին պարտք եմ համարում ավելացնել, որ ես հենց վաղն էլ պիտի մեկնեմ Թիֆլիսից, սպասելով Ձեր շուտափույթ կարգադրության՝ հանձնելու պաշտոնը ում և պատվիրած կլինեք»[1]:

Այս հրաժարականի տոնը ցույց է տալիս, որ ինչպես ասում են, դանակը հասել է ոսկորին, և Աբովյանը ստիպված է լինում վերջակետ դնել: Բայց հրաժարական չի ընդունվում և Աբովյանը ստիպված շարունակել է աշխատել: Սակայն ոչ երկար. 1848 թ. մարտի 6-ին ուղարկում է վերատեսչին հետևյալ գրությունը. «Ձմեռը, երբ ես Թիֆլիսում էի, պատիվ էի ունեցել զեկուցանելու, ինչպես Նորին գերազանցության ուսումնական մասի պ. կառավարչին, նույնպես և Ձերդ բարեծնության, Ամենայն հայոց

[1] Տե՛ս Դիվան Խաչատուր Աբովյանի, էջ 221:

կաթողիկոսի դիտավորության մասին՝ ինձ պաշտոնյա նշանակելու հայոց հոգևոր դպրոցում, ներկայումս Նորին սրբությունը փետրվարի 21-ի N 111 թղթով գրում է ինձ, որ գնամ Թիֆլիս, ըստ հնարավորության փութով, ուստի և խոնարհաբար խնդրում եմ Ձերդ բարեծնությանը հաճել տնօրինել՝ արձակել ինձ դպրոցական տեսչությունից և նշանակել իմ տեղը մեկին, որին ես կարողանամ հանձնել իմ պաշտոնը և արքունի գույքը»[1]:

Ահա այս գրության հիման վրա Աբովյանի հրաժարականն ընդունվում է, մարտի վերջերին Երևան է հասնում Թիֆլիսից ուղարկված ոմն Տուրկեստանով և Աբովյանը սկսում է հանձնել դպրոցի գործերը: Բայց դեռևս գործերի հանձնումը լրիվ չավարտած՝ 1848 թվի ապրիլի 2-ին Աբովյանը տանից դուրս է գնում և այլևս չի վերադառնում:

Աբովյանը, այդ զգայուն, եռանդուն, պայքարող մարդը, այդ լուսավոր դեմքը եկավ ու գնաց, ապրեց մի ողբերգություն և գնաց անհայտ: Այդ անհայտությունը նույնպես ողբերգություն է, որը հանելուկ է մինչև այսօր, հուզում է մտքերը և մնում անլուծելի:

Այդ ողբերգությունն, անշուշտ, ուներ իր դրդիչները, փորձենք լուսաբանել դրանցից մեկը, թերևս գլխավորը:

Աբովյանը 1846 թվի օգոստոսի 31-ին գրում է մի նամակ Մոսկվայի Լազարյան ճեմարանի հայոց լեզվի դասախոս Մկրտիչ Էմինին[2]:

Նամակը վերաբերում է իր՝ Աբովյանի նախկին մի քանի ուսանողներին Լազարյան ճեմարանում տեղավորելու, նրանց խնամքի և նման հարցերի և, միաժամանակ, նկարագրում է այն շրջապատը, որի մեջ ապրում է և որից ստիպված է հրաժարվել

---

[1] Տե՛ս Դիվան Խաչատուր Աբովյանի, էջ 191:

[2] Մկրտիչ Էմին (Կարապետյան, 1815–1890 թթ.), հայագետ, Լազարյան ճեմարանի պրոֆեսոր և հայագիտության ամբիոնի վարիչ: Ռուսերեն և ֆրանսերեն թարգմանել է հայ միջնադարյան հեղինակների մի շարք աշխատություններ, այդ թվում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

ու առանձնանալ: Ավելի լավ բնորոշելու համար այդ շրջապատը Աբովյանը բերում է բառացի հետևյալ առակն ու օրինակը. «Անհնարին է ընդդեմ խթանի աքացել. հանշունքն երևան լավ է ունիլ զէշ կամ մի ջորի պատրաստական, քան զամենայն գիտություն հրեշտակային»:

Ապա մի տող ցած ավելացնում է.

« – Սխալ է, որ զազգ մեր ուսումնատյաց համարել»[1]:

Ով է խթանը, որի դեմ չի կարելի պայքարել:

Ովքեր են, որոնց համար ավելի ընդունելի-ցանկալի է մեկ էշ կամ ջորի աշխատեցնող ու դրանով ապրողը, քան հրեշտակային գիտությունով օժտված գիտունը:

Ավելի լավ պատկերավորել իրեն հալածողներին Աբովյանը չէր կարող:

Բերենք Աբովյանի ապրումների և հոգեկան վիճակի մի այլ դրվագ:

Աբովյանը 1845 թվի փետրվարի 15-ին մի ընդարձակ նամակով դիմում է Ներսես Աշտարակեցուն, որն ընտրված ու հաստատված էր որպես կաթողիկոս, բայց դեռևս գտնվում էր Քիշինևում:

Այդ նամակով Աբովյանը խնդրում է Ներսեսից, որպեսզի իրեն ընդունեն հոգևորականների շարքը[2] և դիմումը պատճառաբանում է հետևյալ հուզիչ և աղերսանքներով լի խոսքերով. «Ամուսնանալով վաղուց հրաժարվել եմ նրանից, ոչ այն պատճառով, որ ընտանիքիս և զավակներիս չեմ սիրում. ամենևին ոչ: Իմ կինը լինելով գերմանուհի իր բարեբարոյությունով և պարկեշտությունով կարող է լինել յուրաքանչյուր տան զարդը: Այլ է սրտիս այս անբուժելի ցավը, որը կարող է իմ մահվան պատճառ լինել, խափանել և խանգարել է իմ ողջ զորությունը: Ամբողջ աշ-

---

[1] Տե՛ս Դիվան Խաչատուր Աբովյանի, էջ 63:

[2] Դորպատ գնալուց առաջ Աբովյանը էջմիածնում սարկավագի կոչում ուներ, երբ ամուսնացավ, այդ կոչումը վերացրին:

խարիը մեռել է իմ աչքում, հայրենիքիս բարեբախտությունից բացի այլ կյանք ինձ համար գոյություն չունի:

Եթե մեկը պահանջի իմ կյանքը, պատրաստ եմ այդ նույնպես զոհ բերել: Վսեմափառագույն եպիսկոպոսապետ, ինձ դարձրեք Ձեր ոտի շյուղը: Եթե օրենքն առաջնորդների ձեռքումն է, առավել ևս եպիսկոպոսապետների և առաջնորդապետների ձեռքումն է: Ես առաջին միակ օրինակը չեմ, որ ցանկանում է թողնել տունը, զավակները և կրել Քրիստոսի խաչը: Ցանկանում եմ, պատրաստ եմ հոգով և մարմնով հայրենիքիս համար բարձրանալ խաչի վրա: Սրանք տղակայական ցնորք չեն, այլ կատարյալ մարդի հաստատ կամքը և փափագն է»[1]:

Աբովյանի համար աշխարիը մեռած էր, այս է հայտարարում նա: Աշխարիից փախչում էր նա, տենչում, ցանկանում էր առանձնություն, վանք: Բայց միթե՞ նա փախչում էր ժողովրդից: Ոչ, նա փախչում էր իրեն հալածողներից:

Այս տեսությունը փակելու համար նշենք մի կետ ևս:

Աբովյանի անհայտության մասին մամուլի մեջ շոշափվել է երեք վարկած, 1) որ Աբովյանը զոհ գնաց մի պարսիկի դավադրության, 2) որ Աբովյանը անձնասպանություն գործեց և 3) որ Աբովյանը ծպտված փախավ Տաճկաստան:

Սակայն Երևանի հայ ժողովրդի բերանում իր ժամանակին հոլովվում էր մի վարկած ևս. այն որ Աբովյանին սև կառքով քշեցին Սիբիր, այս վարկածը տողերիս հեղինակը լսել է [XIX դարի] ութսունական թվականներին տարիքավոր մի շարք մարդկանցից:

Բայց այս վարկածը մամուլի մեջ տեղ չգտավ: Մենք ինքներս, որ Աբովյանի վերջին տարիների գործունեության և անհայտացման մասին գրել ենք փոքրիկ աշխատություն, 2) նույնպես այդ վարկածը չօգտագործեցինք, ինչու՞, որովհետև անհիմն էր:

---

[1] Տե՛ս Ա-Դօ, Խաչատուր Աբովեանի վերջին կեանքի հինգ տարիները, Գործ, 1917, N 5–6 և 7–8:

Այսօր էլ բերելով այդ վարկածը կրկնում ենք, որ այն հիմք չուներ, բայց հարց է ծագում, ինչու ծնվեց այդ վարկածը:

Պատասխան՝ այդ վարկածն ունի իր ծագումը:

Երևանի հայ ժողովուրդը միանգամայն իրազեկ էր, որ Երևանի պաշտոնեությունը, մանավանդ գավառապետը և քաղաքապետը Աբովյանին ատում էին և հալածում ամեն կերպ:

Այս վարկածը լուսաբանում է մի այլ կարևոր հանգամանք. Աբովյանի դեմ սկսված հալածանքն անձնական բնույթ չէր կրում, այլ գերազանցորեն քաղաքական: Ինչու՞ էր ժողովրդի մեջ կարծիք ստեղծվել, որ նրան «սև կառեթով Սիբիր քշեցին»: Չէ՞ր նշանակում, արդյոք, որ այդ երկու զույգ բառերը հասկացվում էին որպես կառավարության կողմից սահմանված պատիժ: Եվ իսկապես, այն ըմբռնումը, այն քաղաքական հայացքները, որ ուներ Աբովյանը, միանգամայն խորթ էին տիրող կարգերին, խորթ էին մանավանդ այն շրջապատի համար, որում աշխատում էր նա: Նրան խորթ էին և տիրող կարգերը, շրջապատը և՛ զարմանալի չէ, որ հալածանքները տեղում էին և՛ գոյություն ունեցող կարգերից և շրջապատից:

Այսպես թե այնպես, Աբովյանը հալածվում էր ամեն առիթով, և այդ հալածանքն անշուշտ հանդիսացավ Աբովյանի կյանքի վերջին օրերի հոգեմաշ ապրումների, նաև անհետացման գլխավոր պատճառը:

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏ ՊԱՍԿԵՎԻՉԸ

Ո՞վ է Ներսես Աշտարակեցին

Նա ծածկում էր վեղարը և կրում էր փարաջա, բայց այդ զգեստի տակ թաքնված էր ոչ թե աղոթքներով ապրող կրոնավոր, այլ քաղաքական մի դեմք:

Նա փայփայում էր որոշակի նպատակ և այդ նպատակին հասնելու համար ի հայտ էր բերում ամուր կամք, պայքար՝ արհամարհելով ամեն մի դժվարություն:

Նա սիրում էր իր ժողովրդին նվիրվածությամբ, այդ ժողովրդի վիճակի բարվոքումը նրա գերագույն նպատակն էր:

Ահա ձեզ Ներսես Աշտարակեցին:

Նա անցել էր կուսակրոնության բոլոր աստիճանները՝ սկսած սարկավագից մինչև Ամենայն հայոց կաթողիկոս, բայց նրան զարդարում էին բացառապես Աշտարակեցի անվամբ: Նա մեծապես աշխարհիկ մարդ էր և աշխարհիկ Աշտարակեցի մականունը դարձել էր հատուկ անուն:

Աշտարակեցին որպես եռանդուն, միաժամանակ ընդունակ մարդ, անուն վաստակեց Էջմիածնի միաբանության շրջանում դեռևս իր աբեղայության օրերում: Նա հետաքրքրվում էր վանքի բոլոր գործերով, հետևում էր միաբանության գործող անձանց գործունեությանը և զբաղվում վանքի կառավարման թերություններին ու պակասությունների վերացմամբ:

Չնայած իր երիտասարդ տարիքին, շուտով նա սկսեց մասնակցել տեղի ունեցող աշխատանքներին, վազ տալ ամեն տեղ, ուր կարիք կար, ձեռք հասցնել ամեն մեկին և աշխատանքային այդ միջամտության շնորհիվ նա այնքան առաջ գնաց, որ շուտով իր վրա գրավեց ընդհանուրի ուշադրությունը:

Հաճախ նրա խորհրդին էին դիմում միաբանության նույնիսկ տարիքավոր անդամներն այս կամ այն հարցով, հաշվի էին առնում նրա կարծիքները ամենքը և շնորհիվ այս բոլորի, ազատ ելումուտ ունեցավ վեհարանում և ձեռք բերեց կաթողիկոսի վստահությունը:

Այս բոլորին զուգընթաց, հետզհետե ստեղծվեց Ներսեսին համակրողների շրջապատ. միաժամանակ ստեղծվեց նաև հակառակորդների մի հոսանք: Թե Ներսեսը Էջմիածնում ինչպիսի հեղինակություն ձեռք բերեց և ինչ չափով իր ազդեցությունը

կարողացավ տարածել վանքի կառավարման ընթացքի վրա, դա երևում է նրա հակառակորդների ասեկոսներից:

– Եփրեմ կաթողիկոսի[1] բարությունն այն աստիճանի թուլության է հասել, որ նա անունով է միայն կաթողիկոս, իսկ բոլոր գործերը վարում է սինոդը, – ասում էին Ներսեսի հակառակորդները, և ավելացնում, – իսկ սինոդը միայն խաղալիք է ամենից եռանդուն Աշտարակեցի Ներսեսի ձեռքում: Կաթողիկոս, սինոդ և էջմիածին՝ ասել է մի «Ներսես»:

Այս ասեկոսները հասան կաթողիկոսի ականջը և չնայած այն բանին, որ նա Ներսեսին շնորհել էր արքեպիսկոպոսական աստիճան և նշանակել սինոդի անդամ, բայց և այնպես սառնություն սողոսկեց նրա վերաբերմունքի մեջ Ներսեսի նկատմամբ:

Դա զգաց Ներսեսը, մյուս կողմից, հակառակորդների ծայրահեղ աստիճանի հասած չարախոսություններն արեցին իրենց գործը և նա որոշեց թողնել էջմիածինը:

Իր այս որոշումը Ներսեսը հայտնեց Եփրեմին և սա տվեց իր համաձայնությունը մեծ բավականությամբ և միաժամանակ կարգադրեց ետ կանչել Թիֆլիսից Աստվածատուր արքեպիսկոպոսին ու նրա փոխարեն նշանակեց Ներսեսին:

1814 թվին Ներսեսը մուտք է գործում Թիֆլիս և ստանձնում Վրաստանի թեմի առաջնորդությունը:

Թիֆլիսը Կովկասի մայրաքաղաքն էր: Այստեղ նստում էր երկրի կառավարչապետը՝ վարչական ընդարձակ կազմով: Վրաստանում հայերի թիվը մեծ էր, իսկ դա համարվում էր առաջնակարգ թեմ: Բացի այդ, մինչ էջմիածինն ու Երևանը գտնվում էին Պարսկաստանի տիրապետության տակ, կրում էին Երևանի սարդարի անասելի ճնշումները, Վրաստանը միանգամայն ազատ էր այդ ճնշումներից: Այսպիսով Ներսեսի համար բացվում էր գործունեության լայն ասպարեզ:

---

[1] Եփրեմ Ա Չորագեղցի Ամենայն հայոց կաթողիկոս (1809–1830 թթ.):

Ներսեսը նախ ծանոթացավ կառավարչապետի[1] հետ և շնորհիվ այն բանի, որ մինչ այդ Եփրեմն ուղարկել էր կառավարչապետին Ներսեսի ծառայության ցուցակը մեծ գովեստներով, ուստի այդ երկուսի միջև շուտով բարեկամական հարաբերություններ հաստատվեցին:

Ապա Ներսեսն անցավ իր անմիջական պարտականություններին և ծանոթանալով թեմի վերաբերյալ խնդիրներին, հանդիպեց մի շարք հարցերի, որոնց լուծումը պահանջում էր և՛ ժամանակ, և՛ եռանդ, և՛ պայքար:

Այն միջոցին, երբ Ներսեսը հեշտությամբ տեղի պաշտոնեության բարձր խավերում ձեռք էր բերում ծանոթություններ և հեղինակություն, հայ ժողովրդի որոշ խավերի շրջանում նրա նկատմամբ ծագեց դժգոհություն, որը գնալով մեծացավ և հանգեց բացարձակ թշնամության:

Ո՞րն էր խնդիրը:

Հայ ժողովրդի կենցաղում գոյություն ունեցող երկու այլանդակ երևույթները հուզեցին Ներսեսին:

Առաջինը հայ քահանաների ծայրահեղ տգիտությունն ու առանձնապես նրանց անբարոյական կենցաղն էր՝ ծրիակերություն, հարբեցողություն, փողոցներում թրև գալ, անվայել գրույցներով մարդկանց համախմբել ու զվարճություն պատճառել և ցոփ կյանք վարել:

Բացի այդ քահանայությունը դարձել էր ժառանգական՝ մեռնող քահանային փոխարինում էր տղան կամ մոտիկ ազգականը: Ընտրական սիստեմ գոյություն չուներ:

Երկրորդ, Թիֆլիսում գոյություն ունեին մի քանի ազնվական ծագում ունեցող հայեր, որոնք Վրաստանի անկախության ժամանակից ձեռք բերելով մելիքության կոչում և վարելով Թիֆլիսում նահանգապետի, տանուտերի և նման պաշտոններ, իրենց ներկայացնում էին որպես Թիֆլիսի տեր ու տնօրեն, կա-

[1] Ռտիշչև Նիկոլայ Ֆյոդորի (1754–1835 թթ.), հեծելազորի գեներալ, Կովկասի կառավարչապետ (1812–1816 թթ.):

տարում էին գանձումներ ոչ միայն շենքերից, կալվածքներից, առևտրից, այլև եկեղեցիներից՝ ընբռստացողների նկատմամբ գործադրելով ոչ միայն դրամական տուգանքներ, այլև մարմնական խիստ պատիժներ:

Այդ արտոնյալներից առանձնապես աչքի էին ընկնում Արղությանները, Բեհբությանները՝ իրենց հետևից քարշ տալով մի շարք ազնվական, պատվավոր քաղաքացի կոչում ունեցողների:

Թե դրանց շահատակությունն ինչ չափերի էր հասնում, ցույց է տալիս դրանցից մեկի արարքների նկարագրությունը:

Դրանցից մեկին կոչում էին Դարչի Բեհբության: Դարչին վրաց թագավորության ժամանակ վարում էր Թիֆլիսի մելիքի պաշտոնը:

Նա ահագին գումարներ ուներ և ապրում էր շատ ճոխ, բայց Ռուսաստանի տիրապետության օրոք մելիքի պաշտոնն իր եկամուտներով վերացավ: Սակայն նրա հեղինակությունը ժողովրդի աչքում մնաց շնորհիվ նրա, որ նրան տրվեցին աստիճան, շքանշաններ և նշանակվեց թոշակ: Եվ կարևորն այն էր, որ նա կարողացավ իր ազդեցությունը պահել Վրաստանի հայոց հոգևոր վարչության վրա, նրա խոսքը հարգի էր էջմիածնի գահակալների մոտ: Նա համարվում էր իր պապերի կառուցած կուսանոցի, Նորաշենի, Մուղնու, անգամ մի քանի գյուղերի եկեղեցիների տերը: Նրանից էր կախված քահանաների ձեռնադրումը: Նա հրամայում էր առաջնորդին ձեռնադրել այսինչ տիրացուին, և հրամանը կատարվում էր: Նա քահանաներին խրատում էր ապտակներ հասցնելով, գլխներին ճիպոտներ կոտրելով: Մինչև այդ հայոց եկեղեցիները երեցփոխներ չունեին, ուստի եկեղեցիների եկամուտները կուտակվում էին Դարչիի ձեռքում, որի մասին նա ոչ ոքի հաշիվ չէր տալիս:

Քահանաները նրան տեսնելու համար ժամերով պիտի սպասեին դռանը: Իսկ երբ առաջնորդի հետ տեսնվելու կարիք էր լինում, ծառային ուղարկում էր և կանչում իր տունը:

Առաջնորդը ներկայանում էր Դարչիին շուրջառը վրան գցած, գլուխ էր տալիս և սպասում մինչև իշխանը կհրամայեր նստել: Սեփականացնելով առաջնորդի իրավունքները, լուծում էր հաս-չհասի խնդիրները, բաժանում էր ամուսիններին, հավաստում էր կտակները, իրավունք էր տալիս մեռածին վանքի գավթում թաղելու, խլում էր ծուխերը մեկից ու մյուսին տալիս, իսկ եթե որոշում էր եկեղեցի գնալ, ապա ժամասացությունը չէր սկսվում մինչև իշխանը չգար:

Ներսեսն առաջին իսկ օրից վերջ տվեց այդ այլանդակություններին: Պահանջվում էր տեսնվել Դարչիի հետ, նրան կանչում էր իր մոտ, ընդունում ու ճանապարհ գցում սովորական կարգով, զգացնել տալով նրան, որ նրա դարն անցել է:

Դարչին մի անգամ խնդրեց Ներսեսին իր հայրենի Սագաջերո գյուղի եկեղեցու համար քահանա ձեռնադրել իր առաջադրած մարդուն, Ներսեսը մերժեց՝ ներկայացրած մարդուն գտնելով անարժան: Մեկ այլ անգամ Դարչին առաջարկեց Ներսեսին իր խորհրդակցություններում մասնակից դարձնել այս ու այն հայտնի քահանաներին, նույնպես մերժեց Ներսեսը՝ պատասխանելով, որ դա իր գործն է:

Եվ ահա Ներսեսի այս կտրուկ միջոցառումներից դժգոհ Դարչին համախմբեց իր շուրջը համախոհների, պատվավոր կոչվող քաղաքացիների, նաև Ներսեսի կողմից հալածված տգետ և հոռի քահանաների և սկսեց դավեր նյութել Ներսեսի դեմ: Հրավիրում էր իր մոտ ժողովներ, որոնց մասնակցում էին մի քանի վրաց իշխաններ, հորինում էին զրպարտություններ, որպես թե Ներսեսը վրացիներից խլում է Հաղպատ գյուղը և սեփականացնում Հաղպատի վանքը, ցանկանում է զինվորներ ժողովել և այլն, և այլն:

Գնալով, այս թշնամությունն այնտեղ հասավ, որ բազմաթիվ երկուստեք բողոքներով զբաղվեցին ոչ միայն Եփրեմը, ոչ միայն կառավարչապետը, այլև նախարարությունը: Եվ սրա հետևանքը եղավ այն, որ Պետերբուրգից ուղարկված հատուկ հանձնա-

ժողովը քննելով այս աղմկալի վեճը, որոշեց Ներսեսի հակառակորդներին հայտարարել զրպարտողներ ու խռովարարներ և եթե նրանք խստորեն չդատապարտվեցին, այդ էլ նրա շնորհիվ, որ Ներսեսն անձամբ ներկայացավ հանձնաժողովին և խնդրեց նրանց նկատմամբ պատիժներ չսահմանել:

Եվ այս վեճը վերջացավ նրանով, որ Թիֆլիսի ոստիկանությունը 1817 թ. ապրիլի 16-ին զրպարտիչներից ստորագրություն վերցրեց, որով պարտավորվում էին նման խռովություններ այլևս չհորինել:

Այն միջոցին, երբ Ներսեսը զբաղված էր Թիֆլիսի հայ ժողովրդի կենցաղն այլանդակող ազնվատոհմ խավերի և տգետ ու քայքայիչ հոգևոր դասի դեմ մղվող պայքարով, միաժամանակ զբաղվում էր մի շատ կարևոր ձեռնարկմամբ, որը պիտի անմահացներ նրա անունը:

Դա Ներսիսյան կոչվող դպրոցն էր, որի գոյության ընթացքում կրթություն ստացան մեր գիտական և գրական ասպարեզի բազմաթիվ գործիչներ:

1819 թվին Թիֆլիսում դրվեց Ներսիսյան դպրոցի հիմքը, կառուցվեց իր ժամանակի համար հոյակապ շենք, միաժամանակ կառուցվեց խանութաշարք (մոտ 32 հատ), որոնց եկամուտով պետք է ապահովվեր դպրոցի պահպանման ծախսերը:

1824 թվի մայիսին շենքն ավարտվեց, ուսումը դպրոցում սկսվեց և երկու տարի անց աշակերտության թիվը հասավ 600-ի:

Ներսեսը դեռևս զբաղված էր դպրոցի ավարտման և թեմի վերաբերյալ աշխատանքներով, երբ հայտնի դարձավ, որ Պարսկաստանը Ռուսաստանի վրա հարձակվելու պատրաստություններ է տեսնում:

Ինչ հանգամանքներ էին դրդել Պարսկաստանին այդպիսի քայլ անել:

1825 թվի դեկտեմբերի 14-ին Պետրոգրադում[1] տեղի ունեցան Ռուսաստանի համար ուշագրավ երկու դեպք: Այդ օրը մայրաքաղաքի մի քանի զորամասեր՝ ղեկավարությամբ զինվորական կազմի ապստամբեցին և փորձեցին իրենց ձեռքը վերցնել իշխանությունը:

Միաժամանակ ռուսական գահ բարձրացավ Ալեքսանդր I-ի[2] հաջորդ Նիկոլայ I-ը[3]: Նոր ցարն ուժեղ կամքի տեր էր և դաժան: Ապստամբությունը ճնշեց, ղեկավարները ծանր պատիժներ կրեցին, իսկ մի քանիսը մահվան դատապարտվեցին:

Ահա այս դեպքը, որը հետագայում կոչվեց դեկաբրիստների ապստամբություն[4], հուզեց մտքերը երկրի ներսում, հետաքրքրություն առաջ բերեց նաև դրսի աշխարհում և չափազանցված գույներով հասավ նույնիսկ Թեհրան: Եվ Պարսկաստանի շահը մտածեց օգտվել հանգամանքից, հարձակվել Ռուսաստանի վրա և հետ գրավել Ղարաբաղը, Շուշին, Գանձակը և նույնիսկ Թիֆլիսը: Երևանը և Էջմիածինը գտնվում էին դեռևս Պարսկաստանի տիրապետության տակ:

– Պետք է քշել գյավուրներին Կովկասից և մահմեդականներին ազատել քրիստոնյաների ձեռքից:

Այս կոչն ահա գնաց համակեց ոչ միայն Պարսկաստանի, այլ առավել ևս Կովկասի մահմեդականներին: Եվ մինչդեռ բանակցելու համար Թեհրան գնացած ռուսական ներկայացուցիչ Մենշիկովը[5] գտնվում էր Պարսկաստանից վերադարձի ճանա-

---

[1] Սանկտ-Պետերբուրգ:
[2] Ալեքսանդր I (1777–1825 թթ.), ռուսական կայսր (1801–1825 թթ.):
[3] Նիկոլայ I (1796–1855 թթ.), ռուսական կայսր (1825–1855 թթ.):
[4] Դեկաբրիստների (դեկտեմբեր ամսին ելույթ ունենալու համար կոչվեցին դեկաբրիստներ) ապստամբությունը պետական հեղաշրջման փորձ էր, որը տեղի ունեցավ Ռուսական կայսրության մայրաքաղաք Ս. Պետերբուրգում 1825 թ. դեկտեմբերի 14-ին: Ապստամբությունը կազմակերպել էին ազնվական սպաները, որոնք ցանկանում էին ազատականացնել ռուսական հասարակական-քաղաքական իրականությունը: Ապստամբությունը ճնշվում է կառավարական ուժերի կողմից:
[5] Մենշիկով Ալեքսանդր Սերգեյի (1787–1869 թթ.), գեներալ-համիրալ, ծովակալ, Ա. Դ. Մենշիկովի ծոռը: 1826 թ. Նիկոլայ I-ի կողմից հատուկ առաքելութ-

պարհին, Երևանի սարդարի եղբայրը պարսկական զորքերի գլուխ անցած, 1828 թ. հուլիսի 16-ին հարձակվեց Շորագյալի և Փամբակի շրջանների վրա, ջարդեց սակավաթիվ ռուսական վաշտերը և հայաբնակ գյուղերը ենթարկեց կողոպուտի և ավերումների:

Միաժամանակ Պարսկաստանի գահաժառանգ Աբաս Միրզան[1] 60 հազարանոց զորքի գլուխ անցած հարձակվեց Ղարաբաղի վրա, կոտորեց սահմանապահ զինվորներին և առաջացավ մինչև Շուշի: Կոտորածից փախած և քաղաքում եղած մոտ 1700 զինվորներ և բավական թվով հայեր ապաստանում են բերդում, փակում մուտքերը և դիմադրում թշնամուն:

Աբաս Միրզան պաշարելով Շուշին, և իր զորքերից զատելով 12 հազար հոգի, ուղարկում է Գանձակի վրա: Տեղական մահմեդականները միանալով արշավող բանակին՝ գրավում են Գանձակը և ապա շարժվում դեպի Թիֆլիս: Սարսափը կոխում է Թիֆլիսին, մի պահ պատկերացնում է 1795 թվականը՝ Աղա Մամեդ խանի[2] արշավանքը, տեղի ունեցած ջարդերն ու ավերածությունները:

Արշավանքը միանգամայն անսպասելի էր կովկասյան վարչության համար. կովկասյան զորքը հաշվվում էր 35 հազարից ոչ ավելի, մինչդեռ պարսկական 60 հազարանոց բանակի առջևում և թիկունքում եռում էր Անդրկովկասի ողջ մահմեդականությունը:

յամբ ուղարկվում է Պարսկաստան, որտեղ ծերբակալվում և մնում է բանտում մինչև 1827 թ.:

[1] Աբաս Միրզա (1789–1833 թթ.), արքայազն, պետական և ռազմական գործիչ: Իրանական Ատրպատականի փոխարքա: 1804–1813 թթ. ռուս-պարսկական, 1821–1823 թթ. թուրք-պարսկական և 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմների ժամանակ ղեկավարել է պարսկական զորքերը: 1828 թ. բանակցություններ է վարել ռուսների հետ, որն ավարտվել է Թուրքմենչայի պայմանագրի ստորագրմամբ:

[2] Աղա Մոհամեդ Շահ Ղաջար, Աղա Մուհամեդ խան (1741–1797 թթ.), Պարսկաստանի շահ (1796 թ.): Ղաջարական արքայատոհմի հիմնադիր:

Կովկասի կառավարչապետ, անվանի զորավար Երմոլովը[1] զգալով դրության լրջությունը, հրավիրում է զինվորական խորհուրդ, որին մասնակից է դարձնում նաև իր բարեկամ Ներսեսին:

Ներսեսը համոզված էր, որ Աբաս Միրզայի բանակը պարտվելու է, տեղական մահմեդականության շարժումը ճնշվելու է և հասել է պահը, երբ Արարատյան աշխարհը, Երևանը և Էջմիածինը թոթափելու են պարսկական լուծը:

Ներսեսը ոգևորված է. նա մի կողմ է դնում վեղարը, մոռացության է տալիս հոգևոր խնդիրները և նետվում է եռուն աշխատանքի մեջ ու ստանձնում մի նոր դեր:

Պատրաստվում է մի կոչ՝ ուղղված հայ ժողովրդին. «Հասել է փրկության ժամը, մոտեցել է այն օրը, երբ պարսկական դաժան լուծը պիտի թոթափվի, և Արարատյան աշխարհը, Երևանը և Էջմիածինը պետք է ազատ շունչ քաշեն: Հա՛յ ժողովուրդ, վերցրու զենք, մտիր կռվողների շարքը. հետապնդիր թշնամուն ռուս զորքերի հետ կողք-կողքի, դա է թելադրում պահը»:

Այդ կոչը Ներսեսն ուղարկեց ամեն տեղ ու ամենքին և շատերին էլ ուղղեց հատուկ նամակներ: Որից հետո այլևս Ներսեսին մի տեղում տեսնել չէր կարելի. նա ամբողջ ժամանակ շարժման մեջ էր, լինում էր ամենուրեք, հասնում էր ամենքին, ոգևորում բոլորին:

Կովկասի հրամանատարությունը, դասավորելով բոլոր ուժերը և անցնելով հարձակման, ոչ միայն կասեցրեց թշնամու սպառնալիքը, այլև մի քանի ճակատներում կատարյալ պարտության մատնեց նրան և դուրս քշեց գրաված շրջաններից: Կարևոր է հիշել Գանձակի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, որում պարսկական զորքը խիստ ջարդ կրեց ու փախուստի դիմեց այն վիճակում, որ Շուշիում կանգնած Աբաս Միրզան տես-

---

[1] Երմոլով Ալեքսեյ Պյոտրի (1777–1861 թթ.), ռուս զորավար և պետական գործիչ, հեծելազորի գեներալ, հրետանու գեներալ: Կովկասի կառավարչապետ (1816–1827 թթ.):

նելով այդ շփոթը, ձգեց Շուշիի պաշարումը և իր զորքն առած անցավ Պարսկաստան:

Եվ մինչդեռ տեղական ուժերով Աբաս Միրզայի արշավանքը և տեղի մահմեդականության խժդժությունները չեզոքացվում էին, Ռուսաստանը ձեռնարկեց հաջորդ գարնանը Պարսկաստանի վրա լայնածավալ հարձակման պատրաստվել:

Եվ ահա այս ձեռնարկության կապակցությամբ Կովկասի ընդհանուր ղեկավարության շրջանում փոփոխություն կատարվեց:

1827 թվի մարտի 29-ին, Պարսկաստանի դեմ արշավանք սկսելու պատրաստությունների եռուն աշխատանքների միջոցին, Երմոլովը կովկասյան կառավարչապետության պաշտոնից ետ կանչվեց և նրա փոխարեն կառավարչապետ կարգվեց Պասկևիչը, որը մեկ տարի առաջ Պարսկաստանի անսպասելի հարձակման ժամանակ ուղարկվել էր որպես Երմոլովի օգնական:

Այս միջոցին էր, որ իր վարած գործունեության կապակցությամբ Ներսեսը ստացավ երկու կարևոր փաստաթուղթ: Առաջինը՝ Երմոլովի նրան ուղղած 1827 թ. փետրվարի 15-ի թվակիր նամակն էր, որում Աբաս Միրզայի ձեռնարկած արշավանքի ընթացքում Ներսեսի կատարած եռանդուն աշխատանքն ու աջակցությունը դրվատելով, Երմոլովը նախքան Կովկասը թողնելը, իր շնորհակալությունն ու հարգանքն էր հայտնում Ներսեսին:

Երկրորդը կայսերական հրովարտակն էր: Ռուսական ընդհանուր բանակի հրամանատար կոմս Դիբիչը[1], որը Կովկաս էր եկել հատկապես պատրաստվող պատերազմի ծրագրի մշակումը ղեկավարելու համար, մոտիկից ծանոթանալով Ներսեսի աշխատանքներին՝ կապված Աբաս Միրզայի արշավանքի հետ, Նիկոլայ I-ին ուղարկեց հատուկ զեկուցում Ներսեսի գործունեության մասին:

---

[1] Դիբիչ-Զաբալկանսկի Իվան Իվանի (1785–1831), գեներալ-ֆելդմարշալ, Սբ. Գեորգիի շքանշանի լրիվ ասպետ:

Եվ այդ զեկուցման հիման վրա Նիկոլայն արձակեց հրովարտակ, որը կրում էր 1827 փետրվարի 2-ի թվականը և պարունակում էր հետևյալ դիմումը:

«Սրբազան Ներսեսի, վիճակավոր արքեպիսկոպոսի ամենայն հայոց բնակեցելոց ի Վրաստան»:

Հրովարտակը վերջանում էր հետևյալ խոսքերով. «Նկատի առնելով Ձեր ժողովրդի գովելի ընթացքը և Ձեր հովվական հորդորանքների ազդեցությունը, մենք հայտնում ենք Ձեզ մեր կայսերական երախտագիտությունը և մնում ենք՝ պահելով դեպի Ձեզ մեր կայսերական բարեհաճ ողորմածությունը»:

Պատերազմական պատրաստություններին զուգընթաց Ներսեսը հղացավ մի միտք՝ կազմակերպել հայկական կամավորական զորք, որը որպես առանձին միավոր պետք է մասնակցեր պատերազմին: Իր այս միտքը հայտնելով կառավարչությանը, մեծ հաճությամբ թույլ տրվեց նրան գործի անցնել, ըստ որում մինչ այդ, կառավարությունն առաջարկել էր վրացական ազնվականությանը և թուրք աղալարներին աջակցել արշավանքին:

Ներսեսն անմիջապես գործի անցավ և մի կոչով դիմեց հայ ժողովրդին, հորդորներ կարդաց, դրվատեց պահը և սպասելիքները: Նրա կոչը արձագանք գտավ, առաջ եկան ցանկություն հայտնողներ, կազմվեցին ցուցակագրումներ և ցանկացողների թիվն աճեց այն չափով, որ կարևոր համարվեց կազմակերպել փոքրիկ զորամաս:

Զորատեսը տեղի ունեցավ մարտի 30-ին: Նորակազմ գունդը եկավ Ղաբախ կոչվող հրապարակը, այդտեղ եկավ խմբվեց ահագին բազմություն, տեսարանը նորություն էր ու հետաքրքիր: Չի նստած հայտնվեց Ներսեսը և դիմեց գնդին հուզիչ մեկ ճառով, նորից ու նորից շեշտեց բացառիկ պահը, հայ ժողովրդի իղձերը և այդ իղձերի մոտալուտ կատարումը: Ապա նշան տրվեց և գունդը շարքով Ներսեսի առջևով, կատարեց մի քանի անցուդարձ:

– Ապրե՛ք քաջեր, – խրոխտ գոչեց Ներսեսը:

– Կեցցե՛ մեր առաջնորդը, – աղաղակեց գունդը խմբովին և գնդին ձայնակցեց այդտեղ խռնված բազմությունը:

Շուտով գունդը մեծացավ, նրա կազմը հասավ 800 հոգու՝ 80 սպաներով, զգեստավորվեց, զինվեց ինչպես կարգն է: Իսկ մայիսի 15-ին վանքի եկեղեցում մեծ հանդիսավորությամբ օծվեց հատուկ պատրաստված դրոշակ և հանձնվեց գնդին: Ներսեսի որոշումը կատարված էր:

Արդեն ռուսական բանակն առաջ էր շարժվում, նպատակակետ ընտրած Արարատյան հովիտը, մեջն առած Երևանը և Էջմիածինը: Հայկական գունդն էլ այդ նույն ուղղությունները վերցրած, գնաց՝ տանելով իր հետ հայ ժողովրդի իղձերը:

Ռուսական զորքը Բենկենդորֆի[1] հրամանատարությամբ և Ներսեսի առաջնորդությամբ ապրիլի 13-ին մուտք գործեց Էջմիածին:

Մայիսի 12-ին Պասկևիչը Թիֆլիսից ճանապարհ ընկավ դեպի պատերազմի դաշտ, ճանապարհ ընկավ նաև գլխավոր բանակը, իսկ մայիսի 17-ին՝ նաև հայկական գունդը:

Պասկևիչը Էջմիածին հասավ հունիսի 8-ին, իսկ հունիսի 12-ին թողնելով Էջմիածինը, նաև արդեն Երևանը պաշարված վիճակում՝ վերցրեց գլխավոր բանակը և ճանապարհվեց դեպի Նախիջևան:

Արարատյան դաշտը հայտնի էր ամառային կիզիչ կլիմայով: Ռուսական զորքը, անսովոր այդ կլիմային, ունեցել էր մեծ չափով հիվանդներ, որոնց խնամում էին Էջմիածնում և Ներսեսը՝ մնալով Էջմիածնում, մեծապես զբաղված էր հիվանդ զինվորների խնամքով, երբ Աբաս Միրզան տեղեկություն ստանալով ռուսական զորքի քանակի ու վիճակի մասին, 30 հազարանոց բանակով օգոստոսի 1-ին հայտնվեց Էջմիածնի մերձակայքում,

---

[1] Բենկենդորֆ Քրիստափոր Կոնստանտինի (1785–1828 թթ.), գեներալ-համարզ: 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գլխավորել է առանձին հեծելաջոկատ:

պաշարեց վանքը, շրջան կատարելով կանգ առավ Օշական գյուղում և պատրաստվեց այդ կողմից հարձակվել ու գրավել էջմիածինը:

Էջմիածնի դրությունը դարձավ օրհասական, Աբասն իր պարտության ողջ թույնը թափելու էր էջմիածնի գլխին, սոսկալի սպանդանոցն անխուսափելի էր: Ներսեսը մի կերպ լուր հասցրեց Կրասովսկուն[1], որն իր զորամասով շոգից քշված՝ գտնվում էր Ապարանում:

Կրասովսկին լուր առնելուն պես, վերցնելով իր զորամասը՝ 1800 հետևակ, 500 հեծյալ, հայկական գնդի մեկ հարյուրյակ, 12 թնդանոթով օգոստոսի 16-ին շտապում է օգնության, սակայն Աշտարակի ձորում չորս կողմից պաշարվում է թշնամու զորքերով: Սկսվում է անհավասար պայքար, հերոսական դիմադրությունը հանգեցնում է անասելի զոհերի, շատ քչերն են ազատվում և իրենց գցում էջմիածին, Կրասովսկու փոխանակած երկու ձիերը սպանվում են, ինքը վիրավորվում է թևից, բայց և այնպես թշնամին իր նպատակին չի հասնում, էջմիածինը փրկվում է:

Աշտարակի զոհաբեր ճակատամարտով պատերազմի բախտը որոշվեց. Պասկևիչն իր զորքի մի փոքր մասը թողնելով Նախիջևան, մեծ մասը վերցրած վերադարձավ էջմիածին: Աբաս Միրզան անհետացավ: Վերսկսվեց Երևանի պաշարումը, որը վերացվել էր Աբաս Միրզայի հայտնվելու հետևանքով: Ապա ձեռնարկվեց Սարդարապատի պաշարումը: Այս երկու կետերի գրավումը թեև մի փոքր երկարեց, բայց և այնպես երկուսն էլ ընկան:

Սարդարապատն ընկավ սեպտեմբերի 20-ին ուժեղ ռմբակոծելուց հետո, որտեղից կարողացավ փախչել սարդարի եղբայր Հասան խանը, իսկ Երևանի բերդն անձնատուր եղավ հոկտեմբերի 1-ին. սարդարը ճողոպրել էր մի քանի օր առաջ:

---

[1] Կրասովսկի Աֆանասի Իվանի (1780–1849 թթ.), ռուս զորահրամանատար, գեներալ-համիարզ:

Եվ մինչդեռ այստեղ կատարվում էր Սարդարապատի և ապա Երևանի պաշարումն ու գրավումը, այնտեղ Նախիջևանում ռուսական զորքը՝ ղեկավարությամբ իշխան Էրիստովի[1] ու գնդապետ Մուրավյովի[2], հանդիպում ունենալով Աբաս Միրզայի զորքերի հետ, ջարդում է նրան և Աբասը, նոր պարտություն կրելով, փախչում է Խոյ:

Ճանապարհը բացվեց, ռուսական զորքը կոխեց Արաքսն ու առաջ շարժվեց առանց որևէ դիմադրության: Հոկտեմբերի 2-ին ռուսական զորքը հասավ Մարանդ, իսկ հոկտեմբերի 13-ին՝ Թավրիզ, որի դռները բացվեցին առանց դիմադրության և ռուսական դրոշակը բարձրացավ բերդի՝ Արքի վրա:

Թավրիզի գրավումով Աբաս Միրզան՝ պատերազմի ու պարտությունների այդ հանցավորը, գլխիկոր Դեհկարխան գյուղում մոտեցավ Պասկևիչին և հաշտություն խնդրեց:

– Երևանի և Նախիջևանի խանություններն ընդմիշտ անցնում են Ռուսաստանին, և բացի այդ Պարսկաստանը վճարում է 20 միլիոն ռուբլի տուգանք, – հայտարարեց Պասկևիչը:

Շահը համաձայնեց հրաժարվել երկու խանություններից, իսկ 20 միլիոն ռուբլու պահանջը մերժեց:

Ռուսական բանակը վերսկսեց առաջխաղացումը, մեկ թևով շարժվեց դեպի Թեհրան, իսկ մյուսով առաջացավ և գրավեց Խոյը, Սալմաստը, Ուրմիան, Մարաղան և Արդաբիլը:

Աբաս Միրզան ավելի ևս գլուխ խոնարհեց և 1828 թվի փետրվարի 10-ին Թեհրանի ճանապարհին՝ Թուրքմենչայ գյուղում ստորագրեց վերը հիշած պայմանները պարունակող դաշնագիրը:

---

[1] Էրիստով Գեորգի Եվսեյի (1769–1863 թթ.), հեծելազորի գեներալ: 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գլխավորել է 21-րդ հետևակային դիվիզիան:

[2] Մուրավյով-Կարսկի Նիկոլայ Նիկոլայի (1794–1866 թթ.), գեներալ-համհարզ, Կովկասի կառավարչապետ և Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար (1854–1856 թթ.):

Թուրքմենչայի դաշնագիրը հանդիսանում է երկու ժամանակաշրջանների սահմանագծային ժամանակաշրջան՝ մինչև դաշնագրի ստորագրումը և դաշնագրի ստորագրումից հետո: Այդ երկու ժամանակաշրջաններում դեմքերն ու դերերը փոխվում են:

Առաջին ժամանակաշրջանում Ներսեսը որպես հայ ժողովրդի ներկայացուցիչ հույժ կարևոր դեմք է, վստահելի ու անհրաժեշտ անձնավորություն, իսկ երկրորդ ժամանակաշրջանում՝ ոչ միայն անկարևոր դեմք է,՝ այլև անվստահելի ու խանգարող անձնավորություն:

Առաջին ժամանակաշրջանում Կովկասի կառավարչապետ Պասկևիչը Ներսեսին մեծարում է, փայփայում, նույնիսկ միջնորդում է ցարի առջև պարգևատրել նրան, իսկ երկրորդ ժամանակաշրջանում նույն Պասկևիչը Ներսեսի դեմ հալածանք է սկսում:

Սակայն կարևոր է իմանալ, թե ինչպիսի հատկություններով էր օժտված այդ բարձր պաշտոնյան:

«Պասկևիչը պիտի գործեր փորձառու Երմոլովի հրամանի տակ, և նրա նախաձեռնությամբ, բայց նա [Պասկևիչը] այնքան փառասեր էր, որ ընդունակ չէր ստորադրվելու այլոց: Նա չէր սիրում յուրյանից մեծն ունենալ և նախանձում էր ու թշնամանում յուր ստորադրյալներին, եթե սոքա որևէ փառքի արժանի էին լինում: Նա թույլ չէր տալիս ոչ ոքի յուր վրա ազդեցություն ունենալու, լսած խորհուրդների միշտ հակառակն էր գործում: Կամակոր էր, հպարտ ու չափազանց վրեժխնդիր ու հալածող իր չսիրած մարդկանց: Սակայն նա սիրում էր շողոքորթներին ու հլու հպատակվողներին»[1]:

Օժտված այսպիսի գծերով, անշուշտ, նա պետք է սնված լիներ մեծապետական ախտով և մարդատյացության թույնով:

Ինչպես տեսանք, Պասկևիչն իր բանակով գտնվում էր Նախիջևանում, երբ տեղի ունեցավ Աշտարակի ծանր կռիվը և լուրը

---

[1] Տե՛ս Երիցեան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Բ, էջ 266:

ստանալով վերցրեց իր բանակի հիմնական մասն ու շտապ վերադարձավ Էջմիածին: Տեղ հասնելուն պես նրա առաջին գործը եղավ Աշտարակի կռվի համար իր անբավականությունը հայտնել Ներսեսին, իսկ ավելի խիստ անբավականություն՝ հանդերձ կշտամբանքներով, հայտնեց Կրասովսկուն, բայց ավելի կտրուկ միջոցի դիմելը հետաձգեց:

Տեսանք նույնպես, թե Պասկևիչը լուր առնելով, որ Նախիջևանում իր թողած զորամասը Աբաս Միրզային ջարդելով առաջ է գնացել և գրավել Թավրիզը, շտապ ճանապարհվեց Թավրիզ:

Թավրիզում էր գտնվում Լազարյան տոհմին պատկանող գնդապետ Ղազար Լազարյանը[1] և որպես Պասկևիչի սպա նշանակված էր Թավրիզի պարետ: Ներսեսը լուր ստանալով, որ շուտով սկսվելու են հաշտության բանակցությունները՝ նամակով դիմեց Լազարյանին և խնդրեց միջնորդել Պասկևիչի մոտ, որպեսզի, եթե երկու պետությունների միջև նոր սահման գծվի Արաքս գետի հունով, ապա Պարսկաստանի կողմից արգելք չհարուցվի Ատրպատականի հայ ժողովրդին գաղթելու Արարատյան աշխարհը:

Գնդապետ Լազարյանը՝ ստանալով Ներսեսի նամակը, դիմում է Պասկևիչին և հայտնում Ներսեսի նամակի բովանդակությունը: Պասկևիչը պատասխանում է Լազարյանին հետևյալ կերպ. գրել Ներսեսին և հասկացնել, որ իրեն շատ անդուրեկան է Ներսեսի մտերմությունը Կրասովսկու հետ, որ Ներսեսը Երևանի կառավարության պաշտոնական գրությունների տակ[2], փոխանակ ամեն բանում Կրասովսկու հետ համաձայնեցրած ստորագրելու, թող հակառակ կարծիքներ հայտնի և չարաբանի նրա

---

[1] Լազարյան Ղազար Հովակիմի (Լազարև Լազար, 1797–1871 թթ.), գեներալ-մայոր:

[2] Ներսեսը նշանակված էր Երևանի կառավարչության անդամ, իսկ Կրասովսկին նույն կառավարչության նախագահն էր:

կարգադրությունները: Փոխարենը խոստանում էր Ներսեսի համար բերել տալ Ս[ուրբ] Ալեքսանդր Նևսկու շքանշանը:

Լազարյանն այդպես էլ 1827 թվի դեկտեմբերի 9-ին նամակով հայտնեց Ներսեսին: Իհարկե Ներսեսն այդպիսի ստոր դեր չուզեց կատարել:

Պասկևիչը համոզված, որ Ներսեսը կկատարի իր առաջարկը, դիմեց կայսերը, խնդրելով պարգևատրել Ներսեսին նրա ցուցաբերած ծառայությունների համար: Եվ կայսրը 1828 թվի հունվարի 26-ի հրովարտակով Ներսեսին շնորհեց Ալեքսանդր Նևսկու շքանշան:

Պասկևիչը հետո հասկացավ իր սխալը և ոխ պահեց իր սրտում[1]:

Այդ ժամանակ, երբ Պասկևիչը որպես Աշտարակի կռվի ջարդի պատճառ Կրասովսկուն հալածում էր, կայսրը, պարսկական ահագին բանակի դեմ ռուսական փոքրաթիվ զորքի հերոսական պայքարն ու անկումը համարելով ռուսական զենքի հաղթություն, Կրասովսկուն պարգևատրեց Վլադիմիրի երրորդ աստիճանի շքանշանով:

Եվ բացի այդ, երկար ժամանակ չստանալով Աշտարակի մասին մանրամասն զեկուցումը, 1828 թվի փետրվարին Դիբիչը գրեց Պասկևիչին, թե կայսրը հրամայում է շուտով ուղարկել Աշտարակի պատերազմի[2] նկարագիրը և քաջերի ցուցակը:

Պասկևիչը Կրասովսկու կազմած պատերազմի նկարագիրը մինչ այդ համառորեն պահելով իր մոտ, ստիպված եղավ ուղարկել, սակայն կցելով նրան մի ընդարձակ բացատրություն, որով հայտնում է, որ Կրասովսկու նկարագիրը ճիշտ չէ, շատ բան չափազանցված է, շատն էլ կեղծ է և որ այդ միջոցներով աշխատել է քողարկել իր սխալները:

---

[1] Տե՛ս Երիցեան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա, էջ 316:
[2] Ճակատամարտի:

Բացի այդ, մեղադրում էր Կրասովսկուն, որ իբրև նա կառավարչության նախագահության պոստում հարկերը և ապառիկները չի հավաքել, գործ չի արել և եթե արել է, արել է Ներսեսի առաջադրանքով: Եվ իր բացատրությունը վերջացնում է այս խոսքով. «Ձեզ եմ թողնում դատել, թե կարող եմ ես ցանկանալ ունենալ գեներալ Կրասովսկու նման մի օգնական»:

Այս խոսքերը Պասկևիչը գրում էր այն ժամանակ, երբ դրանից 10 օր առաջ Կրասովսկուն հեռացրել էր պաշտոնից:

Իր բացատրությունների մեջ Պասկևիչը չարախոսության մեծ բաժինը հատկացրել էր Ներսեսին, որի մասին արտահայտվում էր հետևյալ կեղծավոր խոսքերով. «Ներսեսի մասին ես մեծ դժվարության մեջ եմ գտնվում, քաղաքականությունն արգելում է ինձ նրան բոլորովին հեռացնել գործերից, մյուս կողմից, եթե թողնել նրան շարունակել իր ունեցած ազդեցությունը, այն ժամանակ էջմիածնի վանքի կալվածական պահանջներն այլևս վերջ չեն ունենա:

Չեմ ծածկում Ձեզանից և իմ արած սխալները, որոնցից մեկն էլ այն է, որ Երևանը նվաճելուց հետո Ներսեսին ես մասնակից արի այս երկրի վարչության մեջ: Բայց ես երբեք չէի կարծել, թե այս եպիսկոպոսը, որ ամեն բանում ջերմեռանդություն էր ցույց տալիս, հանձն է առել իր պաշտոնը այն նպատակով, որ բոլոր հոգատարությունը գործ դնե բացառապես հայոց համար և, հոգ չտանելով պետական շահերի մասին, ավելի նախադասի հայոց հոգևորականության և մանավանդ էջմիածնի վանքի շահերը: Ես չէի կարող նմանապես նախատեսել, թե գեներալ Կրասովսկին կդառնա միմիայն Ներսեսի կամակատարը... և առանց հովանավորության ու օգնության կթողնի մահմեդականներին, որոնք բնակչության երեք քառորդն են կազմում»[1]:

Պասկևիչը հասավ իր նպատակին:

---

[1] Տե՛ս Երիցեան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, էջ 344–350:

1828 թվի փետրվարի 28-ին Կրասովսկին հրաժեշտ տվեց Երևանին, բայց նրան ճանապարհ ձգեցին հարգանքի մեծ ցույցերով: Ոչ միայն տեղի զինվորական կազմը, XX դիվիզիայի սպայությունը և Էջմիածնի միաբանությունը Ներսեսի գլխավորությամբ, այլև տեղի ու շրջակա գյուղերի հայ ժողովուրդը մասնակցեցին այդ ցույցերին, որոնք առավել ևս գրգռեցին Պասկևիչի չարամտությունը:

Ապա հերթը հասավ Ներսեսին, սակայն հետևյալ պայմաններում. Ներսեսի նկատմամբ Պասկևիչի բողոքներն ու չարախոսությունները պալատական շրջաններին այնքան էլ չէին զարմացնում, ըստ երևույթին նրա անհաշտելի բնավորությունը ամենքին հայտնի էր: Մյուս կողմից Ներսեսի ցուցաբերած ծառայությունները պարսկական խուժումների ընթացքում անտեսել անկարելի էր: Սակայն այդ երկուսին նույն տեղը թողնելը նպատակահարմար չէր, և որոշվեց Ներսեսին հեռացնել Հայկական մարզից, որի համար պետք էր հարմար առիթ և առիթը հանդիսացավ ինքնին:

Այդ միջոցին վախճանվեց Բեսարաբիայի թեմական Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանը և հարց ծագեց, թե ում ուղարկել Բեսարաբիա: Կանգ առան Ներսես Աշտարակեցու վրա:

Նախարար Բենկենդորֆը 1828 թվի ապրիլի 13-ին կայսեր անունից նամակներ ուղարկեց Պասկևիչին, Եփրեմ կաթողիկոսին, նաև իրեն՝ Ներսեսին, հարցում անելով նրանց կարծիքը Ներսեսին Բեսարաբիայի թեմի առաջնորդ ուղարկելու մասին:

Եփրեմին և Ներսեսին գրված նամակներն ուղարկվեցին Պասկևիչի միջոցով:

Բենկենդորֆի նամակն ուղարկելով Ներսեսին, Պասկևիչը կցեց մի նամակ էլ իր կողմից, խնդրելով պատասխանը հայտնել անմիջապես:

Ներսեսն Էջմիածնում նախարարի և Պասկևիչի նամակներն ստանալով, մայիսի 26-ին վերջինին պատասխանեց հետևյալը. «Ձեր մայիսի 21-ի գրությանը պատիվ ունեմ պատասխանել, որ

եկող հունիսի 4-ին ես դուրս կգամ Էջմիածնից և Ապարանի վրայով կընթանամ Թիֆլիս, իսկ ինչ կվերաբերի բարձրագույն հրամանոք իմ Բեսարաբիա ուղևորվելուն, ես պարտք համարում նախ անձամբ տեսնվել Ձերդ պայծառափայլության հետ և ընդունել Ձեր խորհուրդներն ի բարօրություն հայոց ազգին: Խնդրում եմ Ձեզ հաղորդել ինձ, որ կարժանանամ Ձեզ հետ տեսնվելու»[1]:

Ներսեսի այս պատասխանը ավելի ևս գրգռեց Պասկևիչին, որովհետև Ներսեսը Բեսարաբիա գնալու մասին պատասխան չէր տալիս, այլ ուզում էր նախ տեսնվել հայոց ազգի բարօրության համար խոսելու դիտավորությամբ: Տեսնվելու հարցը զայրացնում էր Պասկևիչին:

Պասկևիչն ամեն կերպ խուսափելով հանդիպել Ներսեսին, հունիսի 5-ին մեկնեց տաճկական սահմանը, նախօրոք կարգադրելով վճարել Ներսեսին արքունի գանձարանից ճանապարհածախս՝ համաձայն նրա աստիճանի, նաև առանձին 300 ոսկի:

Ներսեսը նախքան տեղից շարժվելը Էջմիածնի սինոդի կազմը նորոգեց նոր անդամներով, որոնց թվում էր նաև երիտասարդ Հովսեփ վարդապետ Մաթևոսյանը՝ մի եռանդուն և գործունյա անձնավորություն: Ապա հասնելով Թիֆլիս, Վրաստանի թեմը հանձնեց Բզնունյան Սիմեոն եպիսկոպոսին՝ նրան օգնական կարգելով Ալամդարյան այրիացած քահանային, տալով նրան վարդապետի կոչում և 1828 թվի օգոստոսի կեսին անցավ Կովկասյան լեռնաշղթան, բայց ճանապարհին հրաման ստացավ գնալ Քիշնև, մինչդեռ Ներսեսը գնում էր մայրաքաղաք՝ նպատակ ունենալով ներկայանալ կայսերը:

1828 թվի հոկտեմբերի 16-ին Ներսեսը հասավ Քիշնև: Բայց, դեռևս մտքով չանցնելով այն, որ Քիշնև իր տեղափոխությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձևակերպված աքսոր, և որ այդ աքսորի իս-

---

[1] Տե՛ս Երիցեան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, էջ 365:

կական դրդիչը Պասկևիչն է, ուղղեց նրան բարեկամական և մեծարող նամակ, որով խնդրում էր անպակաս անել մինչ այդ իր ցուցաբերած հոգատարությունը հայ ժողովրդի նկատմամբ: Ապա հայտնում էր, որ ինքը հրաժարվեց Քիշնև մեկնելու կապակցությամբ ճանապարհածախսից դուրս հատկացրած 300 ոսկին ընդունել՝ չցանկանալով պետական գանձարանին ծանրաբեռնման պատճառ դառնալ և նորից խնդրելով հոգատարություն մանավանդ դեպի նոր գաղթողները, գործ է ածել հետևյալ դարձվածքը. «Ի տրիտուր իմ աշխատանաց և անձնվիրության՝ աղերսել հաղագս արդար պաշտպանության որբացյալ ազգիս»:

Պասկևիչը Ներսեսի այս նամակը համարելով վիրավորական և բացի այդ հասած լինելով իր նպատակին՝ նրան հեռացնել տալով Կովկասից, ուղղեց անբավական տոնով գրված պատասխան նամակ, որից բերում ենք այստեղ մի քանի դարձվածքներ. «Քաջ ճանաչելով իմ կոչմանս վերաբերյալ պարտավորությունները, ես կարոտություն չունեմ խրատների ... իմ կառավարած երկրում բնակված հայք նույն տեսակ իրավունք ունեն իմ հոգատարությունը վայելելու, որպես և մյուս հավատարիմ հպատակները ... հօգուտ նոցա (հայոց) ոչինչ բարեխոսություն հարկավոր չէ:

– Ձեր սրբազանության ուղևորվելու համար ի Բեսարաբիա իմ նշանակած 300 ոսկի ճանապարհածախսի ընդունելուց հրաժարվելը Ձեր կամքից է կախված:

– Չեմ հասկանում, թե ինչ պատճառով հայոց ազգը Դուք կոչում եք որբացյալ... ամենայն ռուսաց մեծ թագավոր կայսեր բոլոր հպատակներն ունեն նորան ընդհանրական հայր և պաշտպանությանց և, իհարկե, չեն կարող կոչվել որբացյալ»[1]:

Ներսեսը դեռևս գտնվում էր աքսորման ճանապարհին, երբ Դիբիչը 1828 թվի հունիսի 6-ի մի նամակով Պասկևիչին ուղղեց

[1] Տե՛ս Երիցեան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա, էջ 369:

հետևյալ հարցումը. «Ձեր գրություններից թագավոր կայսրը քանիցս անգամ բարեհաճեց նկատել, որ Ներսես արքեպիսկոպոսի գործողությունները շատ անգամ հակառակ են լինում մեր տերության նպատակներին և օգուտին ... արդյոք արդարացի՞ եք համարում Դուք վերոգրյալ եզրակացությունը Ներսեսի վարքի մասին, թե ոչ»:

Այս հարցումին Պասկևիչը հուլիսի 10-ին տվեց երկդիմի պատասխանը. հեղեղելով այն չարակամությամբ: Ահա նրա մի հատվածը. «Ներսես արքեպիսկոպոսի մասին, ճշմարտությունից դրդված պարտք եմ համարում վճռական կերպով կրկնել, որ թեև նորա կողմից տերության դեմ որևէ վնասակար ձեռնարկություն սպասել կարելի չէ, բայց միևնույն ժամանակ, որքան հայտնի է ինձ նորա հատկությունները, պատիվ ունեմ ներկայացնել Ձեր բարեհայեցողությանը, թե ինչ հետևանքներ կարող են առաջ գալ, եթե Ներսեսի փառասիրությունը և նորա անտեղի կողմնապահությունը հայոց գործերում նեցուկ կամ պաշտպանություն գտնեն այս ազգի (հայոց) մյուս նշանավոր անձանց խորամանկության մեջ, մի ազգի, որի հաստատապես ձգտումը եղել է և որքան կարելի է խույս տալ մեր օրենքների ազդեցությունից և ներգործությունից ... դարձնել այդ ազգը առանձին արտոնությանց տեր մի դասակարգ»[1]:

Ներսեսը, շնորհիվ իր արտակարգ ընդունակությունների ու եռանդի, ստեղծել էր հետևողների, միաժամանակ, հակառակորդների հոսանք: Ներսեսի կարիքն ամենից շատ զգում էր տարիքավոր, նաև հիվանդոտ Եփրեմ կաթողիկոսը, որը տարված էր էջմիածնի հեղինակությունը պահելու և հայ ժողովրդի վիճակը բարվոքելու հոգսով, այդ հոգսի իրականացումը գտնում էր միայն Ներսեսի անձնավորության մեջ:

Ներսեսի հակառակորդների թվում գտնվում էին նախ Հովհաննես արքեպիսկոպոսը (հետագայում կաթողիկոս) Կարբե-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 378:

ցին[1], ապա Սերովբե վարդապետը, մի ստոր անձնավորություն, որը գործիք դարձած Պասկևիչի ձեռքում Ներսեսի նկատմամբ ամեն տեսակի չարագործությունների հորինողն էր:

Քանի դեռ Ներսեսը կար, նրա թշնամիները զսպված էին, բայց հեռանալուց հետո նրանք գլուխ բարձացրին և սկսեցին խժդժություններ:

Եփրեմը, որը Երևանի սարդարի ձեռքից 6 տարվա տարագրությունից վերադարձել էր Ներսեսի մեկնումից քիչ առաջ, տեսնելով խռովություններ միաբանության ներսում, նաև Վրաստանի թեմի շուրջ, 1828 թվի հոկտեմբերի 18-ին դիմում է կայսերը և խնդրում վերադարձնել Ներսեսին էջմիածին:

Եփրեմն ամեն կերպ աշխատում է, որ կայսերն ուղղած իր դիմումը հայտնի չլինի, բայց Ներսեսի հակառակորդներն իմանում են այդ մասին և հայտնում Պասկևիչին: Եվ Ներսեսի վերադարձը կանխելու համար Պասկևիչը նոյեմբերի 16-ին այս անգամ ներքին գործերի նախարար Բլուտովին[2] դիմում է մի գրությամբ, որում շոշափում է հայոց հոգևոր գործերի անկանոն վիճակը և կարգավորելու համար առաջարկում է իր միջոցները:

Նախ նա անհրաժեշտ է համարում Ներսես արքեպիսկոպոսին արգելել վերադառնալ Վրաստան, մանավանդ որ նա ձգտում էր Եփրեմ կաթողիկոսի մահից հետո դառնալ հայոց ընդհանուր հայրապետ:

Ապա Հովսեփ վարդապետին բոլորովին հեռացնել եկեղեցական ծայրագույն վարչությունից, էջմիածնի վանքի գանձարանից ու գործերից, ինչպես նաև հեռացնել Ալամդարյան վարդապետին Վրաստանի թեմի վարչությունից:

---

[1] Հովհաննես Ը Կարբեցի, Ամենայն հայոց կաթողիկոս 1831–1842 թթ.:

[2] Բլուտով Դմիտրի Նիկոլայի (1785–1864 թթ.), ռուս գրականագետ, դիվանագետ, պետական գործիչ: 1826 թ. հանդիսացել է պետական քարտուղար, լուսավորության նախարարի ընկեր (տեղակալ) և օտարադավանների գործերով վարչության գլխավոր կառավարիչ: 1830 թ. արդարադատության նախարարի պաշտոնակատար, 1832–1837 թթ. ներքին գործերի նախարար:

Այսպիսով Պասկևիչը հալածում էր ոչ միայն Ներսեսին, այլև նրա կողմնակիցներին անխտիր:

Եփրեմը՝ անտեղյակ Պասկևիչի արարքներին, ինչպես նաև տեսնելով, որ կայսերն ուղղված պատասխանն ուշանում է, դեկտեմբերի 20-ին դիմում է նրան՝ խնդրելով միջնորդել կայսեր առաջ Ներսեսին էջմիածին վերադարձնելու համար:

Եվ, մինչ Եփրեմն ամեն կերպ աշխատում էր հաջողեցնել Ներսեսի վերադարձը, 1828 թվի դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ հայոց հոգևոր գործերի վերաբերյալ հետևյալ վճիռը. «Ներսես արքեպիսկոպոսին քաղաքավարի պատճառաբանությամբ թողնել Բեսարաբիայում և արթուն հսկողություն ունենալ նորա նամակագրության մասին, իսկ կոմս Պասկևիչին՝ հաղորդելով առանց նրա գիտության Եփրեմ պատրիարքի հոկտեմբերի 18-ին այստեղ ուղարկած նամակը, հանձնարարել նմանապես, որ գաղտնի հսկողություն ունենա Հովսեփ եպիսկոպոսի (վարդապետի) և Ալամդարյան վարդապետի վրա, որոնցից առաջինին Ներսես արքեպիսկոպոսը, ձեռնադրելով (՞) եպիսկոպոս, ինքնակամ հանձնել է էջմիածնի կառավարչությունը և վանքական գանձարանը, իսկ երկրորդին, ավագ քահանայությունից վարդապետական աստիճանի բարձրացնելով, հանձնել է Վրաստանի թեմը»[1]:

Այսպիսով Ներսեսի ու նրա կողմնակիցների նկատմամբ Պասկևիչի հարուցած հալածանքը վավերացվում է կայսերական հրամանով՝ վճռվում է Ներսեսին թողնել աքսորյալ վիճակում, գաղտնի հսկողություն սահմանել ոչ միայն Ներսեսի, այլև նրա կողմնակիցների՝ Հովսեփ եպիսկոպոսի և Ալամդարյան վարդապետի գրագրությունների նկատմամբ:

Այսպիսով, հայ ժողովրդի ներկայացուցիչների նկատմամբ Պասկևիչի վարած քաղաքականությունը դարձավ ցարական քաղաքականություն:

---

[1] Տե՛ս Երիցեան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, էջ 487:

«Պայծառափայլ կոմս, ողորմած տեր, որպես հովվապետ եկեղեցվույս՝ խոնարհությամբ հանձս առա կրելու այն խաչը, որ նախատանքով ինձ բարձվեցավ»:

1829 թվի հունվարի 7-ին Ներսեսն այս խոսքերով դիմեց կոմս Դիբիչին՝ շոշափելով հայ ժողովրդի տառապանքները, որ շարունակվում էին:

Հայ ժողովրդի տառապանքները, հատկապես այն ժողովրդի, որը հաշտությունից հետո տասնյակ հազարներով ծգեց ամեն ինչ ու եկավ Պարսկաստանից ու Տաճկաստանից՝ թևավորված վարդագույն խոստումներով, նկարագրելու համար բերում ենք այստեղ իր՝ պարծենկոտ Պասկևիչի 1829 թվի մայիսի 16-ի կայսեր ներկայացրած զեկուցման հետևյալ փոքրիկ հատվածները:

«Ժողովուրդը նահատակվում էր, արդարություն չկար, ամենանշանավոր գործերն ընթանում էին չափազանց դանդաղությամբ և շատ անգամ մի քանի տարի բոլորովին մնում էին առանց շարժողության: Գավառական պաշտոնյաների արած չարաչար կիրառությունը հասած էր վերին աստիճանի»:

«Ժողովուրդը սարսափով տեսնում էր, որ դատարաններում նա չէր գտնում պաշտպանություն, իսկ վարչությունից՝ հովանավորություն և այդպես կորցնելով իր հավատը դեպի կառավարությունը, շատ անգամ կամ ինքնյուրյան բավականություն էր տալիս յուր ձեռքով և ըստ յուր հաճույքի, կամ ոմանք փախչում գնում էին արտասահման»[1]:

Հայ ժողովրդի կացության մասին ավելի վատ նկարագիր տալիս է Պասկևիչի կողմից նշանակված քաղաքական [քաղաքացիական] նահանգապետի պաշտոնակատար Ճավելևսկին, որը բառացի արձանագրում է հետևյալը. «Բոլոր գավառներում գյուղացիք միայն ըստ արտաքին ձևին են ազատ, այնինչ, ի մոտո քննելով, անկարելի է չտեսնել, որ նոքա ամենաչարաչար

[1] Տե՛ս Ա. Երիցեան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, էջ 450:

ստրկության մեջ են գտնվում աղալարների ու մելիքների ձեռքին: Մանավանդ զարմանքի արժանի է, որ հայքը, ճշմարտապես հավատարիմ լինելով տերությանը և ամենից շատ հակված լինելով դեպի արհեստները, երկրագործությունն ու առևտուրը և կազմելով վերջապես ամենաօգտավետ և գործունյա դասակարգը այստեղի ժողովրդի մեջ, ստրկության մեջ են գտնվում ապստամբ [թուրք] աղալարների ձեռքում, որոնք թալանում են նոցա և բոլորովին ավերում միմիայն նոցա առ Ռուսաց տերությունն ունեցած ջերմեռանդության համար: Ոչ մի տեղ քրիստոնյայք չեն գտնվում մահմեդականաց ձեռքում այսպիսի ստրկության մեջ»[1]:

Հայ ժողովուրդը պաշտպանություն չէր գտնում դատարանների և վարչական մարմինների կողմից, թալանվում, ավերվում էր աղալարների ձեռքով և այդ միմիայն նրա համար, որ նրա համակրանքը ռուսաց տերության կողմն էր: Իսկ այդ տերության ներկայացուցիչը, Կովկասի կառավարչապետը կանգնա՞ծ էր արդյոք արդարության պատվանդանի վրա, տեսնենք:

Անձամբ բացում ենք "Акты Кавказской Археографической комиссии" Управление Паскевича, том VII, 1827–1831, էջ 503, հոդ. 457: Այդ համարի տակ բերված է մի գրություն, որը բերում ենք մեր թարգմանությամբ, գեներալ-լեյտենանտ Պանկրատևի[2] նամակը գնդապետ էքսան խանին (առ 11-ն հունիսի 1831 թ., N 3536). «Հայկական մարզային կառավարչությունը ներկայացրել է ինձ մեկ գործ, որում ես տեսա, որ Ձեր ամուսին[3] Բեդր-Նիսա խանումը կորեկ գողանալու համար հրամայել է պատժել հայ Ծատուրովին, որը, ինչպես հաստատել են երդ-

---

[1] Տե՛ս Ա. Երիցեան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, էջ 451:

[2] Պանկրատև Նիկիտա Պյոտրի (1788–1836 թթ.), գեներալ-համարզ, Կովկասյան առանձին կորպուսի շտաբի պետ, Անդրկովկասում տեղակայված զորքերի հրամանատար (1829–1831 թթ.): Ժամանակավորապես կատարել է երկրամասի կառավարչապետի պարտականությունները:

[3] Կինը:

մամբ վկաները և դիակը զննող բժիշկը, մեռել է այդ պատժի հետևանքով:

«Ձերդ պայծառափայլություն, գտնվելով ռուսական կառավարության ծառայության մեջ, չէի՞ք բարեհաճի իմանալ, թե մեր օրենքներն ինչպիսի խստությամբ են հետապնդում մարդասպանությունը և որպիսի խստագույն պատասխանատվության են ենթակա դրա [սպանության] մասնակիցները, ուստի հիշյալ գործի նկատմամբ կառավարության կողմից պահանջվում է հետաքննություն և դատավարություն: Բայց Ձեր ցուցաբերած իսկական ծառայությունը կառավարությանը, Ձեր եռանդուն նվիրվածությունը դեպի Ռուսաստանը, որոնցով Դուք միշտ աչքի եք ընկել և անկասկած չեք դադարի գործել հօգուտ Ամենաօգոստոսափառ մեր միապետին, ինձ առիթ տվին հիշյալ գործն ուղարկել Հայկական մարզային վարչությանը հրամանագրելով այսպես՝ թողնել առանց դատավարության:

Պատիվ ունեմ այս մասին հայտնել Ձեզ և առաջնորդվելով արդարության զգացումով, ես հարկավոր համարեցի առաջարկել Ձեզ, թե հարկավոր չէ՞ արդյոք Ձեր հաշվին որևէ օժանդակություն հասցնել դժբախտ Ծատուրովի որբերին, սրանով չեզոքացնել հիշյալ գործի թողած բոլոր տպավորությունները, և կատարել իսկական ազնվական գործ: Ես հավատացած եմ, որ Ձերդ բարեծնությունը՝ հանուն դեպի ինձ տածած Ձեր անձնական բարեկամության ևս կընդունեք իմ խորհուրդը, որպեսզի հետագայում նվազագույն անբավականությունից[1] խուսափելու համար, Ձեր ամուսինն իրեն ստորադրյալ մարդկանց ենթարկի պատժի ոստիկանության միջոցով: Վերջապես խնդրում եմ Ձեզ ինձ չանտեսել Ձեր ծանուցումով»:

Գեներալ Պանկրատևը Պասկևիչի օգնականն էր, Պասկևիչի գնալուց հետո նա վարում էր Կովկասի կառավարչապետի ապաշտոնը:

---

[1] Անախորժությունից:

Էքսան խանը Նախիջևանի խաներից մեկն էր. սրան էին պատկանում Արազին, Թազաքենդ և Խոկ գյուղերը, որոնց բնակիչների մեծ մասը հայեր էին: Էքսանը պատերազմի ժամանակ անցել էր Ռուսաստանի կողմը, ստացել էր գնդապետի կոչում և կարգվել էր Նախիջևանի շրջանի կառավարիչ (նայիբ):

Կարդացեք հիշյալ նամակը կրկին ու կրկին, զննեք նրա ոճը և պատկերացրեք Բեդր-Նիսա խանումին՝ ասիացի գռեհիկ իշխանուհի, նրա ամուսին Էքսան խանին՝ գնդապետ-կառավարիչ մեկ ընդարձակ շրջանի, ծեծից սպանված Ծատուրովին ու նրա որբերին և Կովկասի կառավարչապետ Պանկրատևին դատավորի դերում. վճիռ՝ «գործը համարել վերջացած»:

Կա՞ր փոփոխություն արդյոք այն կարգերի մեջ, որոնք գոյություն ունեին Պարսկաստանի տիրապետության օրոք:

«Ժողովուրդը սարսափով տեսնում էր, որ դատարաններում չի գտնում պաշտպանություն, իսկ վարչությունից հովանավորություն»,–վկայություն Պասկևիչի:

«Հայք թալանվում, ավերվում էին աղալարների կողմից միմիայն դեպի ռուսաց տերությունն ունեցած ջերմեռանդության համար»,–խոսք Զավելևսկու:

Իսկ Ներսես Աշտարակեցին, որի «որբացյալ հայ ազգ» որակումը վիրավորանք էր համարել Պասկևիչն իր ցարի հասցեին, գտնվում էր Քիշնևում որպես աքսորական:

Այս էր վիճակը հայ ժողովրդի Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց 3 տարի անց:

1895–96 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՐԴԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԻԱՅԻ ՈՒ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԲՌՆԱԾ ԴԻՐՔԸ. ԼՈԲԱՆՈՎ-ՌՈՍՏՈՎՍԿԻ

Մեր այս տեսությունը մենք ընդհատեցինք 1880-ական թվականներին տեղի ունեցող երեք դեպքերի նկարագրումով, դեպքեր ինչպիսիք էին՝ Երևանի գիմնազիայի տեսուչ Բրաժնիկովին ապտակելը, հայոց ծխական դպրոցների առաջին փակումը և հայ-թուրքական [թաթարական, ադրբեջանական] առաջին ընդհարումը և դիմեցինք հայ ժողովրդի անցյալին, լուսաբանելու Հայկական հարցի ծագումն ու ընթացքը՝ սկսելով այն Պետրոս Մեծի և Իսրայել Օրու օրերից և հասցնելով մինչև Նիկոլայ I-ի և Ներսես Աշտարակեցու օրերը:

Ինչպես տեսանք, Հայկական հարցը Պետրոս Մեծի օրոք ջերմ ուշադրություն գրավելով, հետզհետե անուշադրության մատնվեց և հանգեց այն բանին, որ Ներսես Աշտարակեցին Նիկոլայ I-ի օրոք ենթարկվեց «քաղաքավարի» ձևակերպված աքսորի:

Նիկոլայ I-ի օրոք Հայկական հարցի նկատմամբ վարած քաղաքականությունը զարգանալով հանգեց վերը հիշված երեք ակտերին:

Ապա ինչպիսի՞ ընթացք ունեցան [XIX դարի] ութսունական թվականներին տեղի ունեցող երեք դեպքերը. ահա այդ հարցին գալիս ենք պատասխանելու:

Սակայն նախքան այդ, կարևոր ենք համարում կանգ առնել այն արյունոտ անցքերի վրա, որոնք տեղի ունեցան Արևմտահայաստանում [XIX դարի] իննսուն թվականների կեսերին:

1895–1896 թվականներն արևմտահայության համար հանդիսացան մի աղետաբեր ժամանակաշրջան: Եվրոպական դիվանագիտությունը, որը մեռնող Թուրքիայից պատառիկներ

կորզելու համար շատ անգամ Հայկական հարցը մեջտեղ բերելով ճնշում էր գործել ու իր նպատակին հասել, ներկա ժամանակաշրջանում ձեռքերը լվացել ու մի կողմ էր քաշվել, և ոչ միայն մի կողմ էր ձգել սուլթան Համիդի[1] վրա ճնշում գործելու հայտնի մեթոդը, այլև բռնել էր նրան սիրաշահելու ճանապարհը: Այս ճանապարհի վրա կանգնել էին առանձնապես անգլիական պետությունը և ցարական կառավարությունը:

Սուլթան Համիդը, որն իր անարգ գոյությունը կարողացել էր պահպանել միայն ու միայն եվրոպական դիվանագիտության լարերի վրա պարելով, անմիջապես որսաց դրա՝ իր երկրի նկատմամբ նշմարվող շահասիրական պահը և ազատ արձակելով իր կաշկանդված ձեռքերը, տվեց ազդանշան ու ոտքի ելան այն բոլոր տարրերը, որոնք Թուրքիայի պետական գանձարանի սնանկության պատճառով, ապրուստը հայթայթում էին կաշառակերության ու կողոպուտների միջոցով՝ պաշտոնեություն, ոստիկանություն, քրդական համիդեական գնդեր և այլն, սկսվեցին հայ ժողովրդի նկատմամբ բռնություններ, կողոպուտ, ջարդ ու ավերում:

Ջարդն ու ավերածությունը, որի նմանը մինչ այդ տեղի չէր ունեցել, տարածվեցին հայաշատ բոլոր շրջաններում, մանավանդ Վասպուրականում ու Վանում: Բռնությունները տևեցին երկար:

Ինչ էր անում եվրոպական դիվանագիտությունը հայ ժողովրդի համար նրա այս ծանր օրերին, այն դիվանագիտությունը, որը այս դեպքերից շատ առաջ ստիպեց Համիդին քարշ տալ, Պոլիս բերել Մշո դաշտի չարագործներից մեկին՝ Մուսա բեկին այն բանի համար, որ նա առևանգել էր Խարս գյուղից մի հայ աղջկա:

---

[1] Աբդուլ Համիդ II (1842–1918 թթ.), Օսմանյան կայսրության XXXIV սուլթան (1876–1909 թթ.): Հայտնի էր իր դաժանություններով հպատակ ժողովուրդների, մասնավորապես հայերի նկատմամբ: 1890-ական թվականներին սուլթանի հրամանով կոտորվել են 300 հազար հայեր: Կոտորածները նպատակ ունեին վերջ տալ հայերի ազատագրական շարժումներին և Հայկական հարցին:

Այս մեկ հատիկ դեպքի համար Եվրոպան մեծ աղմուկ բարձրացրեց, հատուկ դատարանի առաջ կանգնեցրին Մուսա բեկին և հայ աղջկա բռնի առևանգումն ապացուցվեց, դատարանն արձակեց ծանր պատիժ և Մուսա բեկն աքսորվեց Արաբիա:

Այս նույն դիվանագիտությունը սև դեր կատարեց Վանում տեղի ունեցած վայրագ դեպքերի ժամանակ:

Վասպուրականի գավառներում զանգվածային ջարդերը և հարյուրավոր գյուղերի ավերումը հանձնելով տեղերի վարչություններին, այլ խոսքով՝ քրդական հրոսակներին, նահանգական վարչությունը 1896 թ. հունիսի 8-ին կենտրոնացնելով բազմաթիվ զորք և համիդեական գնդեր, չորս կողմից պաշարեց Վանը և պահանջեց զենքերը հանձնել ու անձնատուր լինել:

Տղամարդկանց ջարդն անխուսափելի էր, մանավանդ երիտասարդության, այդպիսին էին արդեն սկսված վայրագությունների մասին ստացվող լուրերը: Երիտասարդությունը հրաժարվեց անձնատուր լինել, ինքնակամ դահիճների ձեռքն ընկնել[1]: Հրամանը խիստ էր, անհետաձգելի, մեկ, երկու և պաշարողները սկսում են կրակ տեղալ: Հրապարակ է գալիս Անգլիայի հյուպատոս մայոր Վիլյամսը, առաջարկում է երիտասարդությանն անձնատուր լինել, իսկ կյանքի ապահովության մասին ոչ մի երաշխիք: Երիտասարդությունը հրաժարվում է կատարել առաջարկը: Վիլյամսը զայրանում է և անցնում գործողությունների: Տեսնելով, որ հրացանային կրակով հայերին սարսափի բերել հնարավոր չէ, ըստ որում պաշարվածներն իրենց հերթին դիրքեր մտած եռանդուն կերպով պատասխանում էին, խորհուրդ է տալիս պաշարողներին թնդանոթներ բերել և հայերի դիրքերը ռմբակոծել, որը և կատարվում է:

Այդ միջոցին Վանում գտնվում էր ռուսական հյուպատոսի[2] զինվորական կցորդ Մաևսկին, որը երկու տարի շրջելով և

---

[1] Վանի հայ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպում են ազգային երեք կուսակցությունները՝ Արմենական, Հնչակյան և Դաշնակցություն:
[2] Հյուպատոսարանի:

ուսումնասիրելով Վանի ու Բիթլիսի վիլայեթների մի շարք գավառները, 1904 թվին հրատարակել է մի ընդարձակ աշխատություն, որում բավական մեծ տեղ է տրված Հայկական հարցին և մանավանդ եվրոպական դիվանագիտության խաղացած դերին Հայկական հարցում:

Այս աշխատության մեջ Մաևսկին լուսաբանում է Անգլիայի քաղաքականությունը և նրա հյուպատոս Վիլյամսի խաղացած դերը Վանի հիշյալ գործողություններում հետևյալ կերպ. «1903 թվի նոյեմբերի վերջերին Լոնդոնում արդեն լավ էին հասկացել, որ Հայկական գործերը չեն կարող Ռուսաստանին քաշել Տաճկաստանի հետ պատերազմի մեջ, և որ Անգլիայի քաղաքականությունը Հայկական հարցում շրջադարձ էր կատարում»:

Եվ ահա նույն էջում Մաևսկին շարունակում է. «Եվ որովհետև խռովությունների շարունակությունն Արևելքում կարելի էր գտնել պատրաստվող Կրետեի ապստամբության մեջ և ապա հեռանկարում ունենալ հույն-տաճկական պատերազմը, որոշեց հայերին դեն շպրտել»: Եվ ահա, 1895 թ. վերջում ամեն ինչ մեկեն փոխվում է: Հայտնվում են նոր հյուպատոսներ: Հունվարի 26-ին Վան հասնելով, անգլիական նոր հյուպատոս մայոր Վիլյամսը փոխարինում է հայերին սիրելի միստր Ալվարդին և բացարձակ հայտարարում է, որ ինքը եկել է հայերի ոգևորությանը վերջ դնելու համար[1]:

Ապա մանրամասն նկարագրելով Վանի պաշարումը, դիմադրությունը հայերի կողմից և երկու թնդանոթների հրապարակ գալը, հայերի դիրքերի ռմբակոծումը, Մաևսկին բառացի ավելացնում է հետևյալ տողերը. «Թնդանոթները գործի դնելու միտքը նույնպես տվել էր անգլիական հյուպատոսը, որը դրանում տեսնում էր ապստամբներին սարսափեցնելու ազդու միջոց»[2]:

---

[1] Տե՛ս Военно-статистическое описание Ванского и Битлисского вилаетов, В. Т. Маевский, II часть, Тифлис, 1904, с. 88.
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 115:

Եվ Վիլյամսը՝ ծայնակցելով տաճկական թնդանոթային համազարկերին, համոզում է երիտասարդությանը հեռանալ Վանից: 700 երիտասարդներ. որոնցից զենք ունենում են ընդամենը 200-ը, թողնում են Վանը այն պահին, երբ բոլոր ճանապարհները բռնված են լինում զորքերով, համիդեական գնդերով և ոստիկաններով: Այդ 700 երիտասարդները երկու մասի բաժանված, և դեպի Պարսկաստան երկու տարբեր ուղիներ բռնած, հանդիպում են դարանակալ ահագին ուժերի: Տեղի է ունենում հերոսական դիմադրություն և ընկնում են բոլորն անխտիր՝ մի մասը Գարահիսար կոչվող բարձրունքում, իսկ մյուս մասը՝ Աղբակի Բարդուղիմեոսի վանքի մոտերքում:

Այսպիսով անգլիական լպիրշ դիվանագիտությունը հաղթանակում է:

Սակայն ինչ վերաբերմունք ուներ Հայկական հարցի մասին ինքը՝ Մաևսկին, անգլիական դիվանագիտության քննադատը: Միանգամայն անտեսելով այն դաժան պայմանները, որոնցում տառապում էր հայ ժողովուրդը և որի տառապանքների բովից ծագել էր Հայկական հարցը, նա՝ Մաևսկին, անձամբ ականատես լինելով այդ տառապանքներին, Հայկական հարցն անվանում է ոչ այլ ինչ, եթե ոչ հեղափոխական քարոզիչների ստեղծած գործ:

Ահա նրա խոսքերն այդ մասին. «Հայերի հեղափոխական գործունեության գլխավոր օջախը Ասիական Տաճկաստանում նախ և առաջ հանդիսացավ Մերզիֆունը (Մարզվանը, Սվազի վիլայեթը[1], Ամասիայի սանջակը[2]): Այստեղ գոյություն ունեցող ամերիկյան քոլեջը (Հայկական բարձրագույն դպրոցը) հանդիսացավ Լոնդոնում մշակված գաղափարների լավ տնկարանը: Մերզիֆունը տվեց ազատության և անկախության շատ քարոզիչներ, որոնք եռանդուն աշխատանք էին տանում ստեղծելու և առաջ բերելու Անկարայում, Սվազում, Յոզղաթում, Կեսարիա-

[1] Սեբաստիայի նահանգը:
[2] Գավառը:

յում և այլ կետերում խռովություններ և ամբողջ շարք քրեական դատեր»[1]:

Սրանից ավելի բան սպասել ցարական ֆելդֆեբելից հնարավոր չէր: Չէ՞ որ նա կրկնում էր այն, ինչ թելադրում էին վերևից:

Այսպիսին էր Թուրքիայի հայության սոսկալի վիճակը 1895–1896 թվականներին. մի վիճակ, որի մասին ոչ միայն մենք՝ ռուսահայերս իմանում էինք տարածվող լուրերից ու թերթերի հաղորդումներից, այլ այն փրկվածների պատմածներից, որոնք մի կերպ անցնում էին սահմանը, գալիս Իգդիր, Էջմիածին, Երևան և շանթահարում մեզ աներևակայելի մանրամասների նկարագրությամբ: Եվ հասկանալի է, որ այդ իրադրությունը մեծապես հուզում էր ռուսահայության մտքերը:

Եվ հենց այդ ժամանակ էլ ցարի պալատական շրջաններից դուրս է գալիս և Պետերբուրգում տարածում է գտնում մի լպիրշ դարձվածք՝ "Нам нужна Армения без армян" («Մեզ հարկավոր է Հայաստանն առանց հայերի»): Այդ դարձվածքն անցնում է բերնեբերան, հասնում ամեն տեղ և շանթում ամենքին:

Այդ դարձվածքը տեղ է գտել ցարի արտաքին գործերի նախարարի մի զեկուցագրի մեջ: 1895–96 թվականներին ցարական արտաքին գործերը վարում էր Լոբանով-Ռոստովսկին:

Նա անհայտ մարդ չէր, նա տեղ է գտել խորհրդային հանրագիտարանի էջերում, բացում ենք այդ էջը, ահա նրա կենսագրությունը. «Լոբանով-Ռոստովսկին Ալեքսեյ Բորիսովիչ (1824–96), իշխան, ցարական դիվանագետ, 1859–1863-ին դեսպանորդ Կոստանդնուպոլսում, 1867–1878-ին՝ արտաքին գործերի նախարարի օգնական, 1878–79-ին՝ դեսպան Տաճկաստանում, ուր գործնականորեն լուծարվեցին 1877–78 թթ. պատերազմի հետ կապված հարցերը: 1879–82 թթ.՝ դեսպան Լոնդոնում, 1882–95-ին՝ դեսպան Վիեննայում, 1895-ին՝ Բեռլինում, որից

[1] Տե՛ս Военно-статистическое описание Ванского и Битлисского вилаетов, В. Т. Маевский, II часть, стр. 34-35.

հետո նշանակվեց արտաքին գործերի նախարար: Կողմնակից՝ արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը տեղափոխելու Հեռավոր Արևելք: Նպաստեց ռուս-ճապոնական հարաբերությունների սրմանը:

«Մեզ հարկավոր է Հայաստանն առանց հայերի»,–ցինիկ, զազիր մի դարձվածք, որը ծնունդ առավ Պետերբուրգում և որը վավերացվեց ցարական դիվանագետ Լոբանով-Ռոստովսկու միջոցով և իրականացավ սուլթան Համիդի ձեռքով:

ԴԵՊՔԵՐԸ 1898 ԵՎ 1903 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ, ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓԱԿՈՒՄԸ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՑՈՒՅՑԸ

Այժմ վերադառնանք դեպի ինքնությունական թվականները:

1890-ական թվականների վերջին տարիները Ռուսաստանում նշանավորվեցին բանվորական ուժեղ շարժումներով: Արդյունաբերական կենտրոններում և առանձնապես երկու մայրաքաղաքներում, բռնկվեցին զանգվածային գործադուլներ և ցույցեր, ռեակցիայի դեմ դժգոհությունն ընդունեց լայն չափեր: Ինչպես ամեն անգամ, այնպես էլ այս անգամ հիշյալ շարժումներին մեծապես ձայնակցեց Բաքուն: Կառավարությունն իր հերթին ծայր առած շարժումները ճնշելու համար դիմեց ծայրահեղ միջոցների:

Հայ ժողովուրդը ռեակցիայի վերսկսած և նոր թափ ընդունած հալածանքներից ու հետապնդումներից ազատ մնալ չէր կարող, ինչպես դա տեսանք ութսունական թվականների դեպքերին անդրադառնալիս:

Այն մութ ուժերը, որոնք անընդհատ դավեր էին նյութում անհատների դեմ մեզանում, նման անհատական հալածանքնե-

ը շարունակեցին նաև [XIX դ.] ինքնուրույն թվականներին: Սակայն անհատական հալածանքներով նոր թափ ստացած ռեակցիան չէր բավարարում, անհրաժեշտ էր հալածանքն ընդհանուր դարձնել, հարվածն ուղղել լեզվին, դավանանքին, ազգային զգացմունքներին, վերջապես ժողովրդի ֆիզիկական գոյությանը:

Տեսակետ՝ ուղղված ազգային ֆիզիկական գոյության դեմ, մենք տեսանք: Այդ տեսակետն արտահայտվեց Լոբանով-Ռոստովսկու հայտնի դարձվածքում, բայց դա արտահայտություն էր լոկ խոսքով, իսկ ռեակցիային հարկավոր էր գործ, գործողություն:

Եվ 1898 թ. մարտի 26-ին հրապարակվեց ցարական հրամանը՝ փակել ծխական դպրոցները: Նախկին փորձը կրկնվեց այս անգամ: Մենք տեսանք, թե ինչպես 1885 թվին ցարական կառավարության ծխական դպրոցները փակելու հրամանը Երևանում կատարվեց միանգամայն վայրագ ձևով: Ոստիկանական խմբերը խուժեցին դպրոցներն ու դասարանները դասավանդման ժամերին, դուրս քշեցին ուսուցիչներին և աշակերտությանը, և թե ինչպես գործազրկված ուսուցչությունը որպես պատասխան, իրենց արգելված աշխատանքը տեղափոխեցին մասնավոր տներ և հայ կանայք իրենց սենյակները տրամադրեցին ընդհատակյա դասավանդումներին: Սա հայ ժողովրդի լռելյայն ցույցն էր հանդեպ ցարական վանդալիզմի:

Այս անգամ էլ հայ ժողովուրդն անպատասխան չթողեց այդ վայրագությունը, սակայն այլ կերպ, այլ առիթով և ավելի հուժկու առաջինից:

Առիթը հանդիսացավ Հայոց եկեղեցական կալվածքների և գույքերի գրավման հրամանը:

Այդ հրամանը՝ հրատարակված 1903 թ. հունիսի 12-ին, ցնցեց, շանթեց հայ ժողովրդի սիրտը և նա պոռթկաց: Չէ՞ որ եկեղեցական կալվածքների եկամուտով պահվում էին ծխական դպրոցներից բացի թեմական դպրոցները, Ներսիսյան դպրոցը,

Գևորգյան ճեմարանը: Չէ՞ որ նույն կալվածքների եկամուտներով պահվում էին էջմիածնի և մի շարք վանքերի միաբանությունները, նաև թեմական առաջնորդարաններն ու վիճակային գործակալությունները:

Հասկանալի է, որ հարվածն ուղղված էր ոչ միայն հայոց լեզվին և ուսուցմանը, այլև նրա դավանանքին և հայոց եկեղեցուն:

Հրամանը խիստ էր, ապագան անմխիթար:

Եկեղեցական կալվածքների հսկողությունը ենթակա էր հայոց կաթողիկոսին. ինչպես էջմիածնի ու մյուս վանքերի, այնպես էլ բոլոր թեմերի եկեղեցական կալվածքների եկամուտների ստացման ու ծախսման հսկողությունը կաթողիկոսի ձեռքում էր, հետևապես կաթողիկոսն[1] այդ խնդրում ուներ մեծ դեր և բոլորին հուզում էր մեկ միտք, թե կաթողիկոսն այդ խնդրում ի՞նչ դիրք կբռնի:

Լուրեր են հասնում էջմիածնից, որ այդտեղ են կանչված թեմական առաջնորդները և մի քանի աչքի ընկնող հոգևորականներ, որ տեղի է ունեցել խորհրդակցություն և որոշվել է դիմադրել այդ հրամանի իրագործմանն ու հրավիրվածները վերադարձել են իրենց տեղերը: Որոշել են ու վերադարձել, տեղում մնացել է միայն կաթողիկոսը և նա պիտի պայքարի միայնակ:

Ժողովրդի տարբեր խավերում անվստահություն կար կաթողիկոսի անձի նկատմամբ, հարցը լուրջ էր, պատասխանատու, անհրաժեշտ էր զանգվածային դիմադրություն:

Այլ է անհատը, այլ են զանգվածները. անհատն անկայուն է, սայթաքող, մինչդեռ զանգվածները հավաքական ուժ են, կայուն, անհողդող, վճռական:

Եվ մինչ նահանգական վարչության ներսում տարվում էին նախապատրաստական աշխատանքներ՝ անցնելու հրամանի կատարմանը, դրսում հայ ժողովրդի լայն խավերում արծարծ-

[1] Մկրտիչ Ա Վանեցին (Խրիմյան Հայրիկ, 1820–1907 թթ.), Ամենայն հայոց կաթողիկոս 1892–1907 թթ.:

վում և հասունանում էր մի միտք՝ հիշյալ հրամանի նկատմամբ ցուցաբերել դիմադրություն:

Դիմադրության մի ակտ տեղի ունեցավ էջմիածնում: Ցարական հրամանը նահանգապետի հատուկ պաշտոնյան տանում էր էջմիածին:

Այդ պաշտոնյան խռնված բազմության ներկայությամբ առաջարկում է ռուսերեն գիտցող որևէ մեկին կարդալ հրամանը և թարգմանել հայերեն: Ոչ ոք չի համաձայնվում թարգմանել, չնայած ներկա եղողների շարքերում լինում են ռուսերեն գիտցող ուսուցիչներ և այլ մարդիկ: Վերջապես, ոմն Փոթեյան հարկադրված է լինում կատարել պաշտոնյայի ասածը: Դա հասմարվում է դավաճանություն և երկու օր անց Փոթեյանը սպանվում է գլխից ձեռք վերցրած մի մարդու կողմից:

Սակայն այդ դեպքից հետո տեղի ունեցավ զանգվածային մի ցույց Երևանում, որը կրեց համաժողովրդական բնույթ:

Նույն 1903 թվի օգոստոսի 15-ն էր, օրը կիրակի, նորակառույց Լուսավորիչ եկեղեցում կրոնական տոն էր: Պատարագին ներկա գտնվելու համար այդտեղ էր եկել թեմական առաջնորդ եպիսկոպոս Պարզյանը: Եկեղեցու ներսն ու դուրսը խռնված բազմության միակ խոսակցությունը եկեղեցական կալվածքների գրավման հրամանի շուրջն էր:

Մաղթանքը վերջանում է, եկեղեցու ելքի դռան շեմքին երևում է Պարզյանի դեմքը: Մի քանի երիտասարդներ կանգնեցնում են նրան ու պահաջում.

– Սրբազան, պետք է գաք գնանք էջմիածին և կաթողիկոսից պահանջենք, որ կալվածքները չհանձնի:

– Ես էջմիածնում եղել եմ, միաբանության խորհրդակցությանը մասնակցել և իմ կարծիքը տվել եմ, նորից գնալու կարիք չեմ զգում:

– Ո՛չ, պետք է գաք,– պնդում են երիտասարդները:

– Ես չեմ գնա, եթե ուզում եք, կարող եք դուք գնալ:

Այս հարց ու պատասխանից հետո Պարզյանը ետ քաշվեց եկեղեցու ներսը, որի դուռը ներսից կողպեցին և բակում խռնված բազմության մեջ, ինչպես էլեկտրական հոսանք, տարածվեց.

– Դեպի էջմիածին:

Մինչ այս, եկեղեցու դարպասին մոտեցավ մի կառք: Եկեղեցու դուռը բացվեց, առաջնորդը դուրս եկավ շրջապատված եկեղեցու անձնակազմով և դիմեց դեպի կառքը, որն իսկույն շրջապատվեց բազմությամբ: Ձիերի սանձերից ամուր բռնեցին մի քանի ձեռքեր, ժողովրդի մի մասն առաջ անցավ, կառքը կամացուկ սկսեց շարժվել, հետն էլ շուրջ բոլորը հավաքված ահագին բազմությունը: Երթը փողոցը բռնած անցավ ոստիկանատան մոտով և ապա ծռվելով դեպի աջ, նահանգապետի դռան առջևով շարժվեց դեպի հրապարակ: Կառքը մի քանի անգամ փորձեց դուրս պրծնել բազմության միջից, բայց չհաջողվեց: Կառքը շարժվում էր ավելի շատ ձեռքերի վրա, քան անիվների, իսկ աղմուկը բռնել էր ողջ փողոցը: Հետզհետե ժողովրդի շարքերը խտանում էին: Տիրող աղմուկի ձայնից դուրս եկավ նահանգապետը, ձեռքերով ինչ-որ շարժումներ արեց, մի քանի ոստիկաններ փորձեցին մոտենալ կառքին, բայց ապարդյուն: Գնալով երթը մեծանում էր, աղմուկը ծավալվում էր և երբ երթը հասավ Հրազդանի կամրջին, նա արդեն կլիներ առնվազն 3000 հոգի:

Այդ հսկա բազմությունը հետզհետե ուռճանալով սրընթաց կտրեց անցավ Փարաքար գյուղը, ավելի քան 10 վերստ տարածություն՝ ճանապարհի կեսից ավելին, և մեկեն՝ համաձայն նահանգապետի հեռագրի, հայտնվեցին էջմիածնից ուղարկված մի խումբ ստրաժնիկներ[1], որոնք փորձելով կանգնեցնել երթը, ենթարկվեցին քարերի տարափի և երեսները դարձրեցին ու

[1] Ստրաժնիկ, պաշտոնական անվանումն է ոստիկանական ստրաժնիկ, գավառական ոստիկանական պահպանության ստորին պաշտոն Ռուսական կայսրությունում (1903–1917 թթ.): Համանման պաշտոնը քաղաքային ոստիկանությունում կոչվել է գորոդովոյ:

փախան: Ցույցը հասավ էջմիածին աղմուկով և բացականչությունով՝ կտրելով 18 վերստ տարածություն: Նույն թափով հսկա բազմությունը խուժեց, հեղեղեց էջմիածնի վանքի ընդարձակ բակը, ապա վեհարանի բակն ու պատշգամբը: Պատշգամբ դուրս եկավ ծերունի Խրիմյանը.

– Կեցցե՛ Խրիմյան Հայրիկը, – դղրդում էր օդը հզոր գոչումից:

– Շնորհակալ եմ Ձեր սրտաբուխ հարգանքի համար, խնդրում եմ հանգստացեք, վերադարձեք ձեր տեղերը, ձեր այդ ցույցը թող լինի ինձ զորավիգ: Խրիմյան Հայրիկը խոստանում է կալվածքները չհանձնել և նա կկատարի իր խոստումը:

Ցուցարարները նույն օրը վերադարձան Երևան մեծ խանդավառությամբ և թեպետ հաջորդ օրը կատարվեցին մի շարք ձերբակալություններ, սակայն Երևանի ցույցն ազդանշան հանդիսացավ և համակեց ոչ միայն մոտակա շրջանները, այլև հեռավոր վայրերը:

Երևանի ցույցին մասնակցեցին անմիջապես Աշտարակի, Ղամարլուի[1] և Իգդիրի շրջանները, այդ տեղերից նույնպես դեպի էջմիածին կատարվեցին երթեր:

Ապա տեղի ունեցան ցույցեր Շուշիում, Գանձակում և այլ վայրերում՝ ընդհարվելով ոստիկանական ջոկատների հետ, որոնց ընթացքում, օրինակ Գանձակում, եղան նաև զոհեր:

Երևանի ցույցը միաժամանակ հանդիսացավ ազդակ այն դիրքի, որ բռնեց Խրիմյանը:

Ցարական հրամանը գործադրելու համար Երևանից էջմիածին գնաց Երևանի փոխնահանգապետ հայատյաց Նակաշիձեն[2] իր շքախմբով:

---

[1] Արտաշատ:

[2] Նակաշիձե Միխայիլ Ալեքսանդրի, 1904–1905 թթ. Բաքվի նահանգապետ, հայ-թաթարական ընդհարումները հրահրողներից մեկը: Սպանվել է հայ վրիժառուներ Դ. Կանայանի և Մ. Չարուխչյանի կողմից:

Սա ներկայացավ կաթողիկոսին և վստահ իր կոչումին, առաջարկեց ընդունել հրամանը և հանձնել էջմիածնի դրամարկղի բանալիները, դրամարկղը, որում պահվում էին կալվածական փաստաթղթերը:

– Այդ հրամանը ես ընդունել չեմ կարող, – կտրականապես հայտարարեց կաթողիկոս Խրիմյանը:

Նակաշիձեի համար պատասխանն անսպասելի էր, սակայն փորձեց համոզել կաթողիկոսին:

– Կայսերական հրամանին պետք է ենթարկվել և այն պետք է կատարել, – հայտարարեց Նակաշիձեն:

Խրիմյանի դեմքն այլայլվեց, ներսը ալեկոծվեց.

– Ես այդպիսի հրամանի չեմ ենթարկվի, – պատասխանեց Խրիմյանը և վեհարանից դուրս գնաց:

Խրիմյանի դուրս գնալուց հետո կանչվեցին փականագործներ, որոնց և հրամայվեց կոտրել երկաթյա դրամարկղը:

Ծանր երկաթյա դրամարկղը սկսեց որոտալ, ծանր մուրճի հարվածները թռչում էին վանքի պարիսպներից դուրս ու սրտեր խոցում:

Կուռ երկաթյա դրամարկղը ջարդվեց ու կողոպտվեց, բայց հայ ժողովրդի կամքը չընկճվեց:

Վանքի պարիսպներից դուրս գտնվում էին 50-ից ավելի խանութներ, որոնք պատկանում էին վանքին և դրանց վարձերը կազմում էին վանքի եկամուտների մի ճյուղը: Եվ ահա 5 տասնյակից ավելի խանութպաններ և արհեստավորներ խոսքները մեկ արած, որպես ցույց, դուրս տարան իրենց ապրանքները, իրենց մուրճ ու մկրատները, դազգահները, և բանուկ շուկան միանգամայն ամայացավ ու վարձերից զրկվեց:

Բացի այդ, կալվածքների գրավման կապակցությամբ տեղի ունեցավ մի այլ ակտ, անհատական ակտ, սակայն որը լուսաբանում է այդ օրերի հայ ժողովրդի հոգեկան ապրումները: Այդ

ակտը այն սպանության փորձն էր, որ կատարվեց Գոլիցինի[1] վրա Թիֆլիսից դուրս կառքով անցնելիս: Գնդակը մի փոքր շեղվեց, Գոլիցինը կենդանի մնաց, սակայն նրա դեմքի վրա դրոշմվեց մի սպի՝ որպես հայ ժողովրդի ցասման նշան:

Այստեղ մենք կարևոր ենք համարում կանգ առնել մի ուշագրավ փաստի վրա, որը հղացումն է հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի 1898–1903 թվականների քաղաքականության:

Երևանը բնիկ ռուս ժողովուրդ չի ունեցել, այլ ունեցել է ռուս պաշտոնեություն, որը շարունակ փոփոխվում էր և որից շատ քչերը միայն որոշում էին անցնել մշտական բնակության: Կար նաև կայազորը՝ մի քանի հարյուրի չափ, որոնց որոշ մասը միայն ռուսներ էին: Եվ ահա այդ ոչ մեծ թիվ կազմող ռուս պաշտոնեության և ռուս զինվորության համար Երևանի հինավուրց բերդի պարիսպների ներսում գոյություն ուներ ռուսական եկեղեցի:

Չնայած այդ բանին, որոշ պնդագլուխներում միտք է ծագում Երևանում հիմնել մեկ շքեղ ռուսական եկեղեցի և այն էլ Երևանի միակ և այն էլ ոչ ընդարձակ հրապարակի կենտրոնում:

Եվ ահա 1898–99 թվին Երևանի քաղաքագլուխը ստանում է նահանգապետից գրություն, որով առաջարկվում է հիշյալ հրապարակում ռուսական եկեղեցու համար հատկացնել տեղ: Քաղաքագլուխը չի կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ քաղաքի միակ հրապարակը կարելի է շքազարդել եկեղեցու կառու-

---

[1] Գոլիցին Գրիգորի Սերգեյի (1838–1907 թթ.), հեծելազորի գեներալ, պետական գործիչ, 1896 թ. դեկտեմբերի 12-ից մինչև 1905 թ. հունվարի 1-ը Կովկասի կառավարչապետ: Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման նախաձեռնողներից մեկը: 1903 թ. հոկտեմբերի 14-ին Թիֆլիսի մոտ գտնվող Կոջորի կիրճում ծանր վիրավորվում է Սոցիալ դեմոկրատական հնչակյան կազմակերպության վրիժառուների կողմից: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ալեքսանյան Կարինե, Պետրոս Մոճոռյանի հուշերը Կովկասի կառավարչապետ Գրիգորի Գոլիցինին ահաբեկելու մասին, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, N 1, 2010, էջ 121–128, Հովհաննիսյան Գեղամ, Հնչակյան կուսակցության պատմություն (1885–1915 թթ.), Երևան, 2012, էջ 146:

ցումով, միաժամանակ չի համարձակվում միայնակ մերժել նման պահանջը:

Ուստի հրավիրում է քաղաքային խորհրդի նիստ և նիստի առաջ դնում է նահանգապետի պահանջը: Քաղաքային խորհուրդը որոշում է հրապարակի փոխարեն տեղ հատկացնել քաղաքային մեծ ներկայիս [նախկին] Կոմունարների այգում: Այս որոշումը նահանգապետը համարելով հանդգնություն, հայտարարում է. «Ես կցրեմ այդպիսի քաղաքային խորհուրդը, որը համարձակվում է մերժել ռուսական եկեղեցու համար հրապարակում տեղ հատկացնելու պահանջը»: Քաղաքային խորհուրդը տեղի է տալիս, չէ՞ որ նահանգապետից բարձր բազմած էր հայակեր Գոլիցինը:

Կարճ ժամանակում պետական գանձարանի գումարներով հիշյալ հրապարակում վերակառուցվեց ռուսական նոր եկեղեցին, որն իր բարձրությամբ գերազանցում էր քաղաքում եղած տասի չափ հայկական եկեղեցիներին և թուրքական մզկիթներին: Եվ ռուսական եկեղեցու կառուցումն ավարտվեց այն միջոցին, երբ հայոց նոր եկեղեցու կառուցումն դեռևս չէր ավարտվել, չնայած որ նրա հիմքը գցվել էր 15 տարի առաջ:

Հայոց նոր եկեղեցին կոչվում էր Գրիգոր Լուսավորիչ, իսկ ռուսական նոր եկեղեցին՝ Նիկողայոս Հրաշագործ, սակայն այդ եկեղեցու երկու թևերի բեմերից մեկը կոչեցին Գրիգոր Լուսավորչի անունով: Սա մի թակարդ էր հայոց եկեղեցու դեմ, բայց որը նպատակին չհասավ:

Ես հիշում եմ, այդ օրը շաբաթ օր էր, երբ հայտարարվեց, որ վաղը ռուսաց նոր եկեղեցում կատարվելու է հանդիսավոր մաղթանք: Շատ հայեր լոկ հետաքրքրության համար ցանկանում էին այցելել ու տեսնել այդ եկեղեցու ներսը, սակայն հաջորդ առավոտ եկեղեցու դրսի պատերի վրա փակցրած գտան թռուցիկ, որում ասված էր, որ այդ եկեղեցին և նրա Գրիգոր Լուսավորիչ կոչված երկրորդական մեկ բեմը ոտնձգություն է հայոց եկեղեցու դեմ, ուստի ոչ մի հայ չպետք է ոտք դնի այդ եկեղեցու

շեմքը: Այդպես էլ եղավ, ոչ մի հայ ոտք չդրեց այդ եկեղեցին, բացի այդ, հիշյալ եկեղեցին գոյություն ունեցավ ընդամենը երկու տասնյակ տարի, որը ցցված մնաց հրապարակում որպես ստոր հղացումների և դավադիր միտումների մի սև կոթող, բայց որն էլ ի վերջո կործանվեց բոլշևիկների կողմից:

ՌՈՒՍ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՆՐԱ ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Մինչև հայ ժողովրդի նկատմամբ գոլիցինյան գրոհը շարունակվում էր, մինչև հայոց դպրոցների փակման և եկեղեցական կալվածքների գրավման պատճառած վերքը մորմոքվում էր և ժողովրդի մեջ դեռ պահպանվում էր լարվածությունը, Ռուսաստանում տեղի ունեցավ մի անցք [դեպք], որը եկավ հիմքից ցնցելու ցարական ռեժիմը, դա ռուս-ճապոնական պատերազմն էր[1]:

1904 թ. հունվարի 26-ի լույս 27-ի գիշերը ճապոնական ականակիրները գաղտագողի մոտեցան Պորտ-Արտուրի[2] ռուսական նավատորմիղին այն միջոցին, երբ նավերից մեկի վրա ինչ-որ տարեդարձի տոնակատարություն էր: Մեկեն պայթեցին ականներ և ռուսական մի քանի առաջնակարգ նավեր խորտակվեցին իրենց անձնակազմերով:

Պատերազմը բորբոքվեց և ծավալվեց ռուսական բանակի համար միանգամայն անհաջող հետևանքներով, տեղի ունեցան խոշոր ճակատամարտեր, որոնք վերջանում էին ռուսական բանակի պարտությամբ: Այդ ճակատամարտերից մեկը, որ տեղի ունեցավ Մուկդենի մոտ և կոչվեց Մուկդենի ճակատամարտ[3], որում երկու կողմերից մասնակցեցին հարյուր հազարավոր

---

[1] Ռուս-ճապոնական պատերազմը (1904–1905 թթ.) մղվում էր Ռուսական կայսրության և Ճապոնիայի միջև՝ Մանջուրիայի և Կորեայի նկատմամբ վերահսկողություն ունենալու համար: Պատերազմն ավարտվում 1905 թ. օգոստոսի 23-ին Պորտսմուտում (ԱՄՆ) հաշտության պայմանագրի կնքմամբ: Ռուսաստանը Ճապոնիային է զիջում Սախալինի հարավային մասը, Լյաոդունյան թերակղզին ու Հարավ-մանջուրական երկաթուղին:

[2] Պորտ Արտուր, նավահանգստային քաղաք Չինաստանում, Դեղին ծովի ափին:

[3] Մուկդեն քաղաքի մոտ 1905 թ. փետրվարի 6-ից մինչև 25-ը տեղի ունեցավ վճռորոշ ճակատամարտ ռուսական և ճապոնական բանակների միջև, որտեղ ռուսական կողմը պարտություն է կրում:

սվիններ, պարտվեց ռուսական բանակը՝ տալով 120 հազար սպանված ու գերի, որով վճռվեց պատերազմի բախտը:

Բացի այդ, Ռուսաստանը պարտություն կրեց նաև ծովի վրա: Բալթյան նավատորմիղը, որը զինված էր նորագույն տեխնիկայով, ուղարկվեց Պորտ Արտուրին օգնության, բայց դեռ տեղ չհասած, Ցուսիմայի[1] մոտ, ընդհարվեց թշնամու նավատորմիղի հետ և կարճատև ճակատամարտից հետո խորտակվեց, որով և Ռուսաստանը զենքը վայր դրեց:

Ինչ հետևանք ունեցավ այդ պատերազմը: Նախ և առաջ տեղի ունեցավ տնտեսական քայքայում ողջ Ռուսաստանում, կյանքը թանկացավ, այն ավելի մեծ չափով անդրադարձավ բանվորական զանգվածների վրա: Դժգոհությունը գնալով դառնում էր սպառնական, ապա գլուխ բարձրացրին գործադուլներն ու ցույցերը, որոնք հաճախ ընդհարվում էին ոստիկանական ջոկատների հետ ու առաջ բերում լուրջ խռովություններ:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Ի՞նչ էր մտածում հայ ժողովուրդը:

Հայ ժողովուրդն ազատ չէր այն տրամադրություններից, որոնք ծավալվում էին երկու մայրաքաղաքներում և արդյունաբերական կենտրոններում: Նա դժգոհ էր ավելի շատ, ըստ որում ընդհանուր տնտեսական ծանրությունից բացի, նա չէր մոռանում դպրոցների փակման և կալվածքների գրավման վիշտը: Եվ չպետք է զարմանալ, որ սկսված անհաջող պատերազմից ստացվող յուրաքանչյուր պարտության լուր հայ ժողովուրդն ընդունում էր, որպես սփոփանք իր կրած վշտի:

---

[1] Ռուս-ճապոնական նավատորմների միջև ճակատամարտը տեղի է ունենում 1905 թ. մայիսի 14-ից մինչև 15-ը, Ցուսիմայի ծովախորշում, համանուն կղզու մոտ: Ճակատամարտն ավարտվում է ռուսական նավատորմի պարտությամբ:

Միաժամանակ ուժեղ թափով վերսկսեց իր սև աշխատանքը ռեակցիան ողջ Ռուսաստանում: Վտանգվել էին ցարական ռեժիմի հիմքերը, պետք էր փրկել այն և ահա ոտքի հանվեցին ոստիկանական ու ժանդարմական ջոկատները, զորամասերը և կազակային գնդերը: Հրաման տրվեց տեղական ու երկրամասային վարչական մարմիններին՝ գործի դնել բոլոր միջոցները, ճնշել շարժումը:

Դրա խստագույն գործադրումը տեղի ունեցավ Կովկասում, Անդրկովկասում և մանավանդ այն շրջաններում, ուր կողք կողքի ապրում էին հայ և թուրք ժողովուրդները:

Օրագրվեց ու սկսվեց մի սև աշխատանք. ինչու՞ գործի մեջ քաշել ոստիկանությունն ու զենքը, եթե կարելի է թունավորել մտքերը, հրահրել ազգամիջյան բախումներ և միմյանց դեմ հանել երկու հակառակ մասսաները: Իսկ այդպիսի ձեռնարկության համար հող կար, որքան կամենաք:

Վրաց ժողովրդին մոլորեցնել, նրան գործիք դարձնել հնարավոր չէր: Նա ավելի քան գիտակից էր ու խելացի, որ կարելի լիներ նրան շեղել: Նույնը հայ ժողովրդի նկատմամբ, սակայն թուրք զանգվածը տարաբախտաբար անգիտակ էր, ընդհանուր շահերը չըմբռնող, ճիշտ է գիտակից ու խելացի մտածող տարրեր կային նաև թուրք ժողովրդի մեջ, բայց այդպիսիների թիվն այնքան փոքր էր, որ անգիտակ զանգվածի վրա ազդել անկարող էր: Միչդեռ թուրքերի վրա մեծ ազդեցություն ուներ կալվածատեր խաների ու բեգերի դասը, որն իր շահերից ելնելով ձեռք-ձեռքի տված տեղի ռուս պաշտոնեության որոշ մասի և սևհարյուրակային կազմակերպության[1] հետ, թունավորում և ոտի

[1] Սև հարյուրյակայինները ծայրահեղ աջ կազմակերպությունների («Միքայել Հրեշտակապետի միություն», «Ռուս ժողովրդի միություն», «Ռուսական միապետական կուսակցություն», «Ռուս մարդկանց միություն») անդամներն էին, որոնք գործել են Ռուսաստանում հիմնականում 1905–1917 թթ. և պաշտպանություն են գտել իշխանությունների կողմից: Նրանք հանդես էին գալիս միապետության, միապետական կարգերի պաշտպանությամբ, ուստի նրանց համար խորթ էր ազգային փոքրամասնությունների ցանկացած նկրտում:

էր հանում թուրք անգիտակ զանգվածներին ու քշում էր իր կողքին ապրող հայ գյուղացու ու քաղաքացու վրա՝ հագուրդ տալով կողոպուտի ու հարստանալու բնազդին:

Եվ ապա այն պահին, երբ Ռուսաստանի խոշոր քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում տեղի էին ունենում գործադուլներ, ցույցեր և ընդհարումներ ոստիկանական ու ոտքի հանված զորամասերի հետ, Անդրկովկասում՝ Բաքվում, Երևանում, Գանձակում, Թիֆլիսում և այդ նահանգների բազմաթիվ շրջաններում, պայթում էին հայ-թուրքական ընդհարումները:

Եվ սկսվեց կողոպուտների, ավերումների և զանգվածային ջարդերի շղթան՝ սկիզբ առնելով Բաքվում, հետո Երևանում, արյունոտ էջեր գրվեց հայ ժողովրդի պատմության մեջ:

Ինչու՞ հայ-թուրքական ընդհարումն առաջին անգամ տեղի ունեցավ Բաքվում և ապա Երևանում: Որովհետև այդ երկու քաղաքներում վարչական մարմինների թիկունքում գործում էին «իսկական ռուս մարդկանց միություն», ավելի ճիշտ, «սևհարյուրյակային» կոչվող մարմինները:

Ի՞նչ տարրերից էին կազմված այդ մարմինները, ահա հարց, որն անհրաժեշտ ենք համարում լուսաբանել, նկատի ունենալով այն ժամանակվա Երևանի իրականությունը:

Դեռևս 1880-ական թվականներին հայտնվեց մի ռուս բժիշկ Ուրազով ազգանունով, որը հաստատվելով Երևանում, երկու տասնյակ տարիների ընթացքում իր ճարպկության շնորհիվ հասավ մինչև նահանգական բժշկի պաշտոնի: Կարճ ժամանակի ընթացքում նա կարողացավ մուտք գործել հայ և թուրք ժողովուրդների լայն խավերում: Յուրացրեց հայերեն և թուրքերեն լեզուները, մոտիկից ուսումնասիրեց կենցաղն ու բարքերը, նաև ընդունակություններն ու ձգտումներն այդ երկու ժողովուրդների մեջ: Ապա մոտիկ կապեր հաստատեց թուրք ազգային շրջանների հետ, իսկ հայերի նկատմամբ ուներ միայն մի զգացում՝ ատելություն, միանգամայն մոռանալով բժշկի մարդասիրական կո-

չումը, այդ զգացումով էլ ոտք դրեց քաղաքական անպարեզ, պաշտոնական շրջաններում ձեռք բերեց մեծ ազդեցություն ու անցավ գործի: Այդ գործը մի որակում ուներ՝ դավադրություն:

Եվ այս բժիշկը հանդիսացավ արտահայտիչն այն հոսանքի, որը ջանք էր թափում փրկել ցարիզմի խարխլված հիմքերը, թունավորելով մտքերն ու առաջ բերելով ազգամիջյան արյունոտ ընդհարումներ:

Այս հոսանքի մեջ գործում էին երկու այլ բժիշկներ՝ Չելիադինովն ու Մալյուժենկոն, պետական պալատի կառավարիչ Լեսնիան, Երևանի ոստիկանապետ Բալուևը, Երևանի գիմնազիայի տեսուչ Բրաժնիկովը և այլոք: Այս հոսանքի մեջ գործում էր նաև Երևանի փոխնահանգապետ Նակաշիձեն, որը չբավարարվելով իր պաշտոնական հնարավորություններով, գալիս էր օժանդակելու նաև այս դավադիր կազմակերպությանը, մի դեմք, որը կալվածքների գրավման ժամանակ էջմիածնի երկաթե դրամարկղը փակելիս կատարեց իր սև գործը և դրա համար առաջ քաշվեց ընդհուպ մինչև Բաքվի նահանգապետի պաշտոնը և այդ պաշտոնում ևս զազրելի դեր կատարեց:

Այս դավադիր հոսանքի հետ սերտորեն կապված էին Սուրմալուի գավառապետ հայակեր Բոգուսլավսկին, էջմիածնի գավառապետ Շմեռլինգը և էջմիածնի հայոց սինոդի պրոկուրոր Կանչելին:

Սրանք ահա ղեկավարում ու ոգեշնչում էին այն հոսանքը, որը չարամիտ տականքների ձեռքով երկու տարի անընդհատ կազմակերպում էր ազգամիջյան ընդհարումներ ու ջարդեր:

Ազգամիջյան ընդհարումների նպաստավոր վայր էր Բաքուն: Նախ այդ քաղաքն իրենից ներկայացնում էր բազմացեղ ժողովուրդների խառնարան, որում ռեակցիան կարողանում էր հավաքագրել բավականաչափ ուժեր:

Ապա, շնորհիվ իր ծաղկած արդյունաբերության, Բաքուն միաժամանակ բանվորական խոշոր կենտրոն էր, որի շնորհիվ Ռուսաստանի խոշոր բանվորական կենտրոններում տեղի ունե-

ցող բանվորական շարժումներն անմիջապես արձագանք էին գտնում այստեղ՝ ի հայտ բերելով սպառնալիք տիրող կարգերին:

Սակայն Բաքուն դեռևս չուներ կազմակերպված բանվորական զանգված, և ռեակցիան կարողանում էր իր սև գործն անել:

Եվ Բաքվի ռեակցիան առաջինը տվեց հայ-թուրքական կոռստաբեր ընդհարման ազդանշանը:

1905 թ. փետրվարի 6-ին Բաքվում մեկեն պայթեց հայ-թուրքական արյունալի ընդհարումը՝ տևելով երեք օր, սակայն դա ոչ թե ընդհարում էր, այլ հայերի գլխովին ջարդ:

Ընդհարումը Բաքվում կրկնվեց նույն թվի օգոստոսի 20-ին, տևելով մինչև ամսի վերջը:

Եվ ապա կրկնվեց հոկտեմբերի 20-ին, տևելով ամբողջ հինգ օր:

Բաքվի առաջին ընդհարմանը ծայնակցեց Երևանը: Այստեղ էլ ընդհարումը պայթեց մեկեն և այն էլ Բաքվի դեպքից ընդամենը չորս օր անց: Թեև Երևանի ընդհարումը տևեց երկու օր, սակայն նա կրկնվեց մի քանի անգամ, այն է՝ նույն թվի մայիսի 23–26-ին, սեպտեմբերի 18-ին, 1906 թվի մայիսի 27-ին և հունիսի 8–9-ին:

Ապա նույն 1905 թվի մայիսի 12-ին ընդհարում տեղի ունեցավ Նախիջևան քաղաքում: Սակայն սա ոչ թե ընդհարում էր, այլ հարձակում, սպանություն, կողոպուտ, որը տարածվեց նաև Նախիջևանի շրջանի բոլոր հայաբնակ գյուղերում:

Մայիսի և հունիսի ընթացքում ընդհարումներ տեղի ունեցան Շարուրի, Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում:

Ընդհարումներից ազատ չմնաց նաև Գանձակի նահանգը: Օգոստոսի 16-ին ջարդեր և ավերածություններ տեղի ունեցան Շուշիում: Այդտեղից ընդհարումները տարածվեցին Շուշվա, Վարանդայի, Խաչենի շրջանները և Ջիվանշիրի, Ջեբրայիլի և Զանգեզուրի գավառները: Իսկ բուն Գանձակ քաղաքում ընդհա-

րումը տեղի ունեցավ նոյեմբերի 18–23-ին՝ տարածվելով ողջ գավառում:

Թեև բոլորից ուշ, այնուամենայնիվ ընդհարումներին ձայնակցեց նաև Թիֆլիսը, այդ զազիր թույնը պայթեց Թիֆլիսում՝ Կովկասի մայրաքաղաքում, Կովկասի կառավարչապետի քթի տակ, նոյեմբերի 22-ին և լարված դրությունը տևեց մինչև ամսի վերջը:

Այսպիսով, ընդհարումն ընդգրկեց ողջ Անդրկովկասը, այն է՝ Բաքվի, Երևանի, Գանձակի և Թիֆլիսի նահանգներն իրենց շրջաններով և գավառներով հանդերձ:

Բացի այդ, ընդհարումները սկսվեցին 1905 թվի փետրվար ամսից և շարունակվեցին մինչև 1906 թվի օգոստոս ամիսը՝ տևելով շուրջ տարի ու կես, այդպես էր ծրագրված սև գործը:

Ինչ պատկեր ուներ այդ շատ մեղմ արտահայտությունը՝ «ընդհարում» խոսքը՝ շենքերի հրդեհում, գույքի և ունեցվածքի կողոպուտ, բռնաբարություն, հափշտակություն, ավեր ու թալան:

Սուր, դաշույն, ատրճանակ, հրացան, մուրճ, կացին և ամեն կարգի զենք: Գնդակահարություն, դաշունահարում, գլխատում, մարմնի պատառում, հրկիզում ծխի ու բոցերի մեջ, հոշոտում, արյուն, ճապաղիք:

Ահա տեղի ունեցող անցքերի աղոտ ուրվագիծը, աղետների տխուր պատկերը:

Սահմռկեցուցիչ այս աղետի մանրամասնությունները այստեղ չենք բերում[1]: Սակայն այստեղ մենք կբերենք մի փոքրիկ նկարագիրներ Բաքվում տեղի ունեցած ոճիրներից, գաղափար կազմելու համար, թե Կովկասի հայությունն ինչպիսի ապրումներ ունեցավ մեկ ու կես տարիների ընթացքում:

Բաքվի դեպքերին ականատես «Նովոյե օբոզրենիե» թերթի թղթակից Օրեստ Սյոմինն այսպես է նկարագրում այդ օրերը.

---

[1] Ա-Դոյի՝ «Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում» աշխատության մեջ մանրամասն խոսվում է այդ մասին:

«Այս երկու օրը զարհուրելի որպեներ է անցկացնում Բաքվի ազգաբնակչությունը: Պարապետի, Վորոնցովի, Բազարնայա և Շամախինսկայա փողոցներում թուրքերն անխնա կոտորում են հայերին:

«Ահա մեկ տան լուսամուտից թռավ մեկ արհեստավորի արյունաշաղախ դիակը, հետո դուրս թռան բարձեր, աթոռներ: Ամբոխը թափվեց նրանց վրա և սկսեց ամեն ինչ պատառոտել և կոտորել...իսկ բակի մեջ այդ պահին որոտում էին զենքերը: Երբ նրանք հանդարտվեցին, մենք բակ մտանք և այնտեղ տեսանք արյան մեջ լողացող 7 դիակ:

«Ղուբայի մեյդանի վրա բացվող Լալայանի տան մեծ դռնից դուրս եկան մի խումբ թուրքեր, որոնք օղակի նման շրջապատել էին Լալայանին և նրա կնոջը, որը փաթաթվել էր իր ամուսնուն: Թուրք ամբոխը վայրենի ոռնոցներով հարձակվեց Լալայանի պաշտպանների վրա, օդի մեջ փայլեցին խինջարները[1], որոտացին հրացանները, բայց Լալայանը դեռ շարունակում էր առաջ շարժվել...և հանկարծ պատկերը խիստ փոխվեց: Լալայանին շրջապատող օղակը պատռվեց և նրան մեջքից վիրավորեցին մի քանի գնդակներով ... նա վայր ընկավ և առաջ էր շարժվում չորեքթաթ տալով: Նրա կինը թեքվեց նրա վրա և իր մարմնով պաշտպանում էր նրան մարդասպանների հարվածներից: Բայց որոտացին էլի մի քանի կրակոցներ ուղիղ դեպի տիկին Լալայանի մեջքը և նա երեսի վրա վայր ընկավ: Սև մազերի խիտ կույտը ծածկեց այդ հերոսուհու գլուխը:

«Զարհուրանքից սարսռաց իմ սիրտը և ես համարյա վազելով դիմեցի դեպի տուն»:

«Բակինսկի իզվեստիա» թերթի թղթակիցը Ցերկովնայա փողոցում գտնվող Բաբաջանովի տան հրդեհման մասին պատմում է հետևյալը. «Ամբոխից մեկն առաջարկեց հրդեհել տունը, իսկույն բերին մի տակառ նավթ և ածելով պաշարված տան

[1] Դաշույնները:

մուտքի վրա, կրակեցին: Երեկոյան ժամը 6-ին մոտ ամբողջ տունը կրակի մեջ էր: Ժամը 9-ին ամեն ինչ այրվեց, բացի ներքնահարկից: Թուրքերը վճռեցին ներս մտնել և խուզարկել ներքնահարկը: Այստեղ մեծ արկղեր կային. մի լեզգի խինջարը ներս մխեց, երևաց, որ այդտեղ արկղերի մեջ ծածկված են դժբախտ մարդիկ: Կատաղած ամբոխը հարձակվեց և գտավ 9 հոգի: Ես չեմ կարող նկարագրել այն սարսափը, որ երևում էր գտնված զոհերի դեմքին ... նրանց մեկ-մեկ դուրս էին բերում և ամենքի աչքի առաջ կոտորում էին»:

«Թիֆլիսկի լիստոկ» թերթի թղթակիցը, որն այցելել էր գերեզմանատունը, տալիս է հետևյալ նկարագիրը. «Ոչ, ոչ, ես չեմ կարող պատմել ձեզ այնտեղ տեսածիս տասներորդ, հարյուրերորդ մասն անգամ:

«Ամեն տեղ հեծեծանք, լաց և արտասուք ...

«Այստեղ-այնտեղ թափված են անթիվ դիակներ, մերկ, գնդակահար, բայց աչքերը դեպի երկինք հառած:

«Ահա այստեղ դիակներից մեկի վրա ընկած է մի հղի կին, բարբարոսները դաշույնի մի քանի հարվածով պատռել էին թշվառի արգանդը և երեխան դուրս հանելով գցել դիակի մոտ,– ծանոթ պատկեր, որ մենք հարյուրավոր անգամներ կարդացել ենք պատմության արյունոտ էջերում:

«Ահա մի երիտասարդ, դեռևս անբեխ, անմորուք, երեսն ի վայր ընկած, թշվառի մարմինն ամբողջապես ծածկված է գնդակների վերքերով:

«Ահա այն կողմն ընկած է մի սևացած, ածուխ դարձած դիակ, որը հրդեհված տների մեկի միջից են հանել»:

Մի այլ ականատես պատմում է հետևյալը. «Երբ հանդիմանում են զինվորներին, թե ինչու չեն ձերբակալում և զինաթափ անում կողոպտիչներին, զինվորները պատասխանում են «մեզ չի հրամայված խառնվել»: ... ներեցեք անշնորհք գրելուս համար, ժամանակը չէ այդ մասին մտածելու: Արյունալի սարսափները, որ տեղի են ունենում փողոցում, բառացիորեն քարաց-

նում են մարդու կամքը և միտքը ... վըզ ... վըզ ... վըզ ... միմիայն գնդակի այդ ձայներն են լսվում»:

«Բակինսկիե իզվեստիա» թերթում Սալիանյան գնդի կապիտան Բախտամովն իր պաշտոնավարության կապակցությամբ նկարագրում է հետևյալը. «Փետրվարի 7-ին առավոտյան Սալիանյան գնդի 2-րդ վաշտն իմ հրամանատարությամբ քաղաք կանչվեց անկարգությունների պատճառով: Իմ վաշտը բաժանվեց փոքրիկ խմբերի, մի քանի փողոցների վրա հսկելու համար:

«Ցերեկվա ժամը 2-ին մոտ, անցնելով զինվորների հետ Բազարնայա փողոցով, ես հանդիպեցի մի խումբ թուրքերի, որոնք Ասիական փողոցի անկյունում կողոպտում էին մանուֆակտուրային մի խանութ և այդտեղ էլ տեսա 2-րդ քաղաքամասի պրիստավին[1], որը մի քանի ոստիկանների հետ կանգնած էր թալանվող խանութի մոտ: Երբ սկսեցի հանդիմանել, թե նա ինչու միջոցներ ձեռք չի առնում կողոպուտների դեմ, պրիստավը պատասխանեց, թե բավականաչափ ուժ չունի, իսկ երբ ես խնդրեցի թույլ տալ ինձ կրակ բաց անել, պրիստավից ստացա մերժում: Համարելով ստիպված անգործ ներկայությունը մի այդպիսի բանի մեջ անհամապատասխան սպայի արժանապատվությունը, ես իմ զինվորներով անցա Ցիցիանովյան փողոցը, որպեսզի հավաքեմ իմ զինվորների մյուս խմբերը և ունենալով ձեռքի տակ ավելի մեծ թվով զինվորներ, ազդեմ ու ցրեմ կողոպտողների խմբերը: Խոստովանում եմ, սրանով ես հասա աչքի ընկնող հետևանքների. մինչև երեկո ինձ մի քանի անգամ հաջողվեց դադարեցնել անկարգությունները համոզիչ խոսքերով, իսկ երբ խոսքը չէր ազդում, ես ցրում էի խմբերը հրացանի կոթերով: Մյուս օրը վաշտիս հետ հազիվ էի դուրս եկել միևնույն փողոցները, երբ հետ կանչվեցի քաղաքացիական վարչության միջնորդության համաձայն, որ հիմնված էր ոստիկանության այն զեկուցման վրա, որի մեջ ասված էր, որ ես, իբր թե, իմ վաշտին

[1] Պրիստավի պարտականությունն էր իր տեղամասում կարգուկանոնի և ոստիկանական պահակակետերի հսկումը:

հրացան եմ արձակել տվել մահմեդական ամբոխի վրա և դրանով գրգռել մահմեդականներին»:

Բաքվի սպանդը և այդ սպանդի կազմակերպման գործը քննելու համար Պետերբուրգից ուղարկվեց սենատոր Կուզմինսկին[1]: Նրա զեկուցումից բերում ենք հետևյալ խիստ ուշագրավ հատվածը. «Բաքվում այն կարծիքն է տարածված, որ փետրվարյան ջարդը կազմակերպել է ադմինիստրացիան: Այդ կարծիքն առանձնապես արմատացել էր հայ ազգաբնակչության մեջ: Եվ հիրավի,– ասում է սենատոր Կուզմինսկին, – ադմինիստրացիայի վարմունքը կոտորածի ժամանակ կատարելապես նպաստավոր հող ստեղծեց նույնանման լուրերի տարածման համար: Սկսենք հենց այն բանից, որ դեռ փետրվարից շատ առաջ սպասում էին ընդհարման թուրքերի և հայերի միջև: Ադմինիստրացիան շատ լավ տեղյակ էր այդ բանին, սակայն նա միջոցներ ձեռք չառավ նրա առաջն առնելու համար: Ոստիկանությունը չզինվեց: Փետրվարի 7-ին, երբ ջարդն արդեն ահավոր չափերի հասավ, ընդհարված ժողովուրդների հոգևորականությունը նահանգապետի ներկայությամբ պատրաստակամություն հայտնեց անհապաղ խաղաղության թափոր կազմակերպել: Նահանգապետը պաշտոնական համաձայնություն տվեց այդ բանին, բայց հայտնի չէ, թե ինչու նրա անհապաղ իրագործման արգելք եղավ: Նույն պլատոնական ձևով նահանգապետը համաձայնեց Բաքվի կայազորի հրամանատարի կարծիքի հետ, թե անհրաժեշտ է ճնշել հուզմունքը զենքի ուժով, բայց ավարառուների դեմ զենք գործածելու համար զորքերի հրամանատարի խնդրած և օրենքով պահանջվող գրավոր թույլտվությունը նահանգապետը կտրականորեն մերժեց: Իսկ անկարգությունների թունդ ժամանակ, նահանգապետը քաղաքում պտույտներ էր անում, ակներև խրախուսանքով վերաբերվելով թուրքերին և նրբության հասցրած մեղմ խոսքերով ու բարեսրտությամբ

[1] Սենատոր Ա. Մ., Կուզմինսկին նույն թվականին հետաքննում է Օդեսայում հրահրված հրեական ջարդերը:

«հորդորում էր» նրանց դադարեցնել կոտորածը, այնինչ հայերի հետ նա խիստ էր և բծախնդիր: Երբ պաշարված և պաշտպանվող հայերն աղերսում էին փրկել իրենց, նա շպրտում էր. «Ինքներդ մի կրակեք և ձեզ վրա էլ չեն կրակի»: Դեռ սա քիչ էր, նահանգապետը հրամայեց վերադարձնել մի քանի դեպքերում թուրք մարդասպաններից խլած հրացանները նրանց զենք կրելու թույլտվություն ունենալու հիման վրա»:

Ովքե՞ր էին Բաքվի աղետի անմիջական ղեկավարները, ահա դրանցից մի քանիսը:

Թիֆլիսում հրատարակվող «Կովկաս» ("Кавказ") պաշտոնական թերթի 1905 թ. մարտի 29-ի համարում լույս տեսավ հետևյալ հաղորդումը. «Փետրվարի 6-9-ը Բաքվում տեղի ունեցած դեպքերից հետո, քաղաքում ցրված թռուցիկների մեջ հայտարարված էր, թե կոմիտեի[1] կողմից մահվան են դատապարտված Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեն, ոստիկանապետ, կապիտան Դեմինսկին, պրիստավ, կապիտան Մամեդբեկովը, պրիստավի օգնական Սուլթանովը և թաղական վերակացուներ՝ իշխան Միքելաձեն և Շահթախտինսկին:

«Մարտի 16-ին սպանվեց թաղային վերակացու, իշխան Միքելաձեն, մարտի 22-ին սպանության փորձ արեցին պրիստավ Մամեդբեկովի վրա»:

Իսկ մայիսի 11-ին նույն «Կովկասի» պաշտոնական բաժնում տպվեց. «Այսօր ցերեկվա ժամը 3-ն անց 15 րոպեին, Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեն կառքով տուն էր վերադառնում գեներալ-նահանգապետ Ամիլախորիի[2] մոտից: Միքայելյան փողոցի անկյունում, «Մետրոպոլ» հյուրանոցի դիմաց, նահանգապետի կառքի մեջ նետեցին մի ռումբ, որի պայթյունից սպանվեց իշխան Նակաշիձեն»:

---

[1] Ի նկատի ունի ՀՅ Դաշնակցությանը:

[2] Ամիլախորի (Ամիլախվարի) Իվան Գիվիի (Եգորի, 1829–1905 թթ.), գեներալ-համարզ: 1904-ից մինչև 1905 թթ. եղել է Բաքվի ժամանակավոր գեներալ-նահանգապետ:

Նախորդ էջերում բերված այն մի քանի փոքրիկ նկարագրությունները, աղոտ մի ցոլքն են Անդրկովկասի բազմաթիվ քաղաքներն ու շրջաններն ամբողջ մեկուկես տարի փոթորկող զանգվածային ջարդերի, ավերի ու ավարի: Նրանք կազմում են շարունակությունը հայոց դպրոցների փակման և եկեղեցական կալվածքների գրավման. ակտեր, որոնք կատարվում էին ցարիզմի երերուն հիմքերը փրկելու համար:

Կովկասի սատրապ Գոլիցինը գնաց, գնաց նախքան հայ-թուրքական ընդհարումը, սակայն նրա վարած քաղաքականությունը մնաց ու մնաց, որովհետև այդ քաղաքականությունը ծնունդ էր առել բարձր դռներից: Ուստի հայ-թուրքական ընդհարումը կազմակերպվեց ու գործադրվեց Գոլիցինի հետնորդների ձեռքով և նույն հայահալած քաղաքականության նշանաբանով: Գոլիցինի գնալուց հետո, մի քանի ամիս անց, Կովկաս ուղարկվեց ցարի պալատական շրջաններում հայտնի ու վստահություն վայելող իշխան Վորոնցով-Դաշկովը[1], մի փորձված ու ճարպիկ քաղաքագետ անձնավորություն, որի մասին նպաստավոր լուրեր ստացվեցին, նախքան նրա տեղ հասնելը:

---

[1] Վորոնցով-Դաշկով Իլարիոն Իվանի (1837–1916 թթ.), ռուս պետական և ռազմական գործիչ, գեներալ-համիարզ: 1881 թ. կազմակերպել է յուրօրինակ գաղտնի ընկերություն՝ «Կամավոր պահպանություն» ("Добровольная охрана"), որը հետագայում վերանվանվեց «Սրբազան դրուժինայի»: Այն կոչված էր ապահովել կայսր Ալեքսանդր III-ի անվտանգությունը և պայքարել ցանկացած հակապետական գործողությունների դեմ: 1905 թ. փետրվարի 27-ին նշանակվել է Կովկասի փոխարքա և Կովկասյան ռազմական օկրուգի զորքերի գլխավոր հրամանատար: Փոխարքայի պաշտոնը վարել է մինչև 1915 թ. օգոստոսի 23-ը:

ԿՈՎԿԱՍԻ ՆՈՐ ՓՈԽԱՐՔԱ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԸ, ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱՑԵԼՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼԸ

1905 թվի մայիսի սկզբին Կովկասի նոր փոխարքան Պետրոգրադից[1] դուրս եկավ և մայիսի 5-ին հասավ Թիֆլիս: Հայ ժողովուրդը Վորոնցով-Դաշկովի գալուստը նշանավորեց մեծ հույսերով և ակնկալություններով: Մայիսի 2-ին փոխարքան հասավ Ռոստով, որտեղ Նոր Նախիջևանի հայ ժողովուրդը դիմավորեց նրան մեծ հանդիսությամբ: Չալխուշյանը[2] ժողովրդի անունից դիմեց ճառով ու հայտնեց, որ հայ ժողովուրդը համակված է հայոց դպրոցների փակման և եկեղեցական կալվածքների գրավման վշտով և հույս ունի, որ փոխարքան կմիջնորդի մեղմելու այդ վիշտը: Փոխարքան խոստացավ կատարել այդ խնդրանքը, որ չափով որ դա կախված կլինի իրենից:

Նույնպիսի խոստում արեց նաև տիկին Վորոնցովա-Դաշկովան հայ կանանց ներկայացուցչուհիներին, երբ վերջինները դիմավորեցին իշխանուհուն ծաղկեփնջերով:

Նույնպիսի դիմավորում, ճառեր և խոստումներ եղան նաև Թիֆլիսում, երբ հայերը դիմավորեցին փոխարքային, Թիֆլիս մուտք գործելիս:

Եվ Վորոնցով-Դաշկովը խոստման տերը եղավ:

1905 թ. օգոստոսի 6-ին N 155 թվակիր կայսերական հրամանագրով վերացվեցին 1898 թ. մարտի 26-ի հայոց դպրոցների փակման և 1903 թ. հունիսի 12-ի հայոց եկեղեցական կալվածքների գրավման վերաբերյալ օրենքները:

---

[1] Ս. Պետերբուրգ:

[2] Չալխուշյան Գրիգոր (1861–1931 թթ.), հայ հասարակական, քաղաքական գործիչ, իրավաբան: 1919–1920 թթ. եղել է ՀՅ գլխավոր հյուպատոսը Դոնի Ռոստովում:

Եվ անմիջապես վերաբացվեցին հայոց դպրոցներն ու վերադարձվեցին գրավված եկեղեցական կալվածքները:

Հայ ժողովուրդը որոշ ժամանակ ուրախության օրեր ապրեց, կաթողիկոսի և հայ հասարակական մարմինների կողմից շնորհակալության հեռագրեր հղվեցին փոխարքային, եկեղեցիներում կատարվեցին մաղթանքներ: Մի պահ մոռացվեցին ընդհարումների աղետները և թվում էր, որ այլևս ընդհարումներ տեղի չեն ունենա, սակայն այդպես չեղավ, ընդհարումները շարունակվեցին:

Մայիսի 12-ին տեղի ունեցան ընդհարումներ Նախիջևանում և նրա գյուղերում:

Մայիսի 23-ին ընդհարումները կրկնվեցին Երևանում:

Մայիսի 29-31-ին ընդհարումները տարածվեցին Շարուրի, Դարալագյազի շրջաններում, Երևանի և Էջմիածնի գավառներում:

Ապա հետզհետե ընդհարումներ տեղի ունեցան Շուշիում և նրա գավառում, Զանգեզուրի գավառում, Գանձակում և նրա գավառում: Ընդհարում տեղի ունեցավ անգամ Թիֆլիսում՝ փոխարքայի քթի տակ և նրան կից Բորչալուի գավառում:

Թողնենք բոլոր ավերածությունների ու ջարդերի նկարագրությունները և խոսենք բուն Թիֆլիսում տեղի ունեցող ընդհարումների մասին, որին ականատես եմ եղել ես:

Որ բոլոր տեղերում ընդհարումները ծագում էին ադմինիստրացիայի թելադրանքով և սև ռեակցիայի շոշափուկների միջոցով, կասկածից դուրս է, սակայն ոչ մի տեղ ընդհարումներն այնպես արհեստական կերպով չէին ստեղծվում, ինչպես Թիֆլիսում:

Ինչու՞, Թիֆլիսում թուրք ժողովուրդ քիչ կար, իսկ հայ ժողովուրդը շատ մեծ թիվ էր կազմում, հետևապես ոչ մի հիմք չկա ասելու, որ Թիֆլիսի թուրք ժողովուրդը պատճառ եղավ ընդհարման:

Իսկ հայ ժողովուրդը ելնելով և՛ իր և՛ ընդհանուր շահերից, երբեք չէր ցանկանա ավարի մատնել իր գույքը:

Վրաց ժողովուրդը նույնպես հակառակ էր հայ-թուրքական ընդհարումներին և դեպի հայերը շարունակում էր բարի դրացիական հարաբերություն պահել:

Եվ չնայած այս բոլորին, այնուամենայնիվ, ազգամիջյան բախումների թույնը կաթեց նաև Թիֆլիսի մեջ: Ճիշտ է մի փոքր ուշ, բայց և այնպես կաթեց թույնը, և 1905 թ. նոյեմբերի 22-ից մինչև 30-ը Կովկասի մտավոր կենտրոն հանդիսացող Թիֆլիսն ականատես եղավ հայ-թուրքական ընդհարում կոչվող զազիր տեսարանին:

Կովկասի ադմինիստրացիան գլխովին, սևհարյուրյակային ռեակցիան և կալվածատեր բեկերն ու աղալարները երրորդություն կազմած, հրահրեցին ու ոտի հանեցին թուրք անգիտակ զանգվածը և ստեղծվեց այն դժոխքը, որը սկիզբ առավ Բաքվում, ծավալվեց ու հասավ Թիֆլիս:

Թիֆլիսում մտքերի թունավորումը տարվում էր շատ ավելի կազմակերպված ձևով, որ կարելի չլիներ կանխել սպառնացող ընդհարումը:

Այն միջոցին, երբ Բորչալուից զինված թուրքերը անարգել քաղաք էին մտնում, ի ցույց մարդկանց զինվորներ էին դուրս բերվում Բուսաբանական այգու բարձրունքների վրա, որոնք երեսները դեպի Բորչալու դարձած, մեջընդմեջ հրացաններից կրակում էին օդում, որպես թե հետ են մղում Բորչալուից քաղաքի վրա եկող զինված խմբերին: Միաժամանակ լուրեր էին տարածվում այն մասին, որ Բորչալուից զինված մեծ խմբեր մոտենում են քաղաքին, լուրեր, որոնք սարսափ էին առաջ բերում ամեն տեղ:

Այդ պրովակացիան իր նպատակին հասավ. նոյեմբերի 22-ին Շեյթան բազար կոչվող թաղամասում, որը մասսաների շփման վայր էր, սկսվեց հրացանաձգություն: Հրացանները պայթում էին և թուրքերի, և հայերի տներից ու լուսամուտներից,

հրացանաձգությունը ընդհատումներով տևեց մինչև երեկո՝ ունենալով զոհեր երկու կողմերից:

Հրացանաձգությունը վերսկսվեց նաև նոյեմբերի 23-ի առավոտյան. այդ ժամանակ առաջին անգամ դուրս բերվեցին զորքեր, բայց ձևի համար:

Սակայն հրապարակ եկավ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը. երկաթուղու բանվորները գործադուլ հայտարարեցին և Նախալովկայում կազմելով միտինգ, բարձրացնելով սպիտակ դրոշակներ, մեծ բազմությամբ անցան թուրքի հրապարակով, Շեյթան բազարով, Վորոնցովի փողոցով և հասնելով Արբուզնայա հրապարակ, կանգ առան, արտասանվեցին ճառեր խաղաղության և համերաշխության մասին և ցրվեցին:

Այս ցույցից հետո մտքերը մի փոքր խաղաղվեցին, սակայն շատ կարճատև: Ամսի 24-ի առավոտյան Աշուղ Ջիվանու անունը կրող սրճարանի մոտ մահացու կերպով վիրավորվեցին երեք հայեր և վերսկսվեց ընդհարումը:

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը նորից հայտարարեց երկաթուղային բանվորների գործադուլ: Այդ ժամանակ ադմինիստրացիայի կողմից խաղացվեց ճարպիկ մի խաղ:

«Վոզրոժդենիե» թերթի խմբագրատանը տեղի էր ունենում հեղափոխական կուսակցությունների խորհրդակցություն, քննվում էր հայ-թուրքական ընդհարումը դադարեցնելու խնդիրը, և այդ խորհրդակցությանը ներկայացավ Թիֆլիսի ոստիկանապետ Ցինը: Խորհրդակցությունը հանգեց այն մտքին, որ անհրաժեշտ է հայ-թուրքական ընդհարման խաղաղեցման գործը հանձնել սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը և ոստիկանապետը խոստացավ միջնորդել փոխարքայի մոտ պետական պահեստից բաց թողնելու 500 հրացան:

Ոչ ոք չէր հավատում, որ փոխարքան պետական զենք կտա և հայ-թուրքական հարաբերությունները հարթելու համար կհրավիրվի մի հեղափոխական կազմակերպություն, բայց անհավատալին կատարվեց: Այդ խաղը շատերի համար մութ

մնաց: Այն պահին, երբ Թիֆլիսի կայազորն անգործ նստած էր զորանոցներում, գործի էր հրավիրվում մի հակապետական կազմակերպություն:

Նոյեմբերի 25-ին սոցիալ-դեմոկրատական մեկ դրուժինա պետական զենքը ձեռքին և խաղաղության նշանները կրծքներին փակցրած, հրապարակ եկավ: Դրուժինայի մի մասն ուղարկվեց հայ և թուրք ժողովուրդների շփման շրջանը՝ կարգը պահպանելու համար, իսկ մյուս մասը սկսեց կառքերով քաղաքի մի մասից մյուսն ուղեկցել անցորդներին: Ուշագրավ էր նաև այն, որ զենք կրելու և կրծքանշան փակցնելու թույլտվություն ստացել էին նաև այլ հակահեղափոխական կազմակերպություններ, սակայն ոչ պետական զենքերով:

Եվ մինչդեռ անհավատալի այս գործողության շնորհիվ հայ և թուրք ժողովուրդների հաշտությունը համարվում էր ապահովված, տեղի ունեցան հետևյալ բնորոշ միջադեպերը:

Թիֆլիսի կայազորի մասերն այս գործողությունը գտնելով իրենց կոչմանն անհամատեղելի, բողոքեցին կառավարության այդ կարգադրության դեմ և դրուժինայի մի խմբի ձեռքից խլեցին պետական զենքը, զինաթափ արեցին նաև մի խումբ հայերի, թեև սրանց պետական զենք չէր տրված:

Բացի այս, մինչև կայազորի զինվորները զենքերն էին խլում, հայ-թուրքական շփման սահմանների վրա հսկող սոցիալ-դեմոկրատական դրուժինայի մասերի դեմ սկսվել էին պրովակացիոն գործողություններ:

Նոյեմբերի 26-ի գիշերը մի թուրքի թեյարանում դրուժինայի խմբից գողացվեցին 5 հրացան և երկու հոգի էլ վիրավորվեցին:

Նման դավադրություն դրուժինայի պահակախմբի դեմ տեղի ունեցավ նոյեմբերի 27-ին, որի միջոցին վիրավորվեցին երկու հոգի, իսկ մի հոգի՝ Սիլվեստր ազգանունով, սպանվեց:

Եվ ահա նման մի քանի դավադիր գործողություններից հետո դրուժինան ստիպված եղավ զենքերը վար դնել և հրապա-

ռակից քաշվել՝ հայտարարելով, որ իրենք անզոր են նման պրովակացիաների հանդեպ:

Նոյեմբերի 28-ը հանդիսացավ խավար ուժերի հաղթանակի մեծ օր. Բորչալուից զինված թուրքերն անարգել քաղաք էին մտնում, իսկ Բուսաբանական այգու բարձրունքների վրա պահակ կանգնած զինվորները թիկունքները դարձրած քաղաքին, օդում համազարկներ էին տալիս:

Այդ համազարկներն աննպատակ չանցան. դրանց շուտով արձագանքեցին թուրքական թաղի դիրքերից, աշխուժացան նաև հայկական դիրքերը և սկսվեց իսկական հայ-թուրքական ընդհարում իր սարսափներով:

Ամբողջ օրը սուրբ Գևորգի, Խարփուղի և թուրքական թաղերի մեջ անընդհատ որոտում էին կրակոցները և այդ օրը կրկին զոհեր եղան:

Հուզմունքը վերսկսվեց նաև նոյեմբերի 29-ին և շարունակվեց երկար, որին հետևեց հրդեհ. իջևանատնից դեպի երկինք ծուխ ու բոց բարձրացավ: Հրշեջ խումբը հասավ, բայց ոչինչ չարած վերադարձավ, պատճառաբանելով թուրքական դիրքերից սուրացող գնդակները: Հրդեհը գնալով ավելի ծավալվեց: Հրդեհելու փորձեր կատարվեցին նաև հայկական թաղի մի քանի կետերում և շփոթը տիրեց քաղաքին: Հրդեհի շրջանից դեպի հեռավոր թաղերը սկսվեց արտասովոր գաղթ, այդ շփոթությունից օգտվելով գլուխ բարձրացրին կողոպտիչները, մի խոսքով Թիֆլիսի այդ մասում տիրեց անարխիան:

Նոյեմբերի 29-ի երեկոյան արդեն շրջակա թաղերը լուսավորվեցին մի շարք հրդեհների բոցերով: Կրակն ընդգրկեց Վորոնցովսկայա, Կրասիլնայա և Կրեպոստնայա փողոցների ողջ շրջանը՝ լափելով ավելի քան տասը խոշոր շենքեր, և երբ հրդեհները ծավալվելով սպառնում էին լափել ամբողջական թաղեր, նոր միայն հրդեհների տեղերում հայտնվեցին հրշեջ խմբեր, զորքեր, այնինչ բազմաթիվ շենքեր ու բնակարաններ

արդեն ավերվել էին հիմնովին և բազմաթիվ ընտանիքներ կորցրել էին ամեն ինչ:

Այստեղ էլ ադմինիստրացիան չքմեղ ձևացավ. չէ՞ որ սոցիալ-դեմոկրատիայի դրուժինան էլ պետական զենքերով զինված, այնուամենայնիվ չկարողացավ ընդհարումը կանխել:

Բայց միթե՞ կարելի էր կասկածել, որ Թիֆլիսի ընդհարումներն ու հրդեհումները, օրերով շարունակվող հրաձգությունները ու սպանությունները գործադրվել էին Թիֆլիսի ադմինիստրացիայի ջանքերով: Ինչպե՞ս կարող էր, որ Կովկասի մայրաքաղաքում տեղի ունեցող այս այլանդակությունների հրահրման մասին անտեղյակ լիներ Կովկասի փոխարքան՝ Վորոնցով-Դաշկովը: Ամեն ինչ կատարվում էր նախօրոք ծրագրված կերպով և ադմինիստրացիան ինքն այս բոլոր այլանդակությունների գլխավորողն էր հրահանգված վերևից:

Նախքան հայ-թուրքական ընդհարումների այս նողկալի էջը փակելը, անհրաժեշտ է անդրադառնալ մի դրվագի ևս, որը պակաս հուզիչ չէ:

1905 թվի մարտ ամսին, երբ շատ շրջաններում դեռևս հայ-թուրքական ընդհարումները շարունակվում էին, Վարանդայի սահմանը ոտք դրեց էկզեկուցիոն[1] մեկ ջոկատ՝ բաղկացած 400 կազակներից, չորս թնդանոթներով, որին ղեկավարում ու տեղաշարժերը ծրագրում էին փոխգնդապետ Վիվերնը, գավառապետ Ֆրեյլիխը և հաշտարար միջնորդ Երմոլաևը: Այդ ջոկատը զբոսանքի ելավ կոխելով ու անցնելով Ավետարանոց, Շեխեր, Սարգսաշեն, Թաղավարդ, Թաղլար, Տող, Տումի, Ազոխ, Հազորդի, Սոս, Գյունե-Ճարտար, Հուզե-Ճարտար, Խնուշինակ, Գիշի գյուղերը: Յուրաքանչյուր գյուղում մնում էին 2-4 և ավելի օրեր, նայած օղու և գինու պաշարին, ուտեստի առատությանը, ոսկու և արծաթի քանակին, հագուստի ու ունեցվածքի բազմազանությանը, «ընդունվում, խուրասիրվում» և հեռանում էին հար-

[1] Դատավճիռը կամ վարչական որոշումն ի կատար ածող պատժիչ ջոկատը:

բած, տռզած ու բեռնավորված: Բերեմ մի քանի հիշատակություններ:

– Գյունե-Ճարտար գյուղի նյութական վնասները և բարոյական տանջանքները սոսկալի էին. մարդ չի հավատում իր ականջներին, երբ լսում է այն բոլորը, որոնք անցել էին այդ գյուղի գլխով: Ժողովուրդը լսած լինելով Սոս գյուղում կատարված բարբարոսությունների մասին, դեռ արշավախումբը գյուղ չմտած սարսափահար փախավ սարերն ու ծմակները:

– Գյուղը վճարեց 12000 ռ[ուբլի] տուգանք: Աղաջան Պետրոսյանի և Միքայել Հայրապետյանի տները ռմբակոծվեցին, գյուղում մնացած տղամարդիկ ենթարկվեցին ծեծի և տանջանքների: Ավելի քան 400 կազակներ ապրեցին գյուղում ամբողջ վեց օր, հարուստ Գյունե-Ճարտարի գինու կարասները դատարկվեցին և ապա կոտրատվեցին, գարու և ցորենի հորերը բացվեցին և ոտի տակ գնացին, հարուստ Ճարտարի տներում պաշար չմնաց, բոլորը լափվեց ու կողոպտվեց: Ենիչերիները մորեխի պես աղում էին պատահածը: Սարերն ու ծմակները փախած ժողովուրդը ցրտից ու սովից սոսկալի տանջանքներ կրեց:

Այս զրկանքը նյութական էր, բայց տեղի էր ունենում ավելի սոսկալին, կանանց և աղջիկներին զանգվածաբար բռնաբարում էին, սպանում: Այդ հողի վրա տեղի էին ունենում դիմադրության դեպքեր, որոնք բարի վախճան չէին ունենում:

– Սոս գյուղում ենիչերիները տղայի ներկայությամբ փորձեցին բռնաբարել 60 տարեկան Նուբար Հայրապետյանին: Պատվախնդիր տղան՝ 30 տարեկան Հովհաննեսը, չկարողանալով տանել մի այդպիսի անարգանք, դիմադրեց ենիչերիներին: Գազազած կազակները ծեծեցին պատվախնդիր Հովհաննեսին, սոսկալի հարվածներից ջարդ ու փշուր եղան նրա գլուխը, թևերն ու կողերը, որից հետո նա ապրեց-տանջվեց երկու օր ու մեռավ: Ռուս կազակի ձեռքով անարգված մոր պատիվը պաշտպանող որդին սպանվում էր ծեծից:

Երկու ժողովուրդներին խաղաղեցնելու անվան տակ ուղարկված զորամասի կատարած զազիր գործողություններն այնպիսի չափերի հասան, որ Շուշվա հայ կանայք ստիպված եղան մի ընդարձակ հեռագրով դիմել կայսրուհուն, հեռուգիր, որը սկսվում էր այս խոսքերով. «Մի ամբողջ տարվա հայ-թուրքական կոտորածի արյունահեղ սարսափներից հետո մեզ՝ հայերիս վրա պայթեց մի նոր և ավելի ահեղ արհավիրք, որի նմանը մեր պատմությունը չի հիշում նույնիսկ մահմեդական տիրապետության ժամանակներից»:

Խեղճ հայ կանայք, միամիտ կանայք դիմում էին այն գահակալ թագուհուն, որի պալատում հենց ծրագրվում, թելադրվում և իրագործվում էին այդ բոլոր սոսկումներն ու զազրելի անցքերը:

Ցարիզմի հայակեր քաղաքականությունը և այդ քաղաքականության հենարան հանդիսացող սև ռեակցիան հագեցավ արդյոք հայ-թուրքական ընդհարումների արյան ճապաղիքներով և հայ ժողովրդի նկատմամբ նյութած հալածանքը վերջ ի վերջո դադարեցի՞ն արդյոք, ո՛չ, մի որոշ միջոց դադար առնելուց հետո հրապարակ եկավ մի այլ պատրվակի տակ, իսկ պատրվակ որքան ուզեք:

1909 թվի գարնան ամիսներին հայակերության թույնը նորից մոլեգնեց և սկսվեցին հայերի նկատմամբ արտասովոր հալածանքներ: Տեղի էին ունենում զանգվածային խուզարկություններ և ձերբակալություններ, ոստիկանությունը գիշերները խուժում էր բնակարանները, տակնուվրա անում կահկարասին, ծակծկում ու փորփրում պատերն ու հատակները, տղամարդկանց քշում բանտերը: Ցերեկները կատարվում էին շուրջկալներ, և քշում տանում էին աննշան կասկածի դեպքում: Այսպիսով սարսափն այնպիսի չափերի է հասնում, որ շատերը դիմում են փախուստի և այն էլ ոչ միայն դեպի Ռուսաստանի խորքերը, այլ նույնիսկ դեպի Տաճկաստան ու Պարսկաստան՝ անտեսելով սահմանային խախտման վտանգը: Եվ կազմակերպվեց հատուկ դատախազություն՝ իր հետախուզող և հետապնդող ջոկատնե-

որով հանդերձ՝ առաջ քաշվեցին նման գործերում անուն հանած անձնավորություններ:

Թե ինչպիսի նշանակություն տրվեց այս դատաքննությանը, երևում է այն բանից, որ գործն ամբողջովին տեղափոխվեց Կովկասի սահմաններից հեռու Նովոչերկասկ քաղաքը, իսկ գործը հանձնվեց ոմն Լիժինի, որի անունով էլ գործը կոչվում է Լիժինի դատաքննություն: Այդ դատաքննությունը, որը որակավորվում էր որպես հակապետական չարամիտ գործողություն, կոչվեց «Հայ յեղափոխական դաշնակցություն կոչվող կազմակերպության մասնակիցների գործ» և որով մեղադրվում էին 146 հոգի, տևեց ավելի քան երկու տարի: Կազմակերպվեցին ծանր մեղադրական ակտեր, գոյացավ մի վիթխարի գործ, որի վրա աշխատում էին մի քանի տասնյակ հետախույզներ, քննիչներ ու արձանագրողներ:

Դատը նշանակվեց Պետերբուրգում, հատկապես Պետերբուրգում: Ապա դատը վարելու համար նշանակվեց հատուկ գերագույն դատարան՝ բաղկացած ավելի քան տասը հոգուց, որոնցից մի քանիսը նույնիսկ սենատի անդամ էին:

Բացի այդ, որպես դատապաշտպաններ հրապարակ եկան ավելի քան հինգ տասնյակ իրավաբաններ, որոնցից շատերը հայտնի էին որպես աչքի ընկնող հասարակական գործիչներ:

Դատը սկսվեց 1912 թվի մարտի կեսերին և տևեց ավելի քան երկու ամիս:

Այդ դատավարությունը, չնայած այն բանին, որ կատարվում էր դռնփակ նիստերում, բայց և այնպես նրա նույնիսկ մանրամասնությունները դուրս էին գալիս դահլիճից և տարածվում հասարակության լայն խավերի շրջանում:

Եվ ինչ արդյունք տվեց երկու ամիս տևող այդ դատը:

Նախ, դատավարության ընթացքում հայտնաբերվեցին կեղծ փաստաթղթեր, շինծու ցուցմունքներ և սուտ վկաներ:

Ապա դատարանը հարկադրված եղավ կայացնել մի որոշում, որը միանգամայն վարկաբեկեց ոչ միայն դատաքննությանը, այլև նման գործեր նյութող և կամակերպող իշխանությանը:

Դատարանի որոշումով 146 մեղադրյալներից 116-ը ճանաչվեցին անմեղ և արդարացան, և միայն 30 հոգու նկատմամբ բարդվեց մեղադրանք:

Եվ բացի այդ, ըստ երևույթին պետության վարկաբեկումը մեղմելու համար, տարածվեցին լուրեր, թե իբր Լիժինը խելագարվել է և գտնվում է հոգեբուժարանում:

Այսպիսին էր հայ ժողովրդի վիճակը ցարիզմի մոլեգնող պայմաններում, իսկ ինչպիսի՞ն էր արևմտահայոց վիճակը երիտթուրքերի տիրապետության տակ:

Կիլիկիայի Ադանա քաղաքում տեղի ունեցավ հայերի ջարդ[1], մի ջարդ, որը հուզեց ու ցնցեց հայությանն ամենուրեք: Այդ ջարդը հուզմունք պատճառեց առանձնապես այն պատճառով, որ դեռևս չէր բոլորել Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջման ու սուլթան Համիդի տապալման մեկ տարին և Թուրքիան հայտարարել էր իրեն հանրապետություն, որի գլուխ էին անցել երիտթուրքերը:

Երիտթուրքեր՝ Էնվեր[2]–Թալեաթ[3]–Ջեմալ[1] փաշաները, որոնք ժառանգելով Համիդի հայակեր քաղաքականությունը, ավելի

---

[1] 1909 թ. ապրիլի 1–4-ը և 12–14-ը Ադանայում և Կիլիկիայի այլ բնակավայրերում իշխանությունները կազմակերպում են հայերի զանգվածային կոտորածներ, որոնց զոհ են գնում 30 հազար հայեր:

[2] Էնվեր փաշա (Իսմայիլ Էնվեր, 1881–1922 թթ.), թուրք պետական և ռազմական գործիչ, օսմանյան Թուրքիայի ռազմական նախարար (1913–1918 թթ.), երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարներից: Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից և իրականացնողներից մեկը:

[3] Թալեաթ փաշա (Մեհմեդ Թալաաթ, 1874–1921 թթ.), թուրք պետական գործիչ, Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար (1913–1918 թթ.): Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարներից: Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից և իրականացնողներից մեկը: 1921 թ. մարտի 21-ին Բեռլինում սպանվել է վրիժառու Սողոմոն Թեհլերյանի կողմից:

վարպետորեն գործի անցան և այն, ինչ Համիդը կատարում էր վախվխելով, սրանք սկսեցին համարձակ՝ թիկունք ունենալով լկտի դիվանագիտությունը:

Ցարիզմ–սուլթանիզմ՝ մի համերաշխ դաշինք, որի սլաքներն ուղղված էին հայերի դեմ:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ, ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՆԴԵՐՆ ՈՒ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջազգային շահերի հակամարտությունը շատ անգամ է հուզել հասարակական միտքը Եվրոպայում և ալեկոծել նրան, սակայն այն ալեբախությունն ու ցնցումը, որ տեղի ունեցավ 1914–1918 թվականներին, գերազանցեց Եվրոպայում մինչ այդ տեղի ունեցած բոլոր դեպքերը:

Ցնցում սկսվեց Եվրոպայի ներսում, բայց նա ծավալվեց մի անօրինակ թափով, քաշեց իր հոսանքի մեջ Ամերիկան, Հեռավոր Արևելքը՝ Չինաստանն ու Ճապոնիան և ընդունեց համաշխարհային ծավալ, ուստի կոչվեց Առաջին համաշխարհային պատերազմ:

Այդ պատերազմը սկսվեց եվրոպական մեծ տերությունների երկու խմբավորումների բախումով. Գերմանիայի, Ավստրո-

---

[1] Սիմեդ Ջեմալ փաշա (1872–1922 թթ.), թուրք ռազմական և քաղաքական գործիչ: 1914 թ.՝ Թուրքիայի ծովային նախարար, 1915 թ. մայիսից՝ Սիրիայի զինվորական և քաղաքացիական ադմինիստրատոր (նահանգապետ) լիազոր: Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից և իրականացնողներից մեկը: Սպանվել է 1922 թ. Թիֆլիսում վրիժառուներ Պ. Տեր-Պողոսյանի և Ա. Գևորգյանի կողմից:

Հունգարիայի և Իտալիայի[1] դաշնակցությունը մեկ կողմից, Ռուսաստանի, Ֆրանսիայի համաձայնությունը մյուս կողմից:

Այդ բախման հորձանուտում այնպիսի հարցեր էին պտտվում, ինչպիսիք էին՝ Դարդանելի նեղուցի հետ կապված հարցերը, Միջերկրական ծովի տիրապետումը, երկաթգիծը դեպի Բաղդատ հասցնելը և այլն:

Թուրքիան՝ այդ փտած պետությունը, որի գոյությունը հարատևում էր շնորհիվ միջազգային հակամարտությունների, այս անգամ էլ աչքերը հառնելով այս ու այն կողմ, թեքվեց դեպի Գերմանիան: Ուստի ցարական կառավարության համար Թուրքիայի ճակատը դարձավ հոգացության առարկա:

Եվ հայ ժողովրդի նկատմամբ 1909 թվից սկսված ու ավելի քան երեք տարի շարունակվող ցարական հալածանքներից հետո, մեկեն քաղաքականությունը փոխվում է և սկսվում սիրաշահելու շրջանը:

Պոլսի ցարական դեսպան Գիրսը[2] հրապարակ է բերում և դեսպանների խորհրդի առաջ դնում Հայկական հարցն ու եռանդով կերպով պաշտպանում այն:

Թիֆլիսում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի պալատի դռները լայն բացվում են Թիֆլիսի մի քանի ազդեցիկ հայերի և հոգևորականների առաջ: Սկսվում է քաղաքագետ փոխարքայի հաճոյաբանությունները հայերի ձգտումների և սպասելիքների մոտալուտ իրականացման մասին: Փոխարքայի պալատից թե գրավոր, թե բանավոր, լուրեր են տարածվում այն մասին, իբրև թե փաստացի հավաստիացումներ կան կաթողիկոսին ուղղված:

---

[1] Անտանտի տերություններն էին՝ Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Ֆրանսիա, որոնց միանում են այլ տերություններ, այդ թվում Իտալիան: Գերմանիայի գլխավորությամբ գործող խմբավորումը բաղկացած էր Ավստրո-Հունգարիայից, Օսմանյան կայսրության, ապա՝ Բուլղարիայից:

[2] Գիրս Միխայիլ Նիկոլայի (1856–1932 թթ.), ռուս դիվանագետ, 1911–1914 թթ. ռուսական դեսպանը Կ. Պոլսում:

Եվ ահա հրապարակ է գալիս, ավելի ճիշտ կրկնվում է հին պատմությունը՝ հայ կամավորական շարժումը:

Ներում են ստանում և տուն վերադառնում 1912 թվին տեղի ունեցած մեծ դատավարության որոշումով տաժանակիր աշխատանքի դատապարտվածները, այդ դատի կապակցությամբ 1909 թվին արտասահման փախած անձինք՝ ինչպիսիք են հայկական շարժումներում անուն վաստակած Անդրանիկը[1], Դրոն[2], Քեռին[3], Վարդանը[4], Համազասպը[5], Խեչոն[6], Իշխանը[7] և այլն: Եվ

---

[1] Անդրանիկ (Օզանյան, 1868–1927 թթ.), ազգային-ազատագրական ականավոր գործիչ: Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում Հայկական I կամավորական խմբի հրամանատար: 1918 թ. հունվարին նշանակվել է Հայկական բանակային կորպուսի դիվիզիայի հրամանատար: Նույն ամսում շնորհվել է ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում:

[2] Դրո (Դրաստամատ Կանայան, 1884–1956 թթ.), ազատագրական շարժման ականավոր գործիչ, ՀՅԴ անդամ: Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում գլխավորել է Հայկական II կամավորական խումբը: 1917 թ. դեկտեմբերին նշանակվել է Հայկական ազգային կորպուսի կոմիսար: 1919 թ. մայիսին ղեկավարել է Բաշապարանի հերոսամարտը: 1920 թ. նոյեմբերին նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար: Դեկտեմբերի 2-ից 4-ը Հայաստանի խորհրդայնացումից հետո ղեկավարել է իշխանությունը մինչև Հեղկոմի Երևան ժամանելը: 1923 թ. հեռացել է արտասահման:

[3] Քեռի (Արշակ Գավաֆյան, 1858–1916 թթ.), ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1914–1916 թթ. գլխավորել է IV կամավորական խումբը:

[4] Վարդան (Սարգիս Մեհրաբյան, Խանասորի Վարդան, 1867–1943), ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, V (Արարատյան) կամավորական խմբի հրամանատար:

[5] Համազասպը (Սրվանձտյան, 1873–1921 թթ.), ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1914–1916 թթ. III կամավորական խմբի հրամանատար: 1918 թ. մարտին Բաքվում ակտիվ մասնակցություն է ունեցել մուսավաթականների դեմ մղված մարտերին: Բաքվի անկումից հետո հետո անցել է Պարսկաստան, ապա վերադարձել Հայաստան և նշանակվել Նոր Բայազետի զինվորական ուժերի հրամանատար: Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է և սպանվել բոլշևիկների կողմից:

[6] Խեչո (Խաչատուր Ամիրյան-Գևորգյան, Դաշնակցական Խեչո, 1868–1915), II խմբի հրամանատարի տեղակալ, իսկ 1915 թ. ապրիլի 1-ից՝ Արարատյան գնդի հրամանատարի տեղակալը: Զոհվել է 1915 թ. հուլիսի 6-ին Դատվանի համար մղած մարտում:

[7] Իշխան (Հովսեփ Արղության, 1863–1925), ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, VII կամավորական խմբի հրամանատար:

սկսվում է կամավորական գնդերի կազմակերպումը: Պետական զենք, հատուկ զգեստավորում, դրամ, զինվորական գործում փորձված հրահանգիչներ և միաժամանակ անհրաժեշտ ոգևորություն, հույսեր, ակնկալություններ:

Երիտասարդ թուրքերն իրենց խարխուլ գոյությունը պահելու համար մի նոր կորստաբեր փորձ են անում հայ ժողովրդի գլխին:

1914 թվի հոկտեմբերի 16-ի լուսաբացին, այն է, եվրոպական ճակատում արդեն սկսված խոշոր բախումներից ընդամենը երեք ամիս անց, միանգամայն անսպասելի Թուրքիան իր ռազմանավերը հասցնում է Սև ծովի ռուսական ափերը, մեկեն ռմբակոծում Օդեսա, Թեոդոսիա և Նովոռոսիյսկ քաղաքները, խորտակում այդ նավահանգիստներում կանգնած մի քանի նավեր ու փախչում[1]:

Տագնապ. արձակվում է ցարական հրամանը և ռուս-թուրքական, նաև պարսկա-թուրքական սահմանների ամբողջ երկարությամբ ռուսական զորքերը սրարշավ կոխում են սահմանն ու անցնում մի քանի կետերում՝ առաջապահ ունենալով հայ կամավորական խմբերին:

Ռուսական բանակը ճեպով առաջ է շարժվում և թշնամու հողում բավական խորանալուց հետո հարկադրված է լինում նահանջել:

Թուրք հրամանատարությունն իր ձախ թևում կուտակելով մեծաքանակ զորք, դեկտեմբերի 10-ին Օլթիի ուղղությամբ անցնում է հարձակման և պատռելով ռուսական համեմատաբար թույլ շղթան, սրընթաց շարժվում մինչև Արդահան ու Սարիղամիշ: Թիֆլիսը հայտնվում է վտանգի մեջ, մի վայրկյան սարսափը պատում է բոլորին, մանավանդ հայ ժողովրդին, կառավարական որոշ հիմնարկներ պատրաստվում են նույնիսկ չվել դե-

---

[1] 1914 թ. հոկտեմբերի 16-ին ռուսական ծովային ուժերի և սևծովյա առափնյա քաղաքների վրա հարձակվում է գերմանա-թուրքական նավատորմը, որը գլխավորում էր գերմանացի փոխ-ծովակալ Վիլհելմ Սուշոնը:

պի Հյուսիսային Կովկաս, սակայն թշնամու բանակը պարտվում է, պարտվում է ոչ այնքան ռուսական հակահարվածից, որքան սկսված դաժան սառնամանիքներից ու ձյան չափազանց կուտակումներից[1]:

Թուրքական պարտված բանակի որոշ մասը և մի քանի փաշաներ գերի են ընկնում, մի ստվար մասը ջարդվում ու թաղվում է ձյունապատ ձորերում, մի մասն էլ դիմում է փախուստի[2]:

Սարսափն անցնում է, մտքերը խաղաղվում են, բայց հայ ժողովուրդը նորից անլուր տառապանքների է ենթարկվում: Երկու բանակների տեղաշարժերից տակնուվրա է լինում Բայազետի, Ալաշկերտի և Բասենի շրջանների հայ բնակչությունը: Դեկտեմբերյան սառնամանիքները, քաղցը և այլ զրկանքներ իրենց հետ բազմաթիվ զոհեր են տանում:

Այստեղ կարևոր է արձանագրել հետևյալը: Այն միջոցին, երբ թուրքական բանակը կազմ ու պատրաստ սպասում էր դեպի Օլթի, Արդահան և Սարիղամիշ հարձակման անցնելու ազդանշանին, Անդրկովկասի ճակատին ծանոթանալու համար նոյեմբերի 26-ին Թիֆլիս է գալիս Նիկոլայ 2-րդ[3] ցարը:

Այդ միջոցին Թիֆլիսի Արամյան հիվանդանոցում բժշկվում էր հայ կամավորական գնդերից մեկի ղեկավար Դրոն, որը մի քանի օր առաջ Կավռե-Շամե բարձրունքում ծանր վերքեր էր ստացել թշնամու հետ ընդհարվելիս[4]: Նիկոլայ ցարը այցելելով

---

[1] Ա-Դոն ի նկատի ունի 1914 թ. դեկտեմբերի 9–ից մինչև 1915 թ. հունվարի 4 (5)-ը Սարիղամիշ քաղաքի շրջակայքում ընթացած ճակատամարտը, որի ընթացքում թուրքական III բանակը ծանր պարտություն է կրում:

[2] Թուրքական 90 հազարանոց բանակից ողջ են մնում միայն 12 հազարը:

[3] Նիկոլայ II Ռոմանով (1868–1918 թթ.), Ռուսական կայսրության վերջին կայսր (1894–1917 թթ.):

[4] Դրոն վիրավորվում է 1914 թ. հոկտեմբերի 30-ին Թափարիզի լեռնանցքի համար մղած մարտերից մեկի ժամանակ: Մարտի մասնակից, խորունժի Ֆ. Ելիսեևը գրում է. «Այդ ժամանակ վիրավորվեց Դրոն, որը համարվում էր բոլորից քաջը: Մենք նրան պատվով ուղարկեցինք Իգդիր՝ ապաքինվելու», տե՛ս Елисеев Ф. И., Казаки на Кавказском фронте 1914–1917. Записки полковника Кубанского казачьего войска в тринадцати брошюрах-тетрадях, Москва., 2001, с. 85.

Արամյան հիվանդանոցը, մոտենում է Դրոյի մահճակալին, սեղմում նրա ձեռքը, հարցնում առողջության մասին և շնորհակալություն հայտնելով՝ պարգևատրում Գեորգիևյան խաչով[1]:

1909 թվին դաշնակցական Դրոն, որը հետապնդումից փախել էր Թուրքիա, այսօր արժանանում էր Նիկոլայի անձնական մեծարանքին:

Օլթի-Արդահան-Սարիղամիշի ճակատամարտում թուրքական բանակի կրած պարտությունից հետո ժամանակավոր դադար եղավ: Սակայն գարունը վերսկսվեց ռուսական բանակի առաջխաղացումը ճակատի ամբողջ երկարությամբ, ըստ որում թուրքական բանակն այնպես էր կազմալուծվել, որ դիմադրությունը թուլացել էր:

Եվ մինչ ռուսական բանակը հետզհետե առաջ էր գնում, երիտթուրքերն անցել էին իրենց զազիր ծրագրի իրագործմանը, սկսել էին հայերի զանգվածային ջարդերը:

Այն շրջանը, որտեղից սկսվեց նախօրոք ծրագրված ջարդը, Վասպուրականն էր իր գավառներով: Միաժամանակ բոլոր գավառներում, համաձայն Պոլսից տրված հրահանգների, 14–15 տարեկանից վեր տղամարդկանց քշում էին բանտերն ու զորանոցները, ապա գիշերները տասնյակներով, հարյուրներով միմյանց կապած քշում էին ձորերը, հեղեղատները, գետափեներն ու մինչև վերջին մարդը գնդակահարում կամ սրախողող անում:

Սոսկալի նկարագրություններ մենք այստեղ չենք բերի, դրանք մանրամասն բերված են մեր «Մեծ դեպքերը Վասպուրականում» աշխատության մեջ, այսքանը կասենք միայն, որ տղամարդկանց մեծ մասը ոչնչացվեց:

---

[1] Կովկասյան բանակի շտաբի պետ, գեներալ Ն. Ն. Յուդենիչը ներկայացնում է ցարին Դրոյին, որպես խիզախ և խելացի հրամանատարի: Միապետի այն հարցին, թե «Դուք որտե՞ղ եք ստացել ձեր զինվորական կրթությունը», հետևել է պատասխանը. «Հեղափոխական գործի մեջ, Ձերդ մեծություն» և տեսնելով Նիկոլայ II-ը շփոթմունքը, շտապել է ավելացնել. «Մեր հեղափոխական գործը կատարվում էր Թուրքիայում», տե՛ս Նազարյան Ա. Ս., Հայկական զորամասերի կազմավորումը կովկասյան ճակատում (1914–1918 թվականներ), Երևան, 1999, էջ 44:

Վասպուրականը, որն ընդգրկում էր ավելի քան 18 գավառ, հայաբնակ նահանգներից ամենաբազմաքանակ, միաժամանակ պատմության մեջ խոշոր տեղ գրավող և մանավանդ պատմական հուշարձաններով հարուստ երկրամասն էր:

Եվ Վասպուրականի հայությունն ահա, բնաջնջվում էր, սակայն բնաջնջման օղակում՝ երկու կետերում միայն, հայ ժողովուրդը կանխատեսելով մոլեգնող ոճիրը, փարեց զենքին, փրկեց իրեն, փրկեց նաև շրջաններից փախած մարդկանց:

Դրանցից առաջինը Վան քաղաքն էր, որը բացի քաղաքի բնիկ ժողովրդից, կարողացել էր ընդունել իր մեջ բավականաչափ ժողովուրդ շրջակա գյուղերից:

Երկրորդը Շատախի գավառի Թաղ կոչվող կենտրոնավայրն էր, որը ևս պաշտպանվեց և բազմաթիվ փախստականներ փրկվեցին տեղացիների հետ միասին:

Այդ երկու տեղերը ապրիլի 4-ից[1] սկսած համեմատաբար աննշան զինապաշարով պայքարի մտան ոստիկանական, զինվորական ու համիդեական ուժերի հետ, տարան անհավասար, սակայն հերոսական պայքար ամբողջ մեկ ամիս, մինչև որ ռուսական բանակը մոտեցավ և թուրքական զորքերը, նրանց հետ նաև Վանի վալին[2], բռնեցին փախուստի ճանապարհը և Վանն ու Շատախը ահագին ժողովրդով փրկվեցին:

Վանի և Շատախի ամբողջ մեկ ամիս տևող հերոսական պայքարի մանրամասնությունները և ռուսական բանակի մուտքն ու ընդունելության նկարագիրն այստեղ չենք բերում, դրանք նույնպես բերված են մեր վերը հիշված աշխատության մեջ: Մենք այստեղ կբերենք միայն մի երկու վավերագրեր, վերցնելով մեր նույն աշխատությունից:

---

[1] Թաղի ինքնապաշտպանությունը սկսում է 1915 թ. ապրիլի 1-ին, իսկ Վանինը՝ ապրիլի 7-ին:
[2] Նահանգապետ:

Վան մուտք գործած ռուսական զորահրամանատար գեներալ Նիկոլաևը[1] 1915 թվի մայիսի 10-ի թվով զորաբանակի հրամանատարին ուղղեց հետևյալ հեռագիրը.

«10 մայիսի 1915 թ.
Վան»

Շնորհիվ զինված հայ ժողովրդի և ղեկավարությամբ ռուսահայ Արամի[2], Վանը մեկ ամիս պաշտպանվեց և երեք օր առաջ միայն հայերը գերակշռեցին ու տաճիկները սկսեցին նահանջել: Քաղաքն այրված է, ազատ են մնացել մի քանի հայաբնակ թաղեր և ռուսական հյուպատոսարանը: Քաղաքին մոտենալիս միջնաբերդի վրա տաճիկներից գրաված վեց թնդանոթներից տեղի ունեցավ ողջյունի թնդանոթաձգություն և հայերը հանձնեցին բերդի բանալիները[3]: Ժողովուրդը և Վանի պաշտպանները եպիսկոպոսի[4] ու հոգևորականության առաջնորդությամբ կազմակերպեցին հանդիսավոր ցույցեր, բանակին դիմավորեցին «Տեր, պահյա զկայսրն» երգելով: Ժողովուրդը և քաղաքի պաշտպան-

---

[1] Նիկոլաև Անդրեյ Միխայիլի (1858–1926 թթ.), գեներալ-մայոր, Անդրկասպյան կազակային հեծյալ բրիգադի (Բայազետի ջոկատ) հրամանատար, 1915 թ. մայիսի 5-ից մինչև հուլիսի 18-ը Վան քաղաքի կայազորի պետ:

[2] Մանուկյան Արամ (Հովհաննիսյան Սարգիս, 1879–1919 թթ.), ազատագրական շարժման և պետական նշանավոր գործիչ, ՀՅԴ անդամ: Վանի 1915 թ. ապրիլ-մայիս ամիսների ինքնապաշտպանության փաստացի ղեկավար, Վանի և ազատագրված գավառների ժամանակավոր կառավարիչ՝ նահանգապետ (1915 թ. մայիսի 7-հուլիսի 27): 1917 թ. վերջից Երևանի Հայոց ազգային խորհրդի փաստացի ղեկավար: 1918 թ. մայիսին Սարդարապատի հերոսամարտի կազմակերպիչներից: 1918 թ. հուլիսի 24-ից ՀՀ ներքին գործերի նախարար:

[3] Քաղաքը բանալիներ չուներ, սակայն գեներալ Ա. Մ. Նիկոլաևը ցանկանում էր անպայման ունենալ Վանի բանալիները, որպեսզի ուղարկեր բարձրագույն հրամանատարությանը: Արամի կարգադրությամբ, բերում են քաղաքի «բանալիները», տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 402, ցուցակ 2, գործ 11, թերթ 4:

[4] Ի նկատ ունի Վանի առաջնորդական փոխանորդ Եզնիկ վարդապետ Ներկարարյանին:

ները շղթա կազմած աղաղակում էին կեցցեներ և նետում էին ծաղիկներ»:

Ապա գեներալ Նիկոլաևի դիմումի հիման վրա կորպուսի շտաբի պետ գեներալ Օգանովսկին[1] ուղղեց հետևյալ հեռագիրը.

«Կորպուսի շտաբից՝ գեներալ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ
հեռագիր N 5452

Համաձայն Ձեր նշանակումի, հաստատում եմ Արամին Վանի ժամանակավոր նահանգապետ, հանձնելով նրան Վանի շրջակայքի կառավարությունը: Նա կազմելու է վարչություն միմիայն հայերից և հենվելու է հայ երկրապահների վրա: Հյուպատոս նշանակելու առթիվ հեռագրեցի բանակի հրամանատարին և Թավրիզի հյուպատոսին, որ ուղարկի ժամանակավոր ներկայացուցիչ:

Գեներալ Օգանովսկի»

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՆՈՒՄ ԵՎ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԵԾ ԳԱՂԹԸ

Համաձայն վերը բերված պաշտոնական հեռագրերի, Վանում՝ ղեկավարությամբ Արամ Մանուկյանի, կազմակերպվեց Հայկական կառավարություն[2], ձևավորվեց երկրապահ միլ-

[1] Օգանովսկի Պյոտր Իվանի (1859-?), գեներալ-լեյտենանտ, Կովկասյան IV բանակային կորպուսի հրամանատար:

[2] Մանրամասն տե՛ս Ա-Դօ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին, Երեւան, 1917, Ասրյան Ա. Ս., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2008, նույնի՝ Վանի նահանգապետության և ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության տեսակետները նահանգապետության տարածքում քրդերի վերաբնակեցման մասին, Բանբեր Հայաստանի ար-

ցիա[1], նշանակվեցին գավառապետներ և եռանդուն աշխատանք սկսվեց: Վերաշինվեցին վնասված տները, կառուցվեցին նորերն ու ստեղծվեց փոքրիկ շուկա:

Ռուսական բանակն առաջապահ ունենալով հայ կամավորական զորամասերը, առաջացել էր մինչև Վանի և Բիթլիսի նահանգների սահմանը հասնող Վանա լճի հարավ-արևմտյան խորշը թափվող Թուխ գետը, տեղանք, ուր երկու օր առաջ տեղի էր ունեցել ճակատամարտ և թուրքական զորքը պարտվելով դիմել էր փախուստի՝ ձգելով մի քանի թնդանոթ, ռազմամթերք ու բավական դիակներ:

Եվ թվում էր, որ նոր դեպքեր հնարավոր չեն:

Բայց կատարվեց միանգամայն անսպասելին:

Հուլիսի 15-ին Վանում գտնվող ռուսական զորամասի հրամանատարը հայտարարեց, որ ռուսական զորքերը նահանջում են և որ ժողովուրդը պետք է գաղթի. այս հայտարարությունը նետի պես շանթահարեց մի ամբողջ ամիս անհավասար, բայց հերոսաբար պայքարած ժողովրդին: Վանը թողնել առանց նույնիսկ մեկ կրակոցի, սոսկալի էր:

Եվ Վանի նոր ստեղծված հայ կառավարությունն ու երիտասարդությունը դիմեցին զորամասի հրամանատարին՝ առաջարկելով թողնել հայ կամավորական խմբերին, համապատասխան քանակի զենք ու զինամթերք, որ իրենք մնան ու Վանը պաշտպանեն:

Դիմումը մերժվեց, ռուսական նահանջող զորքի հետևից շարժվելու էին թուրքական զորքերը, առաջը ձգած խաժամուժ հորդաներ:

խիվների, Երևան, N 1–2, 2007, էջ 31–36, Արամ Մանուկյան. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Գ. Ավագյան, Մ. Ավետիսյան, առաջաբանի հեղինակ՝ Ա. Ասրյան. գլխավոր խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2009, էջ 63–271, Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), Երևան, 2010:

[1] Սահակյան Ռ., Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թ. մայիսի 8 – հուլիսի 17), Երևան, 2008:

Եվ հուլիսի 18-ին հրապարակվեց հայ կառավարության հրամանը. «Պատրաստել մի քանի օրվա պաշար և թողնել Վանը: Ճանապարհ դեպի ռուսական Հայաստան [Արևելյան Հայաստան]»:

Թե այդ հայտարարությունից հետո ինչ կատարվեց Վանում, նրա շրջակա գյուղերում ու մի քանի գավառներում, որոնցում մնացել էին մեծ մասամբ կանայք ու երեխաներ, ինչ տառապանք կրեց ժողովուրդը յոթ-ութ օր տևող ճանապարհին, ինչ քաղց ու ծարավ, ինչ հիվանդություններ տարավ և եղբայրական հսկա փոսեր լցրեց դիերով հուլիսյան այրվող տապերով հարուստ Արարատյան դաշտավայրում, ծանր է նորից կրկնելը, այդ բոլորի մասին ևս խոսվում է վերոհիշյալ մեր աշխատության մեջ[1]: Միայն այսքանը կասենք, որ ռուսական բանակի հրամանատարի կարգադրությամբ կազմակերպված Վանի հայ կառավարությունը գոյատևեց ընդամենը 70 օր: Վասպուրականի հարյուր հազարանոց ժողովրդի կեսի գերեզմանը դարձավ Արարատյան դաշտավայրը: Իսկ ռուսական նահանջող զորքը միայն 10 օր անց, հուլիսի վերջին նորից ետ գնաց ու գրավեց Վասպուրականը, Բիթլիսը[2], Մուշը[3], բայց արդեն առանց հայերի:

---

[1] Վանի նահանջի մասին ավելի մանրամասն տե՛ս Հարությունյան Ա. Հ., Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 2, 2002, էջ 46–58:

[2] Բիթլիսը ռուսները գրավել են 1916 թ. փետրվարի 18-ի լույս 19-ի գիշերը:

[3] Մուշը ռուսները գրավել են 1916 թ. փետրվարի 3-ին:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հրապարակ հանելով երեք տասնյակ[1] տարիներ առաջ գրի առնված այս փոքրիկ տեսությունը, անհրաժեշտ ենք համարում մի վայրկյան կանգ առնել այդ տեսության մեջ շոշափվող մի կետի վրա, որը շատ է զբաղեցրել հայ մտավոր շրջանակներին:

Այդ կետը ցարական դիվանագետ, արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկու 1897 թվի իր զեկուցման մեջ հայտարարված, ցինիկ հարցադրումն էր. «Մեզ հարկավոր է Հայաստանն, առանց հայերի»:

Բայց ինչ՞ու Հայաստանն առանց հայերի, ահա սա է էականը:

Թուրքիայի ասիական վեց նահանգների անվան հետ է կապված Հայկական հարցը, հարց, որն ունի իր պատմությունը դիվանագիտական աշխարհում և այդ հարցով հաճախ է զբաղվել դիվանագիտությունը: Եվ որովհետև այդ նահանգներում ապրում էին մեծ թվով հայեր, հետևապես այդ համեղ պատառն այնքան էլ հեշտ չէր կլանել, ուստի նախ պետք էր վերացնել հայ ժողովրդին՝ ահա ցարական դիվանագետի նպատակը, նպատակ, որը զուգակցվում էր սուլթան Համիդի հայաջինջ քաղաքականության հետ:

Եվ այդ երկու գիշատիչ պետական նպատակներն իրագործվեցին միաժամանակ:

1915 թվի կեսերին, երբ սուլթան Համիդի հավատարիմ հետևորդ երիտթուրքերի ծրագրով վեց նահանգների մեկուկես միլիոն հայությունը խողխողվում էր զանգվածային ջարդերում և քշվում էր Միջագետքի ավազուտները բնաջնջվելու, այդ նույն միջոցին Վասպուրականի հարյուր հազարից ավելի հայ ժողովուրդը, որը հերոսական դիմադրության շնորհիվ կարողացել էր

[1] Վերջաբանը գրվել է 1950 թ.:

իր գոյությունը փրկել Վան քաղաքում և Շատախի լեռներում ու ստեղծել էր կառավարական մարմին, ցարական բանակի հրամանատարի վերից թելադրված մեկ հրամանով տեղահան եղավ և քշվեց Արարատյան կիզիչ դաշտերում գերեզման գտնելու: Իսկ դրանից ընդամենը 10 օր անց, նույն բանակը, որը նահանջել էր հայ ժողովրդի հետ միասին, վերադարձավ և վերագրավեց Վասպուրականն առանց դիմադրության, նաև առանց հայերի:

Սա ցարական նախարարի նպատակադրման մեկ մասն էր, իսկ մյուս մասը կազմում էր՝ Թուրքիայի հայերի ծգած սահմանամերձ շրջաններում ռուս գաղթականներ բնակեցնելու, ավելի ճիշտ կազաչեստվոներ[1] ստեղծելու ծրագիրը:

Այս մասին շշուկներ տարածվեցին դեռևս Լոբանով-Ռոստովսկու վերը հիշված զեկուցման հետ միաժամանակ, բայց իրագործումը հետաձգվեց մինչև հարմար պահը գալը, պահը եկել էր, հայ ժողովուրդը քշվել էր իր բնօրրանից ընդմիշտ:

Մի վստահելի անձնավորություն՝ գյուղատնտես Ստեփան Կամսարականը[2], որն ավարտել էր Մոսկվայի Պետրովյան ակադեմիան և համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ Գանձակի նահանգում վարում էր նահանգական գյուղատնտեսի պատասխանատու պաշտոնը և Կովկասի փոխարքայի դիվանատան շրջանում ճանաչված էր որպես իր մասնագիտության մեջ լավատեղյակ ու իր գործունեությամբ օրինակելի հետազոտող, ինձ պատմեց հետևյալը. «1916 թվի սկզբներին փոխարքայի դիվանատնից հեռագրով ինձ կանչեցին Թիֆլիս: Փոխարքայությունում ինձ ընդունեց փոխարքայի դիվանատան հողային բաժանմունքի գործերի վարիչ Վ. Ա. Սոկոլովը, որի հետ մի շարք

---

[1] Կազակային բնակավայրեր:

[2] Կամսարական Ստեփան (1873–1955 թթ.), գյուղատնտես: ՀԽՍՀ հողագործության ժողովրդական կոմիսարի տեղակալ (1921): ՀԽՍՀ Պետպլանի գյուղատնտեսական սեկցիայի նախագահ (1924–1931 թթ.), Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտի դասախոս (1924–1931 թթ.), ՀԽՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտի գրադարանի վարիչ:

պաշտոնական հանդիպումների ընթացքում մեր միջև մտերմություն էր ստեղծվել, ինձ ասաց. «Ձեզ, պ. Կամսարական, կանչել ենք մի կարևոր հանձնարարության համար. փոխարքային[1] անհրաժեշտ է ունենալ Թուրքիայի մի քանի սահմանամերձ շրջանների՝ Բայազետի, Ալաշկերտի, Բասենի տնտեսական մանրամասն ուսումնասիրությունը: Այս աշխատանքի համար մենք կանգ ենք առել Ձեզ վրա, որպես ամենաձեռնահաս անձնավորության, կանչել ենք, որպեսզի ստանանք Ձեր համաձայնությունը և հոգանք Ձեր գործուղման կարիքները:

«Լսելով Սոկոլովի առաջարկը, պատասխանեցի. «Ինչպես Ձեզ էլ հայտնի է, ներկայումս այդ շրջաններում ժողովուրդ չի մնացել, հայերը գաղթել են սահմանից այս կողմը, իսկ քրդերը քաշվել են Մոսուլի կողմերը, բացի այդ, որպես պատերազմի դաշտ, շարունակ զորքերի տեղաշարժեր են կատարվում: Նման պայմաններում տնտեսական ուսումնասիրությունը հնարավոր չէ և եթե կատարվի էլ, այդ ուսումնասիրությունը ոչ մի արժեք ունենալ չի կարող:

«Իմ պատճառաբանությունը լսելով, այնուամենայնիվ Սոկոլովն սկսեց ինձ համոզել, որ ես համաձայնեմ հանձն առնել այդ աշխատանքը: Ես, մնալով իմ կարծիքին, բայց անհարմար համարելով մեկեն մերժել, հայտնեցի, որ կմտածեմ և վաղը կպատասխանեմ:

«Հաջորդ օրը ներկայանալով Սոկոլովին, հայտնեցի, որ հնարավոր չեմ գտնում լծվել այդ աշխատանքին: Թողնելով փոխարքայի դիվանատունը, դուրս գնացի ծանր սրտով, ըստ որում հարժեշտի պահին, իմ այն հարցումին, թե ադ ուսումնասիրությունն ի՞նչ նպատակի է ծառայելու, Սոկոլովը մտերմաբար ինձ հայտնեց, որ նախատեսված է հիշյալ շրջաններում ռուս գաղթականներ բնակեցնել»:

---

[1] Այդ ժամանակ փոխարքան էր Նիկոլայ Նիկոլայի Ռոմանովը (1915–1917 թթ.):

Ահա այս ծրագիրը գալիս էր 1890-ական թվականներից՝ հայտարարված Լոբանով-Ռոստովսկու բերանով: Սակայն այդ ծրագիրը իրականացա՞վ արդյոք:

Իհարկե ոչ. և ընդհակառակը ռոստովսկիների ծավալապաշտ քաղաքականությունը Ռուսաստանին հասցրեց անդունդի եզերքին, երկու հարյուր միլիոն ժողովրդին մատնեց քաղցի, սովը մեկեն ոտքի հանեց քաղցած ժողովրդին, մոլոգնեց Պետերբուրգը[1], 1917 թվի փետրվարին վերածվեց ալեկոծ տարերքի, բարձրացան հսկա բարիկադներ, և այդ բարիկադների տակ ընդմիշտ թաղվեց ցարիզմն իր գահակալով:

[1] 1914 թ. օգոստոսի 18-ին Ս. Պետերբուրգը վերանվել է Պետրոգրադ: 1924 թ. հունվարի 26-ից՝ Լենինգրադ: Իր նախկին անունը՝ Ս. Պետերբուրգ վերականգնել է 1991 թ. սեպտեմբերի 6-ին:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս Միրզա 74-76, 78, 79, 80, 82
Աբդուլ Համիդ II 96, 134, 135, 147
Աբովյան Խաչատուր 10, 11, 16, 21, 53, 55-66
Ադլերբերգ Վլադիմիր Ֆյոդորի 49
Ա-Դո, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Հովհաննես
Աթանասյան Աշոտ 6
Ալամդարյան վարդապետ 86, 89, 90
Ալեքսանդր I 73
Ալեքսանդր II 24
Ալեքսանդր III 24
Ալվարդ, հյուպատոս 98
Ահմեդ Ջեմալ փաշա 135
Աղա Մոհամեդ Շահ Ղաջար 74
Աղայան Ղազարոս 7
Ամիլախորի Իվան Գիվիի 122
Ամիրյան-Գևորգյան Խաչատուր 137
Աստվածատուր եպիսկոպոս 68
Արամ, տե՛ս Մանուկյան Արամ
Արղությաններ 70
Արղության Հովսեփ արքեպիսկոպոս 41, 44
Արղության Հովսեփ 137
Աֆրիկյանն՛եր 6
Բաբաջանով 118
Բախտամով 120
Բաբախանյան Առաքել 10
Բաբայան Վարոս 12
Բալուև 115
Բակունին 9
Բեդր-Նիսա խանում 92, 94
Բեհբությաններ 70
Բեհբության Դարչի 70, 71
Բեհբութով (Բեհբության) Վասիլի Օսիպի (Հովսեփի) 20, 46, 49
Բենկենդորֆ Քրիստափոր Կոնստանտինի 78, 85, 86
Բզնունյան Սիմեոն եպիսկոպոս 86
Բլավատսկի Նիկիֆոր Վասիլիի 59, 60
Բլուտով Դիմիտրի Նիկոլայի 89
Բոգուսլավսկի 115
Բրաժնիկով 26-28, 32, 95, 115
Գանին 50
Գասպարյան Ռուբեն 15
Գավաֆյան Արշակ 137
Գիրս Միխայիլ Նիկոլայի 136
Գոլիցին Գրիգորի Սերգեյի 108, 109, 123
Գոլովին Եվգենի Ալեքսանդրի 52
Գոլովին Ֆյոդոր Ալեքսեյի 36
Գրիգոր, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Գրիգոր

Գևորգ Ե 11
Դադիանի Ալեքսանդր 50, 51
Դեմինսկի 122
Դիբիչ-Զաբայկալսկի Իվան Իվանի 76, 83, 91
Դրո, տե՛ս Կանայան
Դրաստամատ
Եկատերինա II 41-43, 53
Երիցյան Ա. 46
Երմոլով Ալեքսեյ Պյոտրի 75, 76, 81
Եփրեմ, տե՛ս Եփրեմ Ա Զորագեղցի
Եփրեմ Ա Զորագեղցի 68, 69, 71, 85, 89, 90
Զավելևսկի 91
Զարդարյան Եգոր 31
Զաքարյաններ 41
Զաքարյան Գրիգոր արքեպիսկոպոս 85
Էմին Մկրտիչ 63
Էնվեր փաշա 134
Էրիստով, տե՛ս Էրիստով Գեորգի Եվսեյի
Էրիստով Գեորգի Եվսեյի 80
Էքսան խան 92, 94
Թալեաթ փաշա 134
Թաղիանոսյան Աղաջան 31
Թաղիանոսյան Սարո 31
Թևոսյան Եգոր 31
Թևումովներ 48
Իշխան, տե՛ս Արղության Հովսեփ
Իսրայել Օրի 16, 32-42, 95
Լազարյան 82
Լազարյան Հովհաննես 41, 44
Լազարյան Ղազար 82
Լալայան 118
Լենին Վ. 13
Լեո, տե՛ս Բաբախանյան Առաքել
Լեոպոլդ I 36, 40
Լիժին 133, 134
Լոբանով-Ռոստովսկի Ալեքսեյ Բորիսի 100, 146, 147, 149
Խանզադյան 6
Խեչո, տե՛ս Ամիրյան-Գևորգյան Խաչատուր
Խրիմյան Մկրտիչ (Խրիմյան Հայրիկ) 7, 8, 103, 106, 107
Խուդինյան Գ. 7
Ծատուրով 92-94
Կամսարական Ստեփան 147, 148
Կանչելի 115
Կղեմենս XI 35
Կրասովսկի Աֆանասի Իվանի 79, 82-85
Կուզմինսկի Ա. Մ., 121
Համազասպ, տե՛ս Սրվանձտյան Համազասպ
Համիդ, տե՛ս Աբդուլ Համիդ II
Հայրապետյան Հովհաննես 131
Հայրապետյան Միքայել 131
Հայրապետյան Նուբար 131
Հասան խան 79
Հովհան Վիլհելմ 33-35, 40, 42
Հովհաննես արքեպիսկոպոս, տե՛ս Հովհաննես Ը Կարբեցի

Հովհաննես Ը Կարբեցի 46-49, 89
Հուսեյին I 37, 38
Ղազար Փարպեցի 21
Ղաֆադարյան Կարո 3
Ղուկաս Ա Կարնեցի 43
Ճավճավաձե Ա. 17
Մաթևոսյան Հովսեփ վարդապետ 86, 90, 91
Մալյուժենկո 115
Մամեդբեկով 122
Մանուկյան Արամ 11, 13, 142, 143
Մարտիրոսով, տե՛ս Տեր-Մարտիրոսյան Հովհաննես
Մաևսկի Վ. Տ. 98, 99
Մելիք-Բեգլարյան Շամիր 51
Մելիք-Ղափլանյան Լևոն 31
Մեհրաբյան Սարգիս 137
Մենշիկով Ալեքսանդր Սերգեյի 73
Միխայիլ Ռոմանով 50
Միխայիլ Ֆյոդորովիչ, տե՛ս Միխայիլ Ռոմանով
Միերյան Բագրատ 27, 28
Միերյան Թովմաս 27
Մուհամեդ 23
Մուսա բեկ 97
Մուրադ 8
Մուրավյով, տե՛ս Մուրավյով-Կուրսկի Նիկոլայ Նիկոլայի
Մուրավյով-Կուրսկի Նիկոլայ Նիկոլայի 80
Յուդենիչ Ն. Ն. 140
Նալբանդյան Միքայել 5, 28
Նակաշիձե Միխայիլ Ալեքսանդրի 107, 115, 122, 123,
Ներսես, տե՛ս Ներսես Աշտարակեցի
Ներսես Աշտարակեցի 21, 53, 55, 59, 60, 64, 66-69, 71, 72, 75-79, 81-89, 94, 95
Նիկոլայ I 45-50, 52, 73, 77
Նիկոլայ II 139, 140
Նիկոլաև Անդրեյ Միխայիլի 142
Նևերովսկի 49
Շահ Աբաս 17, 53
Շահթախտինսկի 122
Շապոշնիկով Բ. Մ. 50
Շարապով Ս. Ֆ. 25
Շերեմետև Պավել 25
Շերեմետև Պյոտոր 25
Շմեռլիգ 115
Շոպեն Իվան Իվանի 17, 54
Շչերբատով Ա. Գ. 22
Շրամմ II Անդրեյ Անդրեյի 60
Չելիասով 115
Պանկրատև Նիկիտա Պյոտրի 92, 94
Պասկևիչ Իվան Ֆյոդորի 20, 50, 66, 78-92, 94
Պավլով Ն. Ա. 25
Պարզյան եպիսկոպոս 104
Պետրոս I Մեծ 35-39, 41, 42, 53, 95
Պետրոսյան Աղաջան 131
Պոբեդոնոսցև Կոնստանտին Պյոտրի 24
Պոտյոմկին Գրիգորի Ալեքսանդրի 42, 43
Պոտյոմկին Յակով Ալեքսեյի 43

Պռոշյան 21, 35
Ռոզեն Գրիգորի Վլադիմիրի 46, 47, 49, 50, 52
Ռոմանովներ 45
Սահակյան Ռուբեն 15
Սաֆրազ մելիք 34
Սերովբե վարդապետ 89
Սյոմին Օրեստ 118
Սոկոլով Վ. Ա. 147, 148
Սրվանձտյան Համազասպ 137
Սուլթան բեկ Նասիբ բեկ օղլի 31
Սուլթանով 122
Սուվորով Ալեքսանդր Վասիլիի 42
Վալտեր 58
Վարդան, տե՛ս Մեհրաբյան Սարգիս
Վիլյամս 97-99
Վիվերն 130
Վորոնցով-Դաշկով Իլարիոն Իվանի 123, 124
Տեր-Մարտիրոսյան Ադոլյա 15
Տեր-Մարտիրոսյան Գրիգոր 4
Տեր-Մարտիրոսյան Հովհաննես 3-14
Տեր-Մարտիրոսյան Սիրեկան 5
Տերոյան Վարազդատ 12
Տեր-Օհանյան Թովմաս 31
Տեր-Օհանյան Վարդան 31
Տիգրանյան Լևոն 5
Տվյորդի 26
Տրուբեցկոյ Պ. Ն. 25
Տուրկեստանով 5
Տուրչինով Պ. 61
Չսրուխչյան Մ. 107
Ռաֆֆի 5, 13
Ռենդլ 49
Ցիս 127
Փոթեյան 104
Քեռի, տե՛ս Գավաֆյան Արշակ
Օգանովսկի Պյոտր Իվանի 143
Օզանյան Անդրանիկ 137
Ֆրեյլիխ 130

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադանա 134
Ադրբեջան 14
Ազոխ 130
Ալաշկերտ 9, 18, 139, 148
Ալեքսանդրյան այգի 51
Ախսրան 8
Աղբակ 13
Աղստաֆա 7
Ամասիա, գավառ
Ամասիա, սանջակ, տե՛ս Ամասիա, գավառ
Ամերիկա, տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Ամերիկայի Միացյալ Նահանգներ 135
Ամստերդամ 37
Անգեղակոթ 34, 35
Անգլիա, տե՛ս Մեծ Բրիտանիա
Անդրկովկաս 25, 60, 74, 113, 114, 117, 123, 139
Անկարա 99
Աշտարակ 21, 53, 79, 82, 84, 106
Ապարան 79, 86
Ասիա 42
Աստրախան 37, 39, 40
Ավանց 13
Ավետարանոց 130
Ավստրիա 40
Ավստրո-Հունգարիա 135
Ատրպատական 7
Արաբիա 97
Արագի 94
Արարատյան աշխարհ, տե՛ս Հայաստան
Արարատյան դաշտ, տե՛ս Արարատյան դաշտավայր
Արարատյան բնաշխարհ, տե՛ս Արարատյան դաշտավայր
Արարատյան դաշտավայր 17, 21, 46, 53, 78, 145, 147
Արարատյան հովիտ, տե՛ս Արարատյան դաշտավայր
Արտաշատ 106
Արաքս 82
Արդաբիլ, տե՛ս Արդեբիլ
Արդահան 138, 139, 140
Արդեբիլ 80
Արճեշ գավառ 8
Արցախ 14, 41, 42, 73, 74
Արք 80
Արևելյան Հայաստան 145
Արևմտյան Հայաստան 3, 9-11, 13, 95
Բաղդադ 136
Բաքու 10, 14, 101, 114-118, 121, 122, 137
Բուսաբանական այգի 126
Գանձակ քաղաք 73-75, 106, 114, 117
Գանձակ նահանգ 9, 116, 117, 147
Գանձասար 34
Գավառ 4, 5, 17-19, 23, 28, 137
Գավրե-Շամե 139
Գարահիսար 99

Գեղարքունիք գավառ 17
Գերմանիա 33, 135, 136
Գիշի 130
Գյունե-Ճարտար 130, 131
Դանիա 36
Դատվան 137
Դարալագյազ 125
Դարդանել 136
Դեհկարհան 80
Դիլիջան 14
Դյուսելդորֆ 33, 35-37, 40
Դորպատ 55, 56
Եվրոպա 35, 36, 57, 97, 135
Երևան 5-10, 13, 14, 20-23, 25-33, 46, 48, 49, 54, 55, 57, 58, 60-63, 66, 68, 73-75, 79, 81-84, 89, 95, 104, 106, 108, 114, 116, 125, 137, 142
Երևան գավառ 125
Երևան խանություն 80
Երևան նահանգ 6, 11, 117
Բաղեշ նահանգ 144
Բաղեշ քաղաք 98, 145
Բայազետ 9, 18, 139, 148
Բաշ Ապարան 137
Բասեն 139, 148
Բաքու 10, 14, 101, 107, 114-118, 121, 122, 126, 137
Բաքաու նահանգ 117
Բարդուղեմիոս, տե՛ս Ս. Բարդուղիմեոս վանք
Բեռլին 101, 134
Բեսարաբիա 85, 86, 87
Բիթլիս, տե՛ս Բաղեշ
Բոբրույսկ 51
Բորչալու գավառ 126, 129
Բուլղարիա 135
Զանգեզուր 117, 125
Էջմիածին քաղաք 7, 12, 21, 34, 41, 46-48, 67, 68, 70, 73, 75, 78, 79, 82, 86, 89, 90, 103-107, 115, 116
Էջմիածին գավառ 125
Էրզրում, տե՛ս Կարին
Թազաքենդ 94
Թաղ 141
Թաղավարդ 130
Թաղլար 130
Թավրիզ 80, 82, 143
Թափարիզ լեռնանցք 139
Թեհրան 73, 80
Թեոդոսիա 138
Թիֆլիս քաղաք 7, 14, 41, 46, 48, 50, 55-58, 61-63, 68-70, 72-74, 78, 86, 108, 114, 117, 122, 124-130, 135, 136, 138, 139, 147
Թիֆլիս նահանգ 117
Թուխ 144
Թուրքիա, տե՛ս Օսմանյան կայսրություն
Թուրքմենչայ 81, 82
Իգդիր 106
Իտալիա 135
Լոնդոն 99, 100
Խաչեն 116
Խարկով 8, 26
Խարս 96
Խնուշինակ 130
Խոկ 94
Խոյ 13, 18, 80
Խորասան 15
Կաղզվան 18
Կապան 33
Կարին 9
Կարս 18
Կեսարիա 100

Կիլիկիա 134
Կյավռե-Շամե, տե՛ս Գավրե-Շամե
Կոմունարների այգի 109
Կոջորի կիրճ 108
Կոստանդնուպոլիս 33, 34, 96, 136, 140
Կովկաս 52, 59, 60, 73, 75, 76, 81, 92, 94, 113, 114, 117, 123, 124, 126, 133, 136, 147
Կովկասի փոխարքայություն 11
Կովկասյան լեռնաշղթա 87
Կոտայք մարզ 10
Կրետե 98
Հազորդի 130
Հաղպատ 71
Հայաստան 3, 11, 14, 34, 35, 41, 42, 44, 52, 53, 75, 100, 101, 137, 146
Հայաստանի Հանրապետություն 14
Հայկական մարզ 17, 18, 21, 53, 54
Հեռավոր Արևելք 101, 135
Հին Զուղա 7
Հյուսիսային Կովկաս 43, 138
Հռոմ 33, 35, 37
Հրազդան քաղաք 10
Հրազդան գետ 48, 107
Ղաբախ, տե՛ս Մադաթյան հրապարակ
Ղամարլու, տե՛ս Արտաշատ
Ղարաբաղ, տե՛ս Արցախ
Ղափան, տե՛ս Կապան
Ղրիմ 60
Ղուզե-Ճարտար 130
Ճապոնիա 135
Մադաթյան հրապարակ 51, 77
Մակեդոնիա 8
Մակու 18
Մաստարա 46
Մարաղա 80
Մարանդ 80
Մարզիֆուն, տե՛ս Մարզվան
Մարզվան 99, 100
Մեծ Բրիտանիա 97, 98
Մինսկ 51
Միջագետք 146
Միջերկրական ծով 136
Մշո դաշտ 96
Մոսկվա 5, 26, 36, 37-41, 63, 147
Մոսուլ 148
Մուկդեն 111
Մուղնի 70
Մուշ 9, 145
Յոզղաթ 100
Նախիջևան 82, 94, 116, 124, 125
Նախիջևան խանություն 80
Ներքին Ախտա, տե՛ս Հրազդան
Նիզովոյ 39
Նիշտադտ 36
Նոյբուրգ 33
Նովոչերկասկ 133
Նովոռոսիյսկ 138
Նոր Բայազետ, տե՛ս Գավառ
Նոր Նախիջևան 124
Նորաշեն 70
Շամախի 38, 39
Շատախ գավառ 141, 146
Շարուր 116, 125
Շեխեր 130

Շորագյալ 74
Շվեդիա 36, 38
Շուշի 73-76, 106, 116, 125, 132
Չինաստան 135
Պարսկական Հայաստան, տե՛ս Արևելյան Հայաստան
Պարսկաստան 13, 21, 22, 30, 33, 38, 39, 41, 53, 54, 72-74, 76, 82, 91, 94, 99, 132, 137
Պետերբուրգ, տե՛ս Ս. Պետերբուրգ
Պետրոգրադ, տե՛ս Ս. Պետերբուրգ
Պոլիս, տե՛ս Կոստանդնուպոլիս
Պոլտավա 39
Պորտ Արտուր 111
Պֆալց 33
Ջեբրայիլ 116
Ջիբրայիլ, տե՛ս Ջեբրայիլ
Ջիվանշիր 116
Ռեչ Պոսպոլիտա 36
Ռոստով 124
Ռուսական Բասեն
Ռուսաստան 9, 24, 36, 39, 41, 48, 51, 53, 70, 72, 73, 76, 80, 94, 98, 101, 111, 112, 113, 132, 135, 149
Ռուսիա, տե՛ս Ռուսաստան
Ս. Պետերբուրգ 5, 9, 10, 24, 26, 52, 54, 73, 100, 101, 121, 133, 149
Ս. Բարդուղիմեոս վանք 99
Սալմաստ 13, 18, 80
Սարգսաշեն 130
Սարդարապատ 47, 79, 142
Սարիղամիշ 138, 139, 140
Սաքսոնիա 36
Սեբաստիա 99, 100
Սիբիր 66
Սիսիան 34
Սպահան 38, 39
Սոս 130, 131
Սվազ, տե՛ս Սեբաստիա
Սազի վիլայեթ, տե՛ս Սեբաստիա
Սուրմալու 49, 116
Սև ծով 138
Սևանա լիճ 17
Վան 9, 11, 13, 96-99, 141, 142, 144-146
Վան նահանգ 8, 12
Վանա լիճ 144
Վանի վիլայեթ, տե՛ս Վանի նահանգ
Վասպուրական 12, 96, 97, 140, 141, 145, 146
Վարանդա 116, 130
Վիեննա 35, 101
Վրաստան 68, 69, 70, 86, 90
Տաճկական Բայազետ 18
Տաճկական Բասեն 19
Տող 130
Տումի 130
Ցուսիմա 112
Ուրմիա 80
Փամբակ 74
Փարաքար 105
Փայաջուկ 13
Փարպի 21
Փոքր Ասիա 11
Քանաքեռ 21, 53
Քիշինև 64, 87, 94
Քյավառ, տե՛ս Գավառ
Օդեսա 138
Օլթի 138, 139, 140

Օշական 19
Օսմանյան կայսրություն
40, 41, 53, 54, 65, 91, 95,
99, 100, 132, 134, 136, 138,
140, 147, 148
Օրդուբադ 17, 18,
Ֆրանսիա 33, 135

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան..... 3

Երկու խոսք 16

Նոր-Բայազետը 1880-ական թվականներին 17

Նոր աշխարհ, տպավորություններ Երևանի արտաքին և ներքին կյանքից 21

Դեպքերը Երևանում 1880-ական թվականներին..... 24

Հետաքրքիր հայացք հայկական հարցի ծագման ընթացքի մասին. Իսրայել Օրին և Պետրոս Մեծը 32

Հովսեփ արքեպիսկոպոս Արղության և Եկատերինա II Հովհաննես Հովակիմի Լազարյան 41

Նիկոլայ I-ը 45

Նոր ուղղություն Հայկական հարցի նկատմամբ 53

Խաչատուր Աբովյանը և դպրոցական համակարգը 55

Ներսես Աշտարակեցին և Կովկասի կառավարչապետ Պասկևիչը 66

1985–1896 թվականների հայկական ջարդերը Թուրքիայում և Անգլիայի ու ցարական Ռուսաստանի բռնած դիրքը. Լոբանով-Ռոստովսկի 95

Դեպքերը 1898 և 1903 թվականներին, հայոց դպրոցների փակումը, եկեղեցական կալվածքների գրավումը և Երևանյան ցույցը 101

Ռուս-ճապոնական պատերազմը, նրա ընթացքը ու հետևանքները 111

Հայ-թուրքական ընդհարումները 112

Կովկասի նոր փոխարքա Վորոնցով-Դաշկովը, հայոց դպրոցների բացելն ու եկեղեցական կալվածքների վերադարձնելը 124

Համաշխարհային Առաջին պատերազմը, Վորոնցով-Դաշկովի խոստումները, հայ կամավորական գնդերն ու բնաջնջումը Արևմտյան Հայաստանում 135

Հայկական կառավարությունը Վանում և Վասպուրականի մեծ գաղթը 143

Վերջաբան 146

Անձնանուններ ցանկ 150

Տեղանուններ ցանկ 154

Ա-Դո
(Հովհաննես Տեր-Մարտիրոսյան)

ՌՈՒՍԱԿԱՆ ՑԱՐԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան
Համակարգչային շարվածքը՝ Ռուբեն Գասպարյան,
Ռուբեն Սահակյան

Ստորագրված է տպագրության 21.05.2013 թ.:
Տպաքանակը՝ 120 օրինակ:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, просп. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshall Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[20000 դ.]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0269339

A 98927